Հ. Գևորգյանը համոզված է, որ «Հայ փիլիսոփայությունը, լինելով հայ մշակույթի բաղկացուցիչ մասը, միաժամանակ, հարկավ, փիլիսոփայության ընդհանուր պատմության եզակի երևույթներից մեկն է և, ուրեմն, պետք է դիտարկվի նրա մեթոդաբանական ընդհանուր սկզբունքների տեսանկյունից» [20]: Ըստ ակադեմիկոսի, փիլիսոփայական գիտելիքի դեպքում (ի տարբերություն գիտական ուսմունքների և գիտատեխնիկական նվաճումների) դժվարությունն այն է, թե որքանով կարող են Արևմուտքի «պատմամշակութային միջավայրում հանդես եկած փիլիսոփայական գաղափարներն ու տեսությունները ընկալվել, ըմբռնվել ու առավել ևս ադապտացվել մեկ ուրիշ, տվյալ դեպքում՝ հայկական, պատմամշակութային իրողության մեջ» [21]: Այդ դժվարությունը սակայն, ըստ Հ.Գևորգյանի, հայկական մշակույթի և մասնավորապես՝ փիլիսոփայական մտքի համար, հաղթահարելի է,

քանի որ «նրան հատուկ է եղել, պատմականորեն, կողմնորոշումը ընդհանուր առմամբ դեպի հունական, հելլենիստական, միջերկրածովյան և ապա, Նոր ու Նորագույն ժամանակներում, դեպի եվրոպական մշակույթը» [22]:

Կոնկրետացնելով այս ելակետային հիմնադրույթը միջնադարյան մշակույթի և տեսական մտքի պատմության նկատմամբ, Հ. Գևորգյանը առանձնացնում է մի շարք համընդհանուր մեթոդաբանական բնութագրիչներ, ինչպիսիք են՝ *ավանդապահությունը* (ավանդույթի պահպանում և վերարտադրում յուրաքանչյուր նոր սերնդի համար), *հեղինակագործությունը* (հեղինակությունների մոթեթին քաջատեղյակությունը և տեղին հիշատակումը ոչ միայն արժանիք էր համարվում, այլև անհրաժեշտություն), *կոմպիլյատիվությունը* (մեծաթիվ տարբեր տեսական աղբյուրների օգտագործումը և դրանով իսկ սեփական փաստարկման համակարգն ամրացնելը), *տիպական կադապրաների օգտագործումը* (փաստերի նկարագրման և գաղափարների ներկայացման կայուն նմուշների կրկնությունը երկից երկ) և այլն, որոնք իրենց վառ դրսևորումներն ունեն նաև հայ միջնադարյան փիլիսոփայության մեջ: Նա բերում է իր այս թեզը հիմնավորող բազմաթիվ օրինակներ հայ միջնադարյան փիլիսոփայական երկերից և հանգում շատ կարևոր հայեցակարգային եզրակացության. «Պատմական բոլոր դարաշրջաններում հայ մշակույթը կարող գտնվեց, առնչվելով ժամանակի առաջավոր քաղաքակրթություններին, իր ներքին հնարավորությունների ծավալումով ստեղծել դրանց համարժեք հոգևոր մշակույթ և հավասար երկխոսության մեջ մտնել դրանց հետ»: Հայ փիլիսոփան ճշգրտում է, որ «գարգացած ազգային մշակույթ» երևույթը պատմականորեն նշանակում է, որ տվյալ մշակույթում առկա են այնպիսի ներքին կարողականություններ, որոնք կարող են ծավալվել այդ դարաշրջանի քաղաքակրթության մշակութային ամբողջ տարածության մեջ: Հայ մշակույթի մեջ այդպիսի ակնառու օրինակներ է Գևորգյանը համարում «ուշ

անտիկ շրջանի և վաղ միջնադարի հայ հելլենիստական մշակույթը, մեր Ոսկեդարը, Կիլիկյան Հայաստանի մշակույթը միջերկրածովյան քաղաքակրթության հենքի վրա, XIX–XX դդ. մեր եվրոպականացած մշակույթը»: Ըստ այդմ, հայ փիլիսոփայության պատմության մասնագետի հետազոտական հիմնական խնդիրը պետք է լինի ոչ թե յուրաքանչյուր դարաշրջանի համար «համաշխարհային մասշտաբի» հայ մտածող գտնելը, այլ «նկարագրել քաղաքակրթության տվյալ դարաշրջանի... մակարդակին գտնվող ուսմունքները հայ փիլիսոփայական գրականության մեջ, առանձնացնել այն մտածողներին, որոնց երկասիրությունները խտացրել են ժամանակի գաղափարները ու գիտելիքների հանրագումարը և ներգծվում են ժամանակի հիմնական փիլիսոփայական ուղղությունների ու դպրոցների մեջ» [23]: Իր այս ելակետային հիմնադրույթները՝ ծավալուն և առավել հանգամանակից փաստարկմամբ, Հ. Գևորգյանը ձևակերպում է որպես ազգի, ազգային մշակույթի և պատմության վերաբերյալ կուռ, ամբողջական հայեցակարգ՝ մշակույթի և պատմության փիլիսոփայությանը նվիրված իր հիմնարար աշխատություններում²:

² Այսպես, «Ազգային մշակույթը՝ պատմության փիլիսոփայության տեսանկյունից» (Տե՛ս *Геворкян Г.А. Национальная культура с точки зрения философии истории*. Ер., 1992) և «Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ» (Տե՛ս *Գևորգյան Հ.Ա. Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ*. հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Եր., 1997) աշխատություններում ժամանակակից մշակութաբանական և պատմափիլիսոփայական ուսմունքների քննադատական վերաիմաստավորման լույսի ներքո, ելնելով պատմամշակութային երևույթների անկրկնելիության և եզակիության մեթոդաբանական սկզբունքից՝ նա սահմանում և տարբերակում է ազգային ինքնությունն ու ազգային մշակույթը՝ էթնիկական ինքնությունից և էթնիկ (ազգագրական) մշակույթից, այնուհետև առանձնացնում է այն ելակետային հասկացությունները (մասնավորապես՝ մշակույթի «դիախրոնիկ» և «սինխրոնիկ ամբողջականության» կատեգորիաները), որոնցով ընդհանրապես բնութագրվում են ազգային մշակույթները, բացահայտում է մշակույթների փոխներգործության և փոխազդեցության մեխանիզմները, ինչպես նաև մատնանշում ժողովուրդների սոցիալական վարքի և հասարակական գիտակցության մշակութային բաղադրիչները:

Իր փիլիսոփայապատմական հետազոտությունների մեթոդաբանական հայեցակարգում Կառլեն Միրումյանը նախ հանգամանալից վերլուծում է մարքս-լենինյան մեթոդաբանության ինչպես թերությունները, այնպես էլ առավելությունները: Նա համարում է, որ «Բազմաթիվ մեքենայությունների, գաղափարախոսական կանխադրություններին ենթարկվելու հետևանքով բուն Մարքսից «մարքսիստական» ուսմունքում այնքան էլ շատ բան չի մնացել: Այդ իմաստով դեռ լիովին բացահայտված չեն մարքսիզմի իրական տեղը փիլիսոփայության պատմության մեջ և նրա, որպես մեթոդաբանության, գիտական և պատմական նշանակությունը» [24]: Հետագա աշխատություններում, անդրադառնալով այդ խնդրին առավել հանգամանորեն, Կ. Միրումյանը մարդկային մտքի պատմության մեջ մարքստական տեսության դերն ու նշանակությունը տեսնում է ոչ թե նրա «համապարփակության և բացարձակության, միակ ճշմարիտ գիտական ուսմունք լինելու» մեջ, այլ արժևորում է «հասարակության բնապատմական զարգացման, պատմական զարգացման իմացության մեջ տնտեսական հարաբերությունների կարևորման և դրանց առանձնահատուկ տեղ հատկացնելու» վերաբերյալ մարքսիստական սկզբունքը [25]: Բոլոր դեպքերում, կարծում է հայ փիլիսոփան, մարքսիստական, ինչպես և մյուս արևմտյան փիլիսոփայական համակարգերը «չեն կարող մեթոդաբանության դեր ստանձնել հայ ժողովրդի պատմության և ազգային մշակույթի ուսումնասիրության ոլորտում, բայց ոչ դրանց տեսականորեն չփնտրված կամ հակագիտական լինելու պատճառով», այլ որովհետև ցանկացած մեթոդաբանության «մեխանիկական ընդօրինակումը կամ կոսմետիկ «վերանորոգումը»» այն կիրառելի չի դարձնում ազգային մշակույթի և տեսական մտքի պատմության նկատմամբ. մեթոդաբանական որոնումները պետք է ընթանան սեփական մեթոդաբանական հիմքերի մշակման ուղղությամբ [26]:

Բերելով մի շարք փաստարկներ «արևմտյան գիտնականների և փիլիսոփաների կողմից մշակված» փիլիսոփայության և գիտության պատմությանը վերաբերող «բազմաթիվ մեթոդաբանական հայեցակետերից» որևէ մեկի ընտրության հիմնադրույթի դեմ՝ Կ. Միրումյանը համարում է, որ «յուրաքանչյուր ազգի մշակույթի պատմություն պահանջում է սեփական տեսական-մեթոդաբանական հիմքերի մշակում»։ Միրումյանի ելակետային դիրքորոշումն այն է, որ «մեթոդաբանական սկզբունքները և տեսությունները պետք է բխեցվեն իրական պատմամշակութային գործընթացի կոնկրետ վերլուծություններից, այս կամ այն տեսական մակարդակի վրա արտացոլեն այդ գործընթացի էությունն ու ներքին օրինաչափությունները»։ Կ. Միրումյանը, սակայն, կարևոր ճշգրտում է կատարում, որ նշված մոտեցման դեպքում արդեն իսկ գոյություն ունեցող մեթոդաբանական տեսությունները ոչ միայն չեն բացառվում, այլ ենթադրվում են՝ «դրանք անընդհատ ստուգելով և ճշգրտելով կոնկրետ պատմական հետազոտությունների ընթացքում» [27]։ Ի հայտ բերելով խորհրդային ժամանակաշրջանում իրականացված փիլիսոփայապատմական հետազոտությունների մի շարք թերություններ՝ Կ. Միրումյանը հանգում է իր հաջորդ կարևոր մեթոդաբանական սկզբունքին. «Գիտության և փիլիսոփայության պատմության գիտական վերլուծությունը պահանջում է համալիր, համակարգված մոտեցում, որի միջուկը գիտափիլիսոփայական գիտելիքի և հասարակության զարգացման հարաբերակցության խնդիրն է»։ Այսինքն, իր միտքը ճշգրտում է Միրումյանը, հումանիտար գիտելիքի զարգացման գործընթացը հարկ է դիտարկել որպես միմյանց փոխալայմանավորող ներքին (գիտելիքի տվյալ ոլորտին ներհատուկ ճանաչողական գործընթացներ) և արտաքին (տվյալ ժամանակաշրջանին բնորոշ սոցիալ-մշակութային գործոններ) կողմերի ամբողջություն [28]։

Մեթոդաբանական հիմնախնդիրներին նվիրված մենագրական ժողովածուի երկրորդ պրակտում Կ. Միրումյանը կոնկրետացնում է իր դատողությունները հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության և շարադրանքի ելակետային սկզբունքի հարցի շուրջ և հանգում «ազգային կեցության» հիմնարար մեթոդաբանական հասկացությանը: Տարբերակելով «հասարակական կեցություն» և «ազգային կեցություն» հասկացությունները՝ Միրումյանը կարծում է, որ «հասարակություն հասկացությունն առնչվում է պետություն հասկացությանը» և այն ենթադրում է «պետական-քաղաքական կառույցների, իրավական նորմերի համակարգերի առկայություն, որոնցով կարգավորվում են հասարակական հարաբերությունները պետության ներսում»: Սակայն իրավիճակը փոխվում է, երբ որևէ ժողովուրդ ներառվում է մի այլ պետության կազմի մեջ և ստիպված է ենթարկվել այնտեղ գործող իրավաքաղաքական կարգավորումներին: Բանն այն է, որ երկրի ռազմաքաղաքական նվաճումը անմիջապես չի հանգեցնում տվյալ հանրության մեջ ավանդաբար ձևավորված հարաբերությունների բոլոր ձևերի ոչնչացմանը, և նման դեպքում, ըստ հայ փիլիսոփա-պատմաբանի, «ճիշտ կլինի խոսել ոչ թե հասարակության կամ սոցիալական հանրության, այլ ազգի և ազգային հանրության մասին» [29]:

Հիմնվելով առկա սկզբնաղբյուրների և պատմական ուսումնասիրությունների պատմական-փիլիսոփայական վերլուծության վրա՝ Կ. Միրումյանը հանգում է «ազգային կեցության» ելակետային հասկացությանը. «Ազգային կեցությունը նյութական և հոգևոր գոյացումների ամբողջությունն է, որոնք կազմում են ազգի գոյատևման և գործառնության հիմքը: Նյութական գոյացումների տակ հասկացվում են տնտեսական, հարկային հարաբերությունները, ռազմաքաղաքական իրավիճակը և այլն, իսկ հոգևորի՝ ազգի հոգևոր-մշակութային գործունեության նյութականացված ձևերը՝

ուսումնակրթական և դաստիարակչական համակարգերը, գիտա-մշակութային և ուսումնական կենտրոնները, ազգային ավանդույթներն ու սովորույթները, ազգի գոյապահպանության առումով կարևոր պատմական իրադարձությունների ընկալման և արտահայտման գիտակցական ձևերը, որոնք ժամանակի ընթացքում ձեռք են բերել գոյաբանական կարգավիճակ և նշանակալիություն» [30]: Ինչ վերաբերում է «ազգային գիտակցություն» հասկացությանը, ապա այն Կ. Միրումյանը համարում է «ազգային կեցության արտացոլումը»:

Կ. Միրումյանը ցույց է տալիս, որ «իր պատմության առանձին դարաշրջաններում Հայաստանը կենտրոնացված պետական-քաղաքական իշխանությամբ հզոր պետություն է եղել՝ Այրարատյան թագավորություն, Արտաշիսյանների, Արշակունիների, Բագրատունիների հարստություններ, Կիլիկիայի հայոց թագավորություն և այլն: Ակնհայտ է, որ այս դեպքերում հայ հասարակության մասին մենք կարող ենք խոսել սոցիոլոգիական առումով: Բացի այդ, հայտնի է, որ գտնվելով Հռոմի, Բյուզանդիայի, Պարսկաստանի, Արաբական խալիֆայության և այլոց տիրապետության տակ, Հայաստանի տարբեր մասեր հաճախ պահպանում կամ ձեռք էին բերում պետականության տարրեր, ներազգային և մշակութային կյանքի կազմակերպման ոլորտում որոշակի ինքնություն, սակայն այս դեպքում, հասկանալի է, արդեն դժվար էր միանշանակորեն խոսել հայ հասարակության մասին վերը նշված իմաստով»: Ուստի, ըստ Միրումյանի հայեցակարգի, եթե կենտրոնացված պետականության առկայության դեպքում «խնդիրն ու գերիշխող գաղափարն ազգային պետականության, պետական ամբողջականության պահպանումն էր», ապա դրա բացակայության պարագայում որպես գերիշխող գաղափար «հանդես էր գալիս ազգային ինքնապաշտպանության, ազգային միասնության խնդիրը՝ որպես

ազգային պետականության վերականգնման երաշխիք և անհրաժեշտ պայման» [31]:

Հարկ է նշել, որ հայ իմաստասիրական մտքի պատմության մեթոդաբանական խնդիրների շուրջ քննարկումների շրջանակում ծագած իր դիտարկումները Կ. Միրումյանը ամբողջացրեց և բազմակողմանի փաստարկված ձևով ներկայացրեց իր «Մշակութային ինքնությունը ազգային կեցության կոնտեքստում. Հայաստանում մշակույթի քաղաքական կոնցեպցիայի ձևավորման շուրջը» հայեցակարգային բնույթի աշխատության մեջ: Հետաքրքրական է, որ զուտ մեթոդաբանականից բացի՝ հայ փիլիսոփան աշխատության եզրակացության մեջ կարևորում է նաև այն, որ «Կատարված կշռադատություններն ու եզրահանգումներն ունեն ոչ միայն պատմական արժեք, դրանք հաշվի առնելը կարևոր է ոչ միայն հայ ժողովրդի պատմական անցյալի լուսաբանման համար, այն կենդանի դաս է բոլոր հաջորդ սերունդների համար, այդ թվում՝ մեր սերնդի համար: *Մի բան ակնհայտ է. հարյուրամյակներ շարունակ հայ եկեղեցու և մշակույթի գործիչները փաստացի հանդես էին գալիս նաև որպես քաղաքական գործիչներ, որպես ազգային քաղաքական ծրագրի կրողներ, որոնք ձգտում էին իրականացնել, կյանքի կոչել ծրագրային գաղափարներ՝ նպաստելով մշակութային, իսկ դրա միջոցով՝ նաև հոգևոր և մտավոր, քաղաքական ինքնության պահպանմանը:* (ընդգծումը իմն է՝ Ա.Մ.) Դա նպատակ էր, որին ուղղված էին հոգևոր մշակութային բոլոր ոլորտները՝ գիտությունը և փիլիսոփայությունը, գրականությունը և արվեստը, պատմագրությունը և ճարտասանությունը, դպրոցը և կրթությունը և այլն» [32]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության և շարադրման ընդհանուր՝ ելակետային կողմնորոշիչներին վերաբերող ներ-

կայացված հայեցակարգերը, հիմնված լինելով հայոց պատմության և հոգևոր մշակույթի իրողությունների, ինչպես նաև՝ տեսական որոշակի սկզբունքների (համակարգային մոտեցում, ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության դիալեկտիկական սկզբունք, պատմականության մեթոդ և այլն) վրա, համոզիչ են և բավարար չափով փաստարկված են հեղինակների կողմից: Ս. Արևշատյանի, Հ. Գևորգյանի և Կ. Միրումյանի առաջ քաշած ելակետային մեթոդաբանական հայեցակարգերն ամեննին չեն բացառում միմյանց, մեթոդաբանական պլյուրալիզմի սկզբունքի հիման վրա փոխլրացնում են իրար և հնարավորություն են ընձեռում ուսումնասիրելու փիլիսոփայապատմական երևույթներն ու հիմնախնդիրները տարբեր դիտանկյուններից: Նշված մեթոդաբանական հայեցակարգերի և մասնավոր հետազոտական մեթոդների համատեղ կիրառումը տեսականորեն հնարավորություն է ընձեռում ապահովելու ազգային մշակույթի և փիլիսոփայապատմական երևույթների ուսումնասիրությունների օբյեկտիվությունը, բազմակողմանիությունն ու արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Միրումյան Կ.Ս.*, Փիլիսոփայապատմական հետազոտությունների մեթոդաբանական խնդիրների շուրջը // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում. հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցեր, պրակ 1, Եր., 1992, էջ 54:
2. *Արևշատյան Ս., Միրումյան Կ.*, Փիլիսոփայա-պատմական հետազոտությունների մեթոդաբանական հիմնավորման շուրջ // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 2, Եր., 1995, էջ 13:
3. Տե՛ս՝ *Արևշատյան Ս.Ս., Միրումյան Կ.Ս.*, Հայոց փիլիսոփայության պատմություն. հին շրջան և վաղ միջնադար: ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ: Եր., 2007:
4. Տե՛ս՝ *Мирумян К.А.* Антология армянской педагогической мысли: с древнейших времен до 18 века. Ер., 2019.
5. Տե՛ս՝ *Мирумян К.А.* Армянская политическая мысль: формирование и этапы развития. Ер., 2021.

6. Տե՛ս՝ *Միրումյան Կ.Ա.*, Պավլիկյան շարժումը ազգային կեցության համատեքստում // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 2, Եր., 1995, էջ 49–72:
7. Տե՛ս՝ *Միրումյան Ռ.Ա.*, Ստ. Նազարյանի պատմափիլիսոփայության ուսումնասիրման մեթոդաբանական սկզբունքների մասին // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 4, Ե., 2000. էջ 103–117:
8. *Սարվազյան Լ.Ս.*, Ազգային կրթության և դաստիարակության սահմանադրական կանոնակարգման հիմնախնդիրը // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 5, Եր., 2003, էջ 158–179:
9. Տե՛ս՝ *Մինասյան Ա.Ա.*, Հավատի և բանականության «ճշմարտությունների» հարաբերակցությունը Հովհան Ռոտունեցու աշխարհայացքում // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 5, Եր., 2003, էջ 68–79:
10. Տե՛ս՝ *Միրումյան Կ.Ա.*, «Ազգային պատմության մեթոդաբանություն» հասկացության կարգավիճակի մասին // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 3, Եր., 1998, էջ 36:
11. Տե՛ս՝ *Արևշատյան Ս.Ս.*, Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 1, էջ 4:
12. Տե՛ս՝ նույն տեղում, էջ 4–9:
13. Տե՛ս՝ նույն տեղում, էջ 9–12:
14. Տե՛ս՝ *Аревшатян С.С.* Формирование философской науки в древней Армении (V–VI вв.). Ер., 1973.
15. Տե՛ս *Геворкян Г.А.* Национальная культура с точки зрения философии истории. Е., 1992.
16. Տե՛ս *Мирумян К.А.* Культурная самобытность в контексте национального бытия: к формированию политической концепции культуры в Армении. Ер., 1994.
17. Տե՛ս *Միրումյան Կ.Ա.*, Ազգային մտքի հետազոտության մեթոդաբանական հարցերի շուրջ // «Վէմ» համահայկական հանդես, թիվ 3 (35) հուլիս–սեպտեմբեր, 2011, էջ 13–33:
18. Տե՛ս *Գևորգյան Հ.Ա.*, Փիլիսոփայություն. պատմություն. մշակույթ: Ե., 2005:
19. Տե՛ս՝ *Геворкян Г.А.* Философия. Наука. Культура. Ер., 2010.
20. *Գևորգյան Հ.Ա.*, Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 1, էջ 24:

21. Տե՛ս՝ *Գևորգյան Հ.*, Ժամանակակից արևմտյան փիլիսոփայությունը և նրա հնարավոր ազդեցությունը հայ փիլիսոփայության զարգացման վրա // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 3, էջ 4:
22. Նույն տեղում, էջ 5:
23. Տե՛ս՝ *Գևորգյան Հ.Ա.*, Հայ փիլիսոփայության պատմության մշակութաբանական տեսանկյունները, էջ 28–38:
24. *Միրումյան Կ.Ա.*, Փիլիսոփայապատմական հետազոտությունների մեթոդաբանական խնդիրների շուրջը, էջ 49:
25. Տե՛ս՝ *Միրումյան Կ.Ա.*, «Ազգային պատմության մեթոդաբանություն» հասկացության կարգավիճակի մասին // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 3, էջ 29–30:
26. Տե՛ս՝ նույն տեղում, էջ 31–32:
27. Տե՛ս՝ *Միրումյան Կ.Ա.*, Փիլիսոփայապատմական հետազոտությունների մեթոդաբանական խնդիրների շուրջը, էջ. 52–53:
28. Տե՛ս՝ նույն տեղում, էջ. 58–59:
29. Տե՛ս՝ *Միրումյան Կ.Ա.*, Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին (հարցադրման կարգով) // Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ 2, Եր., 1995, էջ. 29–31:
30. Նույն տեղում, էջ 38:
31. Տե՛ս *Միրումյան Կ.Ա.*, Ազգային մտքի ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերի շուրջ // Վէմ, թիվ 3 (35), հուլիս-սեպտեմբեր, Եր., 2011, էջ. 25–27:
32. *Мирумян К.А.* Культурная самобытность в контексте национального бытия: к формированию политической концепции культуры в Армении, Ер. С. 102.

**РАЗРАБОТКА НОВОЙ МЕТОДОЛОГИИ ИЗУЧЕНИЯ
АРМЯНСКОЙ ФИЛОСОФСКОЙ МЫСЛИ
(ПОСЛЕ 90-х ГОДОВ XX ВЕКА)**

А.А. Минасян

*Начальник Центра исследований военно-гуманитарных наук
НИУО МО РА*

Кандидат философских наук, доцент

АННОТАЦИЯ

В данной статье исследуется процесс формирования новой методологии изучения истории армянской философской мысли после 1990-х годов. После распада Советского Союза марксистско-ленинская философия, как теоретико-философская основа коммунистической идеологии, утратила свою методологическую применимость для гуманитарных наук, а новые теоретические принципы и методология еще не были разработаны. В недавно приобретшей независимость Республике Армения также образовался своеобразный «идеологический вакуум», и в этих условиях в Институте философии и права НАН РА под руководством К. Мирумяна был инициирован процесс разработки новых методологических подходов к изучению истории армянской философии. Методологические принципы изучения гуманитарных наук важны также потому, что они имеют существенное значение с точки зрения выявления основ национальной идентичности. В исследовании анализируются методологические подходы, представленные в выпусках сборника «Армянская философия в системе духовной культуры», опубликованных в 1992–2003 гг., которые классифицируются по трем основным группам: общие методологические принципы, частные методы и практические применения общих и частных методов. В результате исследования выясняется, что методологические концепции, предложенные С. Аревшатыаном, Г. Геворкяном и К. Мирумяном, взаимно дополняют друг друга и позволяют изучать философско-исторические явления и проблемы с разных точек зрения. Автор статьи приходит к выводу, что комбинированное применение указанных методологических концептуальных принципов и частных исследовательских методов теоретически может обеспечить объективное, всестороннее и эффективное освещение исследований, посвященных истории армянской культуры и философии.

Ключевые слова: методология, культура, гуманитарные науки, история армянской философии, национальная идентичность, национальное бытие.

**DEVELOPMENT OF NEW METHODOLOGY
OR STUDYING ARMENIAN PHILOSOPHICAL THOUGHT
(AFTER THE 1990-s)**

A. Minasyan

*Head of the Center for Military-Humanitarian Sciences Research,
NDRU, MOD, RA
Ph.D. in Philosophy, Associate Professor*

ABSTRACT

The article examines the process of forming a new methodology for studying the history of Armenian philosophical thought after the 1990s. After the collapse of the Soviet Union, Marxist-Leninist philosophy, as the theoretical-philosophical foundation of communist ideology, had lost its methodological applicability for the humanities, while new theoretical principles and methodology had not yet been developed. In the newly independent Republic of Armenia, a unique “ideological vacuum” had also emerged, and under these conditions, the Institute of Philosophy and Law of the National Academy of Sciences of Armenia, under the leadership of K. Mirumyan, initiated the process of developing new methodological approaches to studying the history of Armenian philosophy. The methodological principles of studying humanities are also important because they have essential significance from the perspective of revealing the foundations of national identity. This research analyzes the methodological approaches presented in the issues of the collection “Armenian Philosophy in the System of Spiritual Culture” published in 1992-2003, which are classified into three main groups: general methodological principles, specific methods, and practical applications of both general and specific methods. The research reveals that the methodological concepts proposed by S. Arevshatyan, H. Gevorgyan, and K. Mirumyan complement each other and provide an opportunity to study philosophical-historical phenomena and issues from different perspectives. The author concludes that the combined application of the mentioned methodological conceptual principles and specific research methods can theoretically ensure an objective, comprehensive, and effective coverage of research dedicated to the history of Armenian culture and philosophy.

Keywords: methodology, culture, humanities, history of Armenian philosophy, national identity, national existence.

УДК-32

ՆԵՐՄԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԿԱՌԼԵՆ ՄԻՐՈՒՄՅԱՆԻ ՓԱՍՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Լ.Ս. Մարվազյան

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտ*

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
lilit.sarvazyan@gmail.com*

ԱՄՓՈՓՈՒՄ

Պրոֆեսոր Կառլեն Միրումյանի գիտափիլիսոփայական հետազոտություններում առանցքային է հայ քաղաքական մտքի պատմության և մեթոդաբանության խնդրակարգը: Առանձնակի նշանակություն ունեն միջնադարի հայ մտածողների քաղաքական հայեցակարգերի նրա վերլուծությունն ու քաղաքագիտական փաստարկումները, որոնք արտացոլվել են հեղինակի մի շարք աշխատություններում [1]: Հոդվածում կոնկրետ-պատմական մեթոդաբանական սկզբունքով վերլուծվում են ԺԲ դարի Կիլիկյան Հայկական պետության եկեղեցական-քաղաքական ակաճավոր գործիչ, փիլիսոփա, իրավագետ, հրապարակախոս Ներսես Լամբրոնացու (1153–1198թթ.) քաղաքական գաղափարները Կ. Միրումյանի փիլիսոփայաքաղաքական փաստարկումների համատեքստում:

Ն. Լամբրոնացու քաղաքական հայեցակարգը ձևավորվելով կոնկրետ պատմական պայմաններում՝ արտացոլում է ժամանակի սոցիալ-քաղաքական իրողությունները, ազգային առկա կեցության հիմնախնդիրները, միջեկեղեցական հարաբերությունների բնույթը: Քաղաքական հարաբերապաշտության դիրքորոշմամբ նա քաղաքական արժեքները, բարոյական նորմերն ու օրենքները, ինչպես նաև խաղաղության քաղաքականությունն արժևորում է՝ ըստ

տեղի, ժամանակի ու սոցիալ-քաղաքական հանգամանքների:

Լամբրոնացին ընդունում է պետական կառավարման սահմանափակ միապետական ձևը՝ խորհրդակցական մարմնի առկայությամբ: Նրա քաղաքական խնդրակարգի առանցքը Հայաստանի ինքնիշխան, կենտրոնացված պետականության գաղափարն էր, որի իրականացումը ենթադրում էր մի շարք հիմնահարցերի լուծում. ներագային ուժերի համախմբում, կազմալուծված զինված ուժերի միավորում, ազգային բանակի վերաստեղծում, տեղական իշխանությունների համագործակցում, անջատողական-կենտրոնախույս քաղաքականության չեզոքացում, սոցիալական ներդաշնակության հաստատում, հոգևոր-բարոյական գաղափարախոսության ծավալում և այլն:

Հիմնաբառեր՝ քաղաքական հարաբերապաշտություն, Հայ եկեղեցու ինքնիշխանություն, կամքի ազատություն, խաղաղություն, ազգային անվտանգություն:

Ներսես Լամբրոնացին¹ մեծարվել է **«Նոր Պողոս առաքյալ Տարոնացի»**, **«Տիեզերական վարդապետ»** անվանումներով: Իր ստեղծագործությամբ ու գործունեությամբ նվիրվել է հայոց թագավորության վերականգնմանը, հայոց բանակի հզորաց-

¹ Լամբրոնացու աշխարհական անունն է Սմբատ: 1168/1169թ. Ներսես Շնորհալի կաթողիկոսը նրան ձեռնադրում է քահանա՝ շնորհելով Ներսես անունը: 1175թ. կաթողիկոս Գրիգոր Տղայի կողմից Լամբրոնացին օծվում է եպիսկոպոս և նշանակվում Տարսնի թեմի առաջնորդ: Լամբրոնացին ուսումնասիրել է օտար եկեղեցական կարգերը, հունական փիլիսոփայություն, հռետորություն և այլ գիտություններ, տիրապետել է հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, ասորերեն լեզուներին: Նա պաշտոնավարել է Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Բ-ի արքունիքում՝ որպես ատենադպիր, պալատական խորհրդատու և թարգմանիչ: Կարգավորել է պետության արտաքին գործերը: Մանրամասն տես՝ *Չամչեանց Միքայել*, Պատմություն Հայոց, Հ. Գ., Գլ. ԺԵ, Եր., ԵՊՀ հրատ., 1984, էջ. 88–96: *Մաղաքիա Օրմանեան*, Ազգապատում, Մասն Ա., Կ.Պոլիս, հրատ. Վ. և Հ. Տեր Ներսեսեան, 1912, էջ. 1536–1545: *Ալիսեան Հ. Ներսես*. Ներսես Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսնի. Կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանությամբ Պահլավունեաց եւ Լամբրոնի Հեթումեանց, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1956:

մանը, հասարակական հարաբերությունների կարգավորմանը, Հայ եկեղեցու ինքնիշխանության պահպանմանն ու բարեկարգմանը: Նա թողել է բազմաժանր գրական ժառանգություն. մեկնություններ ճառեր, քարոզներ, ներբողներ, շարականներ, նամակներ, Թղթեր և այլն: Դրանցից կարելի է հատկանշել՝ «Ատենաբանութիւն», «Թուղթ Առ քրիստոսագօր իշխողն մեր ինքնակալութեամբ Լևոն», «Խորհրդակցութիւնք ի կարգս եկեղեցւոյ», ինչպես նաև թարգմանչական-օրենսդրական աշխատությունները՝ «Քաղաքային Օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի թագաւորաց Հռովմայեցւոց», «Զինուորական Օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ» և այլն:

Կառլեն Միրումյանը նախ բացահայտում է Ներսես Լամբրոնացու քաղաքական փիլիսոփայության մեթոդաբանության մեկնարկային սկզբունքը, ըստ որի՝ թե՛ բնական աշխարհում, թե՛ սոցիալ-քաղաքական ու բարոյական ոլորտներում ամեն ինչ հարաբերական է: Ըստ Լամբրոնացու՝ բոլոր իրադարձությունները, ինչպես նաև Աստվածաշնչյան, իրավաքաղաքական ու բարոյական սկզբունքներն արժևորվում են՝ հաշվի առնելով ժամանակի գործոնը. «Ժամանակն է իշխում պատվիրանների վրա և ոչ թե պատվիրանը՝ ժամանակի: Եվ օրենքը չի կարող մարդուն իր ծառան դարձնել, այլ ինքն է ծառայում մարդուն՝ ժամանակին համապատասխան» [2]:

Քաղաքական հարաբերապաշտության Լամբրոնացու դիրքորոշումն առնչվում է քաղաքական այլընտրանքի սկզբունքին՝ պահանջելով գերագույն արժեքների ու սկզբունքների, պատմաքաղաքական կոնկրետ պայմանների համարժեք ընկալում և հարաբերակցում: Իր առաջադրած սկզբունքը մտածողը փաստարկում է *պատերազմի և խաղաղության հիմնահարցով*, որն արդիական նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության ու հայ ազգի քաղաքական առկա իրողությունների համատեքստում:

Ընդունելով խաղաղության քաղաքականությունը՝ որպես գերագույն արժեք և օրենք, որին պետք է ձգտեն բոլոր պետությունները, Լամբրոնացին հաստատում է, որ այս օրենքի խախտման դեպքում խաղաղասեր պետությունը չպետք է սահմանափակվի խաղաղության քարոզով, այլ մղի *պաշտպանողական պատերազմ*²՝ հանուն պետության ու ազգի անվտանգության: Ուստի՝ նա հորդորում է. «Եվ իմացի՛ր, որ խաղաղության օրենքը միշտ չէ, որ ողջունելի է, այլ նայած ժամանակին... Եթե հնարավոր է, պետք է բոլոր մարդկանց հետ խաղաղություն պահպանել, բայց երբ դա հնարավոր չէ, պետք է ընտրել պատերազմը» [3]:

Այդպիսով, Լամբրոնացու համոզմամբ՝ քաղաքական արժեքները, բարոյական նորմերն ու օրենքները հարաբերական են՝ ըստ տեղի, ժամանակի ու հանգամանքների: Օրինակ՝ չարը կարող է բարի համարվել, անիրավը՝ իրավացի, անօրենը՝ օրինապահ: Օրենքն արգելում է մարդասպանությունը, բայց որոշ դեպքերում դա դիտվում է օրենքի գործադրում՝ ըստ կոնկրետ իրավիճակի:

Միբրումյանի հիմնավորմամբ՝ Ներսես Լամբրոնացու աշխարհայացքի հայեցակարգային հիմքը *ազատ կամքի* քրիստոնեական ուսմունքն է²: *Ինքնիշխանության ու կամքի*

² Քրիստոնեական փիլիսոփայության մեջ կամքի ազատության հիմնահարցն առնչվում է մարդու անձնիշխանության, Աստծո նախախնամության, նախասահմանության, աստվածային շնորհների, աշխարհում չարի գոյության ու դրա համար պատասխանատվության խնդիրներին: Մերժելով խնդրակարգի վերաբերյալ ծայրահեղ տեսակետները՝ հայ մտածողները հիմնավորում են մարդու կամքի ազատությունը չհակադրվելով նախասահմանության ուղղափառ մեկնությանը: Ինչպես նշում է Հր. Միրզոյանը՝ «Հայ տեսական միտքը հանձնիս Մեսրոպ Մաշտոցի և Եզնիկ Կողբացու, զարգացրեց կամքի ազատության գաղափարը, որը հետագա դարերի հայ փիլիսոփայության մեջ պահպանվեց ու շարունակվեց որպես հիմնական գիծ», տես *Միրզոյան Հր. «Գրոնադականական պայքարը և հայ փիլիսոփայական միտքը»* (Հայ իմաստասիրությունը հոգևոր նշակույթի համակարգում), Պրակ 1, Եր., 1992, էջ 79: *Եզնիկ Կողբացի*, Եզն Աղանդոց, 1970, էջ 110: *Արևշատյան Ս.Ս., Միբրումյան Կ.Ա.*, Հայոց փիլիսոփայության պատմություն. հին շրջան և վաղ միջնադար, Եր., 2007, էջ. 101–108, 139–142:

ազատության գաղափարները առաջնային են Լամբրոնացու իրավաքաղաքական ուսմունքում: Ըստ նրա՝ մարդիկ ի վերուստ անձնիշխան են՝ օժտված Աստծո շնորհած կամքի (ընտրության) ազատությամբ և պատասխանատու են իրենց արարքների և դրանց հետևանքների համար: Աստծո սահմանած օրենքներում ամրագրված է. «...նրա [մարդու] կամքը պետք է ազատ լինի, այսինքն՝ ինքնիշխան», որին «...առանց մեր ցանկության Ինքը՝ Աստված, չի կարող իրեն կողմնակից դարձնել, որպեսզի Իր արարածի գործերի համար ինքը չլինի անարդար... Միայն մեր կամքով է մեր անձը ծառայում նրան, ում հնազանդվում է» [4]: Ազատ կամքի նման ըմբռնումից բխում է, որ սոցիալ-քաղաքական առկա հարաբերությունները մարդկանց ազատ կամքի դրսևորման արդյունք են: Հետևաբար՝ անհավասարությունը, անարդարությունը, օրինազանցությունը և այլն, պայմանավորված են սոսկ մարդու կամքի ազատությամբ և որևէ կերպ չեն առնչվում Աստծուն: Միջնադարի հայ մտածողները, այդ թվում՝ Լամբրոնացին, գիտակցում էին մարդու (ազգի) ազատ կամքի, ընտրության ազատության մերժման սոցիալ-քաղաքական և ազգային-քաղաքական հետևանքները, քանզի այդպիսի հայեցակետը բացառում է չարի, հատկապես՝ արտաքին ռազմաքաղաքական սպառնալիքների հաղթահարման հնարավորությունը:

Ուշագրավ է Լամբրոնացու վերը նշված գաղափարների և հռոմեացի փիլիսոփա, պետական գործիչ Մենեկայի (Ք.ա. 4 – Ք.հ. 65) հայացքների համանմանության Կ. Միրումյանի բացահայտումը: Մենեկան գրում է. «Ինքը՝ տիեզերքի արարիչը և կառավարիչը, ով սահմանել է ճակատագրի օրենքները, հետևում է դրանց: Մեկ անգամ հրաման արձակելով՝ նա ինքնին այժմ հավերժ հնազանդվում է» [5]: Փաստորեն՝ հայ մտածողի դիրքորոշումը հռոմեացի փիլիսոփայի հիմնադրույթի քրիստոնեական մեկնաբանությունն է:

Ըստ Լամբրոնացու՝ բանական մարդը չի կարող ինքնակամ բռնության ենթարկվել կամ հպատակվել: Նա տարբերում է «ներքին կամք» և «արտաքին կամք» հասկացությունները: «Արտաքին կամքին և մարմնին շատերը կարող են իշխել, իսկ ներքին կամքին որևէ մեկը երբեք չի կարող, ո՛չ Աստված, ո՛չ մարդը, որովհետև այն «ինքնիշխան» է, և նրան կարող է հնազանդեցնել միայն սերը» [6]: Ընդ որում՝ ներքին և արտաքին կամքի գործառույթները կարող են չհամապատասխանել և նույնիսկ հակադիր լինել: Կ. Միրումյանն ընդգծում է Լամբրոնացու այս հայեցակարգի **քաղաքական միտվածությունը**, որով հնարավոր է մեկնաբանել իրավաքաղաքական և սոցիալական հարաբերությունները՝ քրիստոնեական ուսմունքի և բնական իրավունքի սկզբունքների հետ: Հասարակության մեջ ինքնիշխան մարդու կամքը սահմանափակվում է դրական իրավունքի ու բարոյականության նորմերով: Սոցիալական անարդարության ու անկարգությունների հիմնական պատճառը հանուն կյանքի, գոյության պայքարն է: Գոյապայքարն ընթանում է ամենայն դաժանությամբ, հարստահարման տարբեր միջոցներով: «Անօրինակությունների և անարդարությունների վերացման հիմնական միջոցը, ըստ Լամբրոնացու, բարոյական դաստիարակությունն է, ինչպես նաև առկա թերությունների, արատների, չարիքի մերկացումն ու ազատ քննադատությունը» [7]:

Լամբրոնացին քննարկում է **իշխանության ձևերի ու կառավարման եղանակի հիմնախնդիրները**: Ըստ նրա՝ յուրաքանչյուր ազգ պետք է ունենա երկու «թագավորություն»՝ կառավարման երկու մարմին, իշխանության երկու ձև՝ պետական (քաղաքական-թագավորական) և հոգևոր (եկեղեցական): Ընդունելով իշխանությունների բաժանման այս սկզբունքը՝ քաղաքագետը միաժամանակ կարևորում է դրանց փոխլրացման ու համագործակցության անհրաժեշտությունը, քանզի

«...դրանք ծառայում են միևնույն գլխավոր նպատակին՝ ազգային-քաղաքական ու պետական խնդիրների լուծմանը» [8]:

Պետական իշխանության հիմնական գործառույթներն են՝ երկրի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և դատաիրավական խնդիրների լուծումը: Աշխարհիկ տերերը «...մարմնոյն ընթացից աշխարհին առաջնորդ լինին, եւ թագաւորական իրաւանց տնօրէն եւ ուղղիչ» [9]: Հոգևոր իշխանության գլխավոր խնդիրն է՝ ապահովել քաղաքական իշխանության գործողությունների հոգևոր-բարոյական կողմը, ինչպես նաև կառավարել ժողովրդի հոգևոր գործերը՝ հավատը, բարեպաշտությունն ու բարեկրթությունը: Երկու իշխանությունն էլ պետք է միակերպ ու համարժեք ընկալեն երկրի ու ազգի առջև ծառացած խնդիրները՝ միակամությամբ ու համախոհությամբ դրանց լուծման եղանակները համաձայնեցնելով ազգի ու պետության շահերին:

Ընդունելով կառավարման միապետական ձևը (թագավորությունը), ինչն օրինաչափ էր այդ ժամանակաշրջանում, Լամբրոնացին մերժում է բացարձակապետությունը, միահեծան կառավարումը, պետական ու հասարակական խնդիրների միանձնյա լուծումը: Ըստ նրա՝ պետության ղեկավարը պետք է լինի խոհեմ, կարևորագույն հարցերը քննի խորհրդականների հետ. «Որք իմաստուն առաջնորդք են՝ ստանան խորհրդակիցք եւ նօքօք զբանն վճռեն որպէս արարին հոռմեացիք եւ տիեզերակալեցին» [10]: Միանձնյա կառավարումը չի կարող լինել արդարացի ու անսխալ, եթե անգամ միապետը տիրապետի կառավարման արվեստին: Թե՛ կրոնական, թե՛ քաղաքական անսխալականության սկզբունքն ընդունելի չէ, քանզի առաջնորդի սխալների հետևանքներն անդառնալի են հասարակական-քաղաքական կյանքում. «Առաջնորդ, եթե հոգևոր և եթե մարմնաւոր, որ ինքնիշխանութեամբ կատարէ զգործն՝ փրկութիւն ոչ կարէ ուղղել ընդ ձեռամբ անկելոցն» [11],

քանզի «...երկրագործին սխալանք անձին միայն վնասէ, իսկ թագաւորին՝ ամենայն աշխարհ» [12]:

Այդպիսով՝ Լամբրոնացին ընդունում է պետական կառավարման **սահմանափակ միասնական ձևը՝ խորհրդակցական մարմնի առկայության պայմանով**: Նա բացառում կամ նվազագույնի է հասցնում միապետական իշխանության կամայականությունն ու ինքնիրավչությունը, հաստատում պաշտոնյաների իրավունքների ու պատասխանատվության համաչափությունը՝ հաստատելով, որքան բարձր է պաշտոնը պետության մեջ, այնքան մեծ է պատասխանատվությունը: Իշխանների ու գորապետների խոհեմությունը դրսևորվում է կառավարման համակարգում իմաստուն խորհրդականներ ընտրելով ու գավառներում շնորհալի ու ոչ ազահ առաջնորդներ նշանակելով:

Պաշտպանելով **սոցիալական արդարության սկզբունքը՝** Լամբրոնացին քննադատում է դաժան ու ագրեսիվ թագավորներին ու իշխաններին, ովքեր կողոպտում են աղքատներին, սահմանում ծանր հարկեր, ստրկացնում գավառները: Նա բացահայտում է նաև հոգևոր դասի շրջանակում դրսևորվող անկարգությունն ու չարաշահումները, մասնավորապես՝ դատապարտում է գինեմոլությունը, անառակությունը, դրամաշորթությունը և այլն: Մինչդեռ հոգևոր իշխանության առաքելությունը ժողովրդին քրիստոնեական բարոյականությամբ դաստիարակելն է, օտար բարքերը մերժելը, այլադավանության տարածումը կանխելը:

Ըստ Լամբրոնացու՝ **պետության գլուխը և պաշտոնյաները պետք է սկզբունքորեն դեկլարվեն իրենց երկրի օրենքներով ու սովորույթներով**: Նրանք պետք է լինեն իրենց նախնիների արժանի իրավահաջորդ, չընդունեն օտար, հատկապես՝ լատինական իրավակարգն ու օրենքները: Ինչպես իր նախորդ մտածողները (Ներսես Մեծ, Սահակ Պարթև, Եզնիկ Կողբացի, Եղիշե, Մովսես Խորենացի, Հովհան Մանդակունի, Հովհան

Իմաստասեր Օձնեցի, Մխիթար Գոշ, Ներսես Շնորհալի, Գրիգոր Տղա և այլք), նա ևս պայքարում էր՝ հանուն հայ հասարակության մեջ կարգուկանոնի, ազգային ավանդույթներին ու օրենքներին համապատասխան իրավակարգի հաստատման:

Անտիկ փիլիսոփաներին Լամբրոնացին գնահատում է այն իրողության համար, որ նրանք, ուսումնասիրելով մարդու բնությունն ու հասարակության յուրակերպությունը, դրանց հիման վրա սահմանել են դրական՝ քաղաքական օրենքներ պետության համար: Նա համոզված էր, որ բոլոր ժողովուրդներն էլ ունեն դրական ու բացասական կողմեր, ուստի՝ պետք է քննել, այսինքն՝ ընտրել լավը, օգտակարը և դրանով նպաստել հայրենի երկրի անվտանգության պահպանմանն ու ազգի բարօրությանը:

Լամբրոնացու քաղաքական հայեցակարգում հատկանշական է *ազգայինի ու համամարդկայինի հարաբերակցության* հարցը, որը կարևորվել է ժամանակի դավանաբանական պայքարի և եկեղեցիների մերձեցման խնդրի համատեքստում³: Հարկ է նշել, որ հանուն ազգային-քաղաքական ակնկալիքների՝ Հայ եկեղեցին երբեք չի խուսափել միաբանության շուրջ բանակցություններից: Բայցև քաղաքական շահադիտությունը հայ գործիչները չեն հանգեցրել կրոնադավանական էական սկզբունքների զոհաբերման, իսկ իբրև քա-

³ XII դարի 60–90-ական թվականներին առանձնակի նշանակություն ունեին հայ-բյուզանդական և հայ-լատինական եկեղեցական ու քաղաքական հարաբերությունները: Դավանաբանական բանակցություններն ունեին քաղաքական միտումներ: Բյուզանդիան կարևորում էր հայերի դերը՝ Մերձավոր Արևելքի մահմեդական ու քրիստոնեական տերությունների հետ հարաբերություններում: Պատահական չէ, որ բյուզանդական քաղաքական ծրագրերում առկա էր Հայ և ուղղափառ եկեղեցիների միության հարցը: Հայ հոգևոր իշխանությունն էլ միջեկեղեցական բանակցություններում փորձում էր լուծել քրիստոնեական համերաշխության և միջազգային խաղաղության հաստատման խնդիրը:

դաքական դաշինքի պարտադիր պայման առաջարկվող կրոնական մերձեցումն ընդունել են **մինչքաղկեդոնական դավանության** հիման վրա միայն⁴:

Հայտնի է, որ միության եկեղեցաքաղաքական ծրագրի նախաձեռնողը և քաղաքականության սկզբնավորողը դավանական որևէ զիջում չհանդուժող Ներսես Շնորհալիւն էր, մշակողը՝ Գրիգոր Տղան, ով չեզոք փոխհամաձայնությամբ ոչ էական հարցերում որոշ զիջումներ ընդունեց՝ պահպանելով հայադավանության հիմնարար սկզբունքները: Իսկ Ներսես Լամբրոնացին, ուսումնասիրելով քաղաքական բարենպաստ պայմաններից օգտվող օտար եկեղեցական կարգը, փորձեց բարեկարգել Հայ եկեղեցին՝ պահպանելով Հայրապետական Աթոռի ինքնությունը⁵:

Լամբրոնացին բանակցել է ն՝ հույների, ն՝ լատինների հետ, հանուն եկեղեցաքաղաքական նպատակների՝ համաձայնել որոշ զիջումների, բայց երբեք չի ընդունել օտար որևէ դավանակարգ: Հետևաբար՝ սխալմունք է նրան հունադավան կամ լատինադավան համարելը: Դա հերքվում է հենց Լամբրոնացու հոետորական հարցադրումով. «Արդ եթե ես միոյ ազգի ջատագով էի, ընդ այլսն ե՞րբ էր կար հաղորդիլ, բայց ընդ

⁴ Հայ եկեղեցու այս դիրքորոշման վկայությունն է շուրջ 930թ. Վասպուրականի հայոց Գագիկ թագավորի՝ հունաց Ռոմանոս կայսերն ուղղված թուղթը, որում պաշտպանելով հայոց ուղղադավանությունը՝ հայտարարվում է. «...վասն չորրորդ ժողովոյն՝ որ ոչ գմիաձայնութիւն յանձին ունին վարդապետքս Հայոց հաղորդել... Վասն զի ընդդէմ երից ժողովոցն գտաք զվարդապետութիւնն նոցա»: Տես՝ Թուղթ *Գագկայ* Վասպուրականի Հայոց թագաւորի, առ կայսրն յունաց Ռոմանոս, վասն Հաւատոյ // Գիրք Թղթոց (Մատենագրութիւն նախնեաց), Թիֆլիս, 1901, էջ 296:

⁵ Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի ազգային-եկեղեցաքաղաքական գործունեության վերբերյալ տես՝ *Մարվագյան Լ.*, Մաղաքիա Օրմանյան (Ազգային-փիլիսոփայական հայեցակարգը), Եր., 2013, էջ. 170–177: *Մարվագեան Լ.Ս.*, Սուրբ Ներսես Շնորհալու քաղաքական եւ իրաւական հայեցակարգը // «ՀԱՄԿ» Հայագիտական Տարեգիրք, ԺԳ տարի, Անթիլիաս-Լիբանան, հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2024, էջ. 275–290:

հրաքանչիւրսն որ միմեանց թշմամիք են՝ խառնիմ... ամենայն հարցողի կարող եմ պատասխանել թէ ուղիղ ընթանամ, և սիրովն Քրիստոսի զամենայն կրճիմն քակեմ. որով բարեհոշակիմ և ՚ի Լատինացւոց եկեղեցիսն, և ՚ի Հելլենացւոց, և յԱսորւոց, և կամ ՚ի Հայաստանս, և ընդ սոսա անշարժ, և ՚ի նոցին աւանդութիւնն անփոփոխ» [13]:

Ակնհայտ է, որ Ներսէս Լամբրոնացու այլասիրությունը չի հանգել օտարահպատակության: Նա փորձել է *տարբեր դավանությունները համաձայնեցնելու սկզբունքով* լուծել լատինական, հունադավան, ասորական և Հայ եկեղեցիների միաբանության անիրականանալի խորհուրդը: Բայցն պաշտպանել է Հայ եկեղեցու վարչական ինքնությունը, Հայոց Հայրապետության իրավունքները՝ մերժելով քաղկեդոնականությունը և քննադատելով օտար եկեղեցիների «գերիշխանութեան նկրտումները» [14]:

Առանձնակի նշանակություն ունի Ներսէս Լամբրոնացու *Ատենաբանությունը*, որը գրվել է Տարսուհի 1197թ. ժողովում եկեղեցիների միության ու քրիստոնեական օրենքների օգտակարությունը փաստարկելու նպատակով: Ընդ որում՝ կոնկրետ ազգի կամ եկեղեցու հետ միավորվելու միտում առկա չէ երկում: Հիմնվելով քրիստոնեական սկզբունքների ու պատվիրանների վրա՝ նա շեշտում է դրանց գորությունը իշխող կառավարությունների բռնությունների, ազգամիջյան ատելության նվազման և խաղաղության ձգտումների ձևավորման գործում [15]: Մտածողի համոզմամբ՝ քրիստոնեական հավատի ընդհանուր հենքով հաստատված տարբեր երկրների միությունը խախտվել է, որովհետև ազգերը փորձեցին տարբեր վեմերի վրա կառուցել հավատը՝ միմյանց դեմ մարտնչելով և քրիստոնեական օրենքները փոխարինելով աշխարհակալության օրենքներով:

Եկեղեցիների տարաձայնությունները պայմանավորված էին քրիստոսաբանական խնդիրների տարաբնույթ ընկալմամբ ու մեկնաբանությամբ⁶։ Չընդունելով Քրիստոսի «երկու բնություն», ինչպես նաև «երկու կամք և երկու ներգործություն» բանաձևերը՝ Հայ եկեղեցին անփոփոխ դավանում է միավորությունը հաստատող Կյուրեղ Ալեքսանդրացու՝ **«Մի է բնութիւնը Բանին մարմնացելոյ»** բանաձևը, ինչպես նաև Գրիգոր Աստվածաբանի մեկնությամբ՝ **«անբաժանելի ու անշփոթելի աստվածային և մարդկային բնությունները»**։

Ընդունելով Հայ եկեղեցու դավանած բանաձևը՝ Լամբրոնացին փորձում է այն մերձեցնել այլադավանների բանաձևերին։ Բանն այն է, որ միավորված Քրիստոսի աստվածությունը նրանք բնություն են անվանում՝ հավելելով էությունը, և մարդկությանը դարձյալ բնություն են անվանում՝ ստուգաբանելով մարդու էությունը, և երկու բնության միությունն ընդունում են, ինչպես հայերը։ Ուստի՝ նա եզրակացնում է. «Զի նոյն է Աստուած և մարդ ասել զՔրիստոս, և երկու բնութիւն. մանաւանդ առաջինդ ոչ միայն զէութիւնն, այլ և զսահման էութեանն յայտնապէս մակազրէ. իսկ երկրորդս՝ լոկ զէութիւնն առանց սահմանի» [16]։ Քանզի երկու բնությունը մի անձի մեջ է, իսկ անձնավորությունը բաժանելը նեստորականություն է, որը նգովել են և՛ հայերը, և՛ այլազգիները։ Մյուս կողմից՝ հայադավանությանը վերագրում են մի կեղծիք, ըստ որի՝ հայերը շփոթում են աստվածային ու մարդկային հատկությունները Քրիստոսի մեջ, իսկ միավորումից հետո իբր խոստովանում ոչ թե Աստվածամարդ, այլ «...ի յատուկ բնութիւն Աստուծոյ փոխեալ ասեմք զմարդոյն» [17]։

⁶ Քրիստոսաբանական խնդիրների շուրջ բանավեճերի մանրամասն վերլուծությունը տես՝ Մարվազյան Լ., Հայ եկեղեցու ազգային քաղաքականությունը եկեղեցիների միաբանության փորձերի և դավանաբանական պայքարի համատեքստում // «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիա», Եր., 2008, Թիվ 11-12, էջ. 34-50։

Մինչդեռ, Լամբրոնացու հավաստմամբ, Հայ եկեղեցին ի սկզբանե չի ընդունել այդ «չարափառությունը», ինչն ապացուցվում է վավերացված բանաձևերով. «Եւ ոչ ասեմք՝ ի վերայ Բանին մարմնացելոյ զմի բնութիւն, զհատկութիւն էութեանցն շփոթելով ...այլ ըստ անճառ միատրութեանն երկուցն՝ ի մի անձնատրութիւն, և յաստուածութեան և մարդկութեանն յատկութիւն» [18]: Փաստորեն՝ տարբեր բանաձևերի մերձեցման հիմքը Լամբրոնացին համարում է ***Քրիստոսի աստվածային ու մարդկային հատկությունների անշփոթ միավորման փաստը***՝ նշելով լոկ բառային և ոչ իմաստային տարբերությունները. երկաբնականները պնդում են երկու բնությունը, իսկ հայերը՝ հատկությունների անխառն միավորությունը՝ խուսափելով երկվությունից:

Եկեղեցիների քրիստոնեական միությանը խոչընդոտում են երկկողմանի մեղադրանքներն ու զրպարտությունները, քանզի «... սերն ոչ ազգի առ իւրն ազգ, այլ ամենեցուն քրիստոնէից լինել ՚ի Քրիստոս մի ազգ» [19]: Լամբրոնացին մերժում է որևէ եկեղեցու գերիշխանությունը, քանի որ ***խաղաղության հիմքը իրավահավասարության սկզբունքի գործադրումն է***. «Մի գլուխ ունիմք զՔրիստոս. միոյ գլխոյ անդամոց զիա՞րդ հնար է ՚ի միմեանց պառակտել... յառաջ եղեն ՚ի Քրիստոս, և ընդ նմա իշխանութեամբքն յաջողեցան» [20]: Ըստ նրա՝ տարբեր ազգերի հոգևոր հաղորդակցությունը հնարավոր է քրիստոնեական պատվիրաններով, մարդասիրությամբ, որ ***ազգերն ազատության օրենքներով դատեն***, և ո՛չ չարակամությամբ, մանավանդ որ՝ չար կամքը բխում է անհատներից, ոչ թե ազգերի բնությունից:

Այդպիսով՝ Ներսես Լամբրոնացին երբեք հակված չի եղել՝ զոհաբերելու Հայ եկեղեցու որևէ դավանասկզբունք կամ ազգային իրավասություն՝ նույնիսկ հանուն իր դավանած քաղաքական նպատակների: Չափավոր զիջումնային քաղաքականությունը չէր խախտում Հայ եկեղեցու անկախությունը՝

միջեկեղեցական ու ազգամիջյան հարաբերությունները հանգեցնելով սոսկ դավանական ու քաղաքական չեզոքության: Ինչպես իրավամբ նշում է Կ. Միրումյանը, «Լամբրոնացին առաջարկում է ազգամիջյան հարաբերությունները կառուցել ոչ թե քրիստոնյա ժողովուրդներին տարբերակող, այլ միավորող հասկությունների հիման վրա» [21]:

Լամբրոնացու քաղաքական հայեցակարգում էական նշանակություն ունեն ***Հայրենիքի ռազմաքաղաքական պաշտպանության, պետության և ազգի անվտանգության, հայոց բանակի հզորության գաղափարները***: Հայտնի է, որ մահմեդական տիրակալները քրիստոնյաների ներքին գործերը չէին քննում իրենց օրենսդրությամբ: Մտածողի վկայությամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Դ. Տղայի (1173–1193թթ.) օրոք քաղաքների ու գավառների բնակիչները Նորին Սրբազնությունից աշխարհիկ օրենքներ խնդրեցին, սակայն ո՛չ եկեղեցիներում, ո՛չ էլ իշխանների մոտ, չգտնվեցին այդպիսի օրենքներ, «...բայց միայն զկանոնականս՝ որ ՚ի սուրբ հարցն ժողովելոց էր գրեալ... Իսկ քաղաքի արեւս ոչ գտաւ ՚ի մէջ Հայոց» [22]:

Հարկ է նշել, որ «Մխիթար Գօշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի ջանքերով ստեղծուեցին հայ իրաւունքի նոր աղբիւրներ, ինչպէս նաեւ փոխառուեցին ու ստեղծագործաբար վերախմբագրուեցին օտար որոշ օրէնսգրքեր՝ դրանք յարմարեցուելով հայոց երկրի առանձնայատկութիւններին, ազգային-քաղաքական ու ռազմական պահանջներին» [23]: Միջնադարի հայ իրավագէտների օրենսդրական գործունեության հիմքում Հայաստանի ինքնիշխան, կենտրոնացված պետականության գաղափարն էր, որի իրականացումը ենթադրում էր մի շարք հիմնահարցերի լուծում. ներազգային ուժերի համախմբում, կազմալուծված զինված ուժերի միավորում, ազգային բանակի վե-

րաստեղծում, տեղական իշխանությունների համագործակցում, անջատողական-կենտրոնախույս քաղաքականության չեզոքացում, սոցիալական ներդաշնակության հաստատում, հոգևոր-բարոյական գաղափարախոսության ծավալում և այլն:

Դեռևս Բագրատունյաց թագավորության օրոք (887–1045թթ.) հունա-բյուզանդական իրավունքը «...Բյուզանդիայի սահմաններից սկսում է թափանցել Հայաստան և հետզհետե դառնում է ռեցեպցիայի առարկա» [24]: Հիմնականում փոխառվեցին Բյուզանդիայի Իսավրյան թագավորների (717–867թթ.) օրենսդրական ակտերը: Դրանք տարածվեցին նաև Կիլիկյան Հայկական պետության մեջ՝ դառնալով հայ իրավունքի աղբյուր: Ելնելով քաղաքական առկա կեցությունից ու Հայոց թագավորության վերականգնման նպատակից՝ Լամբրոնացին 1191–97 թվականներին թարգմանեց ու հայ իրականությանը համապատասխան՝ խմբագրեց հունա-բյուզանդական օրենքների ժողովածուները [25]:

Առանձնակի նշանակություն ունի 1196թ. **«Զինվորական օրենքների»** [26] թարգմանությունը հունարեն բնագրից: Այս իրողությունը վկայում է հենց ինքը՝ թարգմանիչ-օրենսդիրը. «Ի հելլենացոց գրոց արարի թարգմանութիւն մովսիսական աւրինացդ եւ Լէոնի եւ Կոստանդեայ աւրինացդ, ՚ի նմանէ թարգմանեցի եւ զզինուորական աւրենքդ. եւ ընծայեցի որոց սիրենն վարիլ սովաւ եւ հաճոյ գտանիլ Աստուծոյ, եւ կառավարիչ՝ քաղաքաց եւ գաւառաց» [27]:

Օրենքները գործադրվել են Կիլիկյան Հայաստանում, Լևոն Բ. թագավորի հավանությամբ: Զինվորական օրենսգիրքը կարգավորում էր զինվորական ծառայությունը՝ սահմանելով ծառայության ժամկետը, հրամանատարական կազմը, զորամիավորումների տեսակները, զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները: Օրենսգրքում

առկա են քրեաիրավական բազում նորմեր, որոնցում դատապարտվում են զինվորների օրինախախտումները (դավաճանություն, լրտեսություն, զինվորական գաղտնիքի հրապարակում, զինձառայությունից խուսափում, անբարո արարքներ և այլն): Սահմանված են նաև պատիժներ՝ կատարված հանցագործություններին համապատասխան:

Ըստ Օրենսգրքի՝ հրամանատարական կազմը բաղկացած է հնգապետներից, տասնապետներից, հարյուրապետներից և իշխաններից (կոմսերից կամ տրիբուններից): Թագավորը նշանակում էր դուկերին (դքսերին, կոմսերին), դուկերը՝ հազարապետներին, վերջիններս՝ հարյուրապետներին: Հազարապետը սովորական իշխան էր, իսկ կոմսը՝ մեծապատիվ («նախագլուխ») իշխան: Զինվորների պետերը կոչվել են «վերակացուներ», բարձրաստիճան զինվորները՝ «իշխաններ», «գորապետներ» և «կոմսեր»:

Լամբրոնացին կարևորում է հրամանատարների **ընտրովի զինվորական խորհուրդները**: Ըստ օրենքի՝ աններելի օրինախախտումների համար Ս. Եկեղեցու կողմից նգովված զինվորականները չէին կարող ընտրվել խորհրդում. «Որք վասն շնութեան եւ կամ վասն այլ անապաշխար գործոց դատապարտին նգովիւք ի սբ եկեղեցւոջ զինուորք, ոչ են ընտրեալ զինուորական խորհրդոյն» [28]:

Ըստ օրենքի՝ գորքը բաղկացած է հեծյալ գնդից («ձիավորներ») և հետևակից: Ծառայությունը զինվորների համար պայմանագրային է. զինվորն իր կամքով է զինվորագրվում. «...ընծայեաց կամաւք զանձն իւր զինուորել», որ «...գդաշն զինուորելոյն ետ», այսինքն՝ ծառայության վերաբերյալ կամավոր պայմանագիր է կնքել: Զինվորական կանոնադրությամբ՝ պետերը պարտավոր են հրահանգավորել իրենց ստորադրյալներին, օրինակ՝ բացատրել, թե նրանք ինչ գաղտնիքներ չպետք է հրապարակեն, այլապես՝ եթե զինվորը

անտեղյակության հետևանքով գաղտնիք բացահայտի, կպատժվի նրա վերակացուն. «...իւր վերակացուն պատուհասի վասն այնր, զի ոչ զգուշացոյց գնա ի չասելն» [29]:

Ըստ օրենսգրքի՝ զինծառայողների պարտականություններն են.

- ***Անձնուրաց ծառայել թագավորին (պետությանը), պահպանել երկրի սահմանների անձեռնմխելիությունը, պետական գաղտնիքները.*** այս պարտականությունները չկատարողները համարվում էին դավաճաններ: Այսպես, թագավորի դեմ մեղանշողը ենթարկվում էր բարձրագույն պատժի. «Որ ոք մեղիցէ առ թագաւորն, մեռանիցի նշաւակեալ եւ յիշատակ նորա անարգանոք մնասցէ մինչեւ իսպառ» [30]: Արքայական տան գիշերային պահապանն իր պահակատեղին լքելու համար դատապարտվում էր մահապատժի, իսկ եթե «...մարդասիրութեան արժանաւորի հարկանեն զնայ... հանեն ի պատուոյն» [31]: Խիստ պատիժներ են սահմանված այն զինվորների համար, ովքեր՝ ա) հեռանում էին թագավորից նրա հակառակորդների մոտ, բ) լրտեսական գործունեություն էին ծավալում՝ ի վնաս պետության, գ) ոչ քրիստոնյա թշնամու կողմն էին անցնում, դ) առևտուր էին անում թշնամիների հետ՝ վաճառելով զենք կամ ռազմական նշանակություն ունեցող երկաթե իրեր, ե) դաշնակցում էին թշնամիների հետ. «Եթե ոք խորհի շաղախել ընդ բարբարոսս, կամ դնէ ուխտ ընդ նոսս, ի գլխաւորէն պատուհասի» [32]:
- ***Պահպանել հասարակական կարգն ու քնակչության անդորրը.*** իստորեն պատժվում էին խռովություն հարուցող զինվորները. «Որ խռովէ զխաղաղութին զինուոր, ի գլխաւորէն պատժի» [33]: Դատապարտելի է նաև իշխանատենչության մղումով ժողովրդին անօրինական գործողությունների մեջ ներքաշելը. «Որ անպատշաճոյ սկիզբն

լինի եւ գծողովորդն ամբոխէ վասն իւր իշխանութիւն յափշտակելոյ, կամ զգլուխն հատանեն, եւ կամ ի գաւառէն տարագրեն» [34]:

- **Անվերապահ կատարել զինվորական կարգադրությունները, լինել կարգապահ, քաջ և պարտաճանաչ.** այս պահանջները խախտողները կրում էին վարչական տույժեր, քրեական խիստ պատիժներ կամ պաշտոնազրկվում էին. «Եթէ ոք զսահմանաւ պատուիրանին զանց առնէ, ի զինուորութենէն անկցի» [35]: Օրինակ, եթէ պայմանագիրը խախտելով՝ զինվորը կրկնակի փախչէր իր իշխանի մոտից, աստիճանազրկվում էր, քանզի «...իբրեւ զմատնիչ եղել ինքն իւրոյ ազատութեան» [36]: Վերադասին՝ «նախագլուխ իշխանին» ընդդիմանալու համար զինվորները ենթարկվում էին մարմնական պատիժների, աքսորման կամ պաշտոնազրկման: Բերդը կամ քաղաքը պահպանողները, եթէ հանգստանալու պատրվակով դրանք հանձնէին ուրիշին՝ առանց իշխանի հրամանի, «...զլխատութեամբ իրաւամբք դատապարտեսցի» [37]:

Ծառայության ժամկետը չլրացած՝ զինվորական ծառայությունից խուսափողը ևս անարգ պատժի էր ենթարկվում: Իսկ պատերազմ հայտարարելու ժամանակ դասակից փախչելու կամ վախից իր մարմնի վրա վերք առաջացնելու համար ծեծում կամ պաշտոնազրկում էին: Եթէ զինվորները լքում էին ռազմի դաշտը կամ հրաժարվում մասնակցել պատերազմին, ենթարկվում էին մահապատժի. «...կամ գազանա(ց) զկերակուր տան զնա, կամ զփայտէ կախեսցի» [38]:

Պատերազմի ժամանակ զինվորներին տուն թողնելու համար կոմսերը տուգանվում էին 30 դահեկանով: Պատժից ազատվում էին այն զինվորականները, ովքեր պատերազմի ժամանակ ռազմի դաշտից հեռանում էին՝ թշնամուց խոցված լինելու պատճառով, քանզի «...ունի զվկայութիւն արութեան ի մարմինն» [39]: Բայցև, ըստ ԺԳ հոդվածի, բանտարկվում էին

երկչոտ զինվորները, ովքեր փախչում էին՝ առանց թշնամուց խոցվելու կամ օրինական այլ պատճառի:

Օրենքը դատապարտում է թուլամորթներին՝ ինքնասպանության փորձերի համար՝ սահմանելով. «...խայտառակեալ կործանեն ի պատուոյ զինուորութեանցն եւ ի գիտել գլխաւորին, եւս ծանրացուցանէ զպատուհասն» [40]: Պատվազրկված զորականն այլևս իրավունք չունել մտնել մարտի դաշտ. «Որ անպատուի որով եւ իցէ պատճառանօք եւ անկանի ի զինուորութենէն. ոչ այլ բնաւ պատուի լինի կարօղ առնուլ, կամ մտանել ի կարգ զինուորութեան» [41]:

Զինակցին սրով գանահարելու համար սահմանված է ծանրագույն պատիժ. «Եթէ հրամայաւ զինուոր զիւր զինուորակիցն սրով հարկանէ, գլխատեսցի» [42]: Իշխանին կամ զինակցին դիտավորյալ մարմնական վնասվածք պատճառելու համար մեղավորը հեռացվում է ծառայությունից՝ կրելով նաև մարմնական ծանր պատիժ: Ըստ օրենքի՝ դատից և պատիժը կրելուց խուսափողն աքսորվում է, և այդպիսի հանցավորներին պատժելու իրավունքով օժտված է միայն թագավորը. «պատուհաս ածեն ի վերայ նորա ըստ կամաց թագաւորին» [43]:

Զինվորական կանոնակարգով խիստ պատժվում են նաև այն ծնողները, ովքեր պատերազմի ժամանակ խնայում են իրենց զավակներին՝ նրանց չուղարկելով մարտադաշտ. «Եթէ ոք զիւր որդին ի ժամանակ ճակատուն խնայէ զինուորել ի պատերազմ, աքսորեսցի եւ յընչից իւրոյց զրկեալ խայտառակեսցի» [44]: Փաստորեն՝ այս դեպքում սահմանված է եռակի պատիժ. աքսոր, ունեցվածքի բռնագրավում և հրապարակային պարսավանք:

- ***Խաղաղ բնակչության նկատմամբ չկատարել քրեորեն պատժելի արարքներ.*** ըստ օրենքի՝ եթէ զինվորը նյութական վնաս հասցնի հարկատուին, կրկնակի կհատուցի: Իսկ եթէ իշխանը կամ նրա հեծյալը ճանապարհին կամ

ճորտ գյուղացու տանը նյութական վնաս պատճառեն, կղատվեն և կրկնակի կհատուցեն վնասը Գողություն է համարվում գտնված անասունը թաքցնելը և տիրոջը չվերադարձնելը: Այս դեպքում պատժվում է ոչ միայն մեղավորը, այլև նրա գործակիցը. «...տուժի ինքն եւ իւր խորհրդակիցքն որ թագուցին [հանցանքը]» [45]: Կեղծ դրամներ ծախսելու, զենք գողանալու ու վաճառելու համար սահմանված են պաշտոնագրկում և ազատագրկում:

- ***Լինել առաքինի, թույլ չտալ զինվորական պատիվը վարկաբեկող արարքներ*** (անբարո հարաբերություններ, որկրամոլություն, զինեմոլություն, ագահություն), որոնց համար եկեղեցին նգովում է օրինազանցներին: Օրինակ՝ «Որք ի վերայ զինոյ արբեցողութեան եւ այլ կերակրոց յիմարին եւ մեղանչեն ի զինուորացն, կացուցանէ զնոսա գլխաւորն առաջի եւ զպատուհասն թողու, բայց ի զինուորական կարգէն փոխարկէ զնայ» [46]: Այսպիսիք չէին կարող լինել զինվորական խորհրդի անդամ՝ ենթարկվելով անարգանքի: Զինվորն աստիճանագրկվում ու պարսավանքի էր ենթարկվում նաև իր կնոջ դավաճանությունը հանդուրժելու համար. «Եթէ զինուորն առ շնութեան կնոջ իւրոյ համաձայնի, ի բաց կացցէ ի զինուորութենէն եւ խայտառակէն զնայ. եւ որ զայլոց ամուսին ապականէ, թէ հաճութեամբ կնոջն զայս առնէ, զքիթն հատանեն» [47]:

Այդպիսով՝ «***Զինվորական օրենքները***» իրավաքաղաքական կարևոր փաստաթուղթ էր՝ իրականացնելու Կիլիկյան Հայկական պետության ներքին և արտաքին մի շարք կարևոր գործառույթներ: Օրենքներում արտացոլված հիմնադադափարներն ուսանելի են և արդիական նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքական առկա կեցության համատեքստում: Օրենքների թարգմանչի՝ Ներսես Լամբրոնացու նպատակը ազգային ուժեղ բանակի ստեղծումն

էր, զինվորների մեջ հայրենասիրության, արիության, պետական իշխանության նկատմամբ հավատարմության ոգի ներշնչելը: Այս փաստաթղթի կիրառումը նպաստել է հայոց պետության ինքնիշխանության ամրապնդմանը, ազգային անվտանգության ապահովմանը, ներքին կարգուկանոնի հաստատման ու բարոյական դաստիարակության ծավալմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմությունից, Եր., 2002: *Միրումյան Կ.*, Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., 2006; *Мирумян К.* Права человека: историко-политический очерк. Ер., 2002. *Мирумян К.* История политической науки. Средневековье. Возрождение. Реформация, Часть II. Ер., 2005. *Мирумян К.* Армянская политическая мысль. Формирование и этапы развития. Ер., 2021.
2. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Թիվ 1142, 218բ // Մեջբերումը՝ ըստ *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմությունից, Եր., 2002, էջ 217:
3. Նույն տեսում, էջ 218:
4. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Թիվ 4694, 10բ // Մեջբերումը՝ ըստ *Мирумян К.* Армянская политическая мысль. Формирование и этапы развития. Ер., 2021. С. 428.
5. *Сенека.* Философские трактаты / Пер. с лат. Т.Ю. Бородай. СПб, 2001. С. 99.
6. *Мирумян К.* Права человека. Историко-политический очерк. Ер.: Изд-во «Лингва», 2002. СС. 118–119.
7. *Միրումյան Կ.* Քաղաքական ուսմունքների պատմություն, էջ 263:
8. *Միրումյան Կ.* Հայ քաղաքական մտքի պատմությունից, էջ 224:
9. Սրբոյն *Ներսէսի Լամբրոնացոյ* Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, Սբ Ղազար, 1847, էջ 58:
10. Մատենադարան, Ձեռ. Թիվ 1142, էջ 50 // Մեջբերումը՝ ըստ Սաֆարյան Գ., Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Եր., «Լիմուշ», 2010, էջ 335:
11. Նույնը:
12. Սրբոյն *Ներսէսի Լամբրոնացոյ* Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցոյ եւ Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, էջ 53:

13. Նորին Ներսեսի Լամբրոնացույ Թուղթ Առ քրիստոսագոր իշխողն մեր ինքնակալութեամբ Լևոն // *Գրիգորի Կաթողիկոսի Տղա կոչեցելոյ Նամականի*, Ի Վենետիկ, Ի Ս.Ղազար, 1865, էջ 220:
14. Նույն տեղում, էջ. 220–221:
15. Տեառն Ներսեսի Լամբրոնացույ Ատենաբանութիւն // *Գրիգորի Կաթողիկոսի Տղա կոչեցելոյ Նամականի*, էջ. 116–117:
16. Տեառն Ներսեսի Լամբրոնացույ Ատենաբանութիւն, էջ. 151–152:
17. Նույն տեղում, էջ 152:
18. Նույն տեղում, էջ 154:
19. Նույն տեղում, էջ 165:
20. Նույն տեղում, էջ 166:
21. *Мирумян К.* Армянская политическая мысль. С. 441.
22. «Քաղաքային Օրէնք Ներսիսի Լամբրոնացույ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի թագաւորաց Հռովմայեցոց», Առաջաբան, Պարիս, Տպագր. «Բանասէր»ի, 1907, էջ 5:
23. *Սարկազեան Լ.Ս.* Զինուորական օրէնսդրական մշակոյթը հայ իրաւունքի աղբիւրներում // *Բազմավէպ, Վենետիկ, Ս. Ղազար*, 2016, Թիւ 1–2, էջ 213:
24. *Սամուելյան Խ.* Հին հայ իրավունքի պատմությունը, Հ. 1, Եր., «Արմֆան» հրատ., 1939, էջ. 67–68:
25. Ասորական Դատաստանագիրք / Ձեռագրերի համեմատ. և առաջ.՝ *Ս. Վրդ. Ղլտճեանց*, Ս. Էջմիածին, 1917: Քաղաքային Օրէնք Ներսիսի Լամբրոնացույ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի թագաւորաց Հռովմայեցոց / Յառաջ. և հրատ.՝ *Կ.Յ. Բասմաջեան*, Պարիս, Տպագր. «Բանասէր»ի, 1907:
26. Զինուորական Օրէնք Ներսիսի Լամբրոնացույ // «Բանասէր», Պարիս, 1902, Թիւ 11, էջ. 321–328:
27. Քաղաքային Օրէնք Ներսիսի Լամբրոնացույ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի թագաւորաց Հռովմայեցոց, Առաջաբան, էջ 5:
28. Զինուորական Օրէնք Ներսիսի Լամբրոնացույ, հոդ. ԼԱ:
29. Նույն տեղում, հոդ. Գ:
30. Նույն տեղում, հոդ. ԻԱ:
31. Նույն տեղում, հոդ. Ծ:
32. Նույն տեղում, հոդ. ԻԲ:
33. Նույն տեղում, հոդ. Խ:
34. Նույն տեղում, հոդ. ԻԴ:
35. Նույն տեղում, հոդ. ԻԵ:
36. Նույն տեղում, հոդ. ԼԲ:
37. Նույն տեղում, հոդ. Թ:

38. Նույն տեղում, հոդ. ԻԵ:
39. Նույն տեղում, հոդ. ԺԴ:
40. Նույն տեղում, հոդ. ԼԶ:
41. Նույն տեղում, հոդ. ԻԶ:
42. Նույն տեղում, հոդ. ԼԹ:
43. Նույն տեղում, հոդ. Լ:
44. Նույն տեղում, հոդ. ԼԳ:
45. Նույն տեղում, հոդ. Ժ:
46. Նույն տեղում, հոդ. ԽԲ:
47. Նույն տեղում, հոդ. ԽԵ:

ПОЛИТИЧЕСКАЯ КОНЦЕПЦИЯ НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ В КОНТЕКСТЕ АРГУМЕНТАЦИИ КАРЛЕНА МИРУМЯНА

Л.С. Сарвазян

*Институт философии, социологии и права НАН РА
кандидат философских наук, доцент*

АННОТАЦИЯ

В научно-философских исследованиях профессора Карлена Мирумяна центральное место занимают вопросы истории и методологии армянской политической мысли. Особое значение имеют его анализ политических концепций средневековых армянских мыслителей и его политические аргументы. В статье анализируются политические идеи Нерсеса Ламбронаци (1153–1198), видного церковно-политического деятеля Киликийского армянского государства XII века, философа, правоведа, оратора, в контексте философско-политических аргументации К. Мирумяна. Политическая концепция Ламбронаци, формируясь в конкретных исторических условиях, отражает общественно-политические реалии того времени, вопросы национального бытия, характер межцерковных отношений. С позиций политического релятивизма он ценит политические ценности, моральные нормы и законы, а также политику мира в зависимости от места, времени и обстоятельств. Ламбронаци принимает ограниченную монархическую форму правления с наличием совещательного органа. Стержнем его политической проблематики была идея суверенной, централизованной государственности Армении, реализация которой предполагала консолидацию внутренних сил, объединение расформированных вооруженных сил, воссоздание национальной армии, сотрудничество местной власти, ней-

трализация сепаратистско-центробежной политики, установление общественного согласия, расширение духовно-нравственной идеологии.

Ключевые слова: политический релятивизм, суверенитет Армянской церкви, свобода воли, мир, национальная безопасность.

POLITICAL CONCEPT OF NERSES LAMBRONATSI IN THE CONTEXT OF ARGUMENTATIONS OF KARLEN MIRUMYAN

L. Sarvazyan

Institute of Philosophy, Sociology and Law of the NAS RA

Ph. D. in Philosophy

Associate Professor

ABSTRACT

In the scientific-philosophical studies of professor Karlen Mirumyan, the central place is occupied by questions of history and methodology of Armenian political thought. His analysis of political concepts of medieval Armenian thinkers and his political arguments are of special importance. The article analyzes the political ideas of Nerses Lambronatsi (1153–1198), a prominent church-political figure of the Cilician Armenian state of the XII century, philosopher, jurist, orator, in the context of philosophical and political argumentations of K. Mirumyan. Political concept N. Lambronatsi, forming in concrete historical conditions, reflects the social and political realities of that time, issues of national being, the nature of inter-church relations. From the standpoint of political relativism, he appreciates political values, moral norms and laws, as well as world politics depending on place, time and circumstances. Lambronati accepts a limited monarchical form of government with the presence of a advisory body. The core of his political problem was the idea of a sovereign, centralized statehood of Armenia, the implementation of which implied the consolidation of internal forces, the unification of the disbanded armed forces, the re-establishment of the national army, the cooperation of local authorities, the neutralization of separatist-centrifugal politics, the establishment of social harmony, the expansion of spiritual and moral ideology.

Keywords: political relativism, sovereignty of the Armenian Church, freedom of will, peace, national security.

УДК 7

ՀԱՅ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԿԱՐԼԵՆ ՄԻՐՈՒՄՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ս.Ս. Արզումանյան

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու.,
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դոցենտ
s.arzumanyan@inbox.ru*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է հայ գեղագիտական մտքի զարգացման ընթացքը փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Կարլեն Միրումյանի աշխատություններում: Ընդգծվում է գեղագիտության ոլորտում Կ. Միրումյանի կատարած կարևոր ներդրումը, մասնավորապես որոշակի խնդիրների վերլուծության ընթացքում պատմահամեմատական մեթոդի կիրառումը, ինչպես նաև համապարփակությանը ձգտող նրա քննության յուրահատուկ բնույթի գիտական արժեքն ու նշանակությունը: Այս տեսանկյունից հատկապես մեծ ուշադրության է արժանացել միջնադարի հայտնի փիլիսոփա, գիտնական, պոետ, մատենագիր Հովհաննես Իմաստասեր Սարկավագի աշխարհայացքի տարբեր դրսևորումների վերլուծությանը նվիրված հիմնարար հետազոտությունը, որում կարևոր տեղ են զբաղեցնում բազմաթիվ գեղագիտական և արվեստի տեսությունը վերաբերող հարցերը: Դրանցից որոշիչ են արվեստում իրականության նմանակման խնդրի՝ միմեսիսի քննությունը, գեղարվեստական ստեղծագործության գործընթացում երևակայության դերի ճանաչումը, բնատուր տաղանդի և ուսուցման կարևորության շեշտադրումը, արվեստ ստեղծողների համար անհրաժեշտ գիտելիքների ձեռքբերումը, արվեստի տարբեր գործառնությունների շեշտադրումը, դրա հասարակական նշանակությանը ընդգծումը որպես դաստիարակության և սոցիալական

հակասություններ բացահայտելու միջոց և այլն: Մեծ արժեք են ներկայացնում նաև Կ.Միրումյանի ուսումնասիրությունները երաժշտական գեղագիտության մի շարք հիմնարար խնդիրների վերաբերյալ: Նրա ուշադրության կենտրոնում են հատկապես խոսքի ու մեղեդու, վոկալ և գործիքային երաժշտության փոխհարաբերության խնդիրները:

Հիմնաբառեր՝ Կարլեն Միրումյան, գեղագիտություն, Հովհաննես Սարկավագ, միմեսիս, երևակայություն, երգեցողություն, գործիքային երաժշտություն:

Ինչպես հայտնի է, գեղագիտությունը (էսթետիկան) իր կարևոր տեղը զբաղեցրեց փիլիսոփայական գիտությունների համակարգում գերմանացի լուսավորական Ալեքսանդր Բաումգարտենի շնորհիվ բավական ուշ՝ 1750թ.: Սակայն արդեն նախնադարյան մարդն իր դիցաբանական գիտակցության սահմաններում անդրադարձել է տիեզերքի կատարյալ կառուցվածքի, գեղեցիկի, տգեղի, վեհի, արվեստի առաջացման ու ստեղծման գաղտնիքների, դրա ընկալման արդյունքում առաջացած հուզական հոգեվիճակների և այլ հարցերին, որոնք այսօր էլ պահպանում են իրենց կայուն տեղը գեղագիտության՝ իբրև փիլիսոփայական գիտության խնդրակարգում: Նշված հարցերը քննարկման առարկա են դարձել Արևելքի ու Արևմուտքի շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, որտեղ մտածողները (հատկապես միջնադարից սկսած) նույնպես հետաքրքրություն են ցուցաբերել դրանց նկատմամբ: Սակայն իբրև փիլիսոփայական ամուր հիմքեր ունեցող **ինքնություն** գիտական ֆենոմեն, հայ գեղագիտական մտքի պատմությունը պետք է սկսել XX դարի երկրորդ կեսից: Դրա կայացմանը նպաստել են հայ անվանի գիտնականներ Ա. Ադամյանը, Հ. Ապրեսյանը, Յա. Խաչիկյանը, Վ. Հովսեփյանը (Օսիպյանը), Ա. Քալանթարը և այլք: Նրանց շարքում իր արժանավոյն տեղն է զբաղեցնում փիլիսոփայական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարլեն Արտավազդի Միրումյանը:

Ի տարբերություն վերը թվարկված գիտնականների, Կ. Միրումյանի համար գեղագիտությունը, ցավոք, չի եղել ուսումնասիրության հիմնական առարկա: Մակայն նույնիսկ այդ պարագայում նրա կատարած հետազոտական աշխատանքը նոր հնարավորություններ բացելով հայագիտության հետագա զարգացման համար, նպաստեց նաև հայ գեղագիտական մտքի հիմքերի ամրապնդմանը: Իր հերթին ակնհայտ է և հակառակ գործընթացը. գեղագիտական համարվող հարցերի քննության շնորհիվ, հայագիտությունը հզոր լիցք ստանալով՝ հարստացավ նոր բովանդակությամբ և բացահայտվեց նոր տեսանկյունից: Դրա վկայությունն է առաջին հերթին միջնադարյան հայ աստվածաբանների ու փիլիսոփաների վերոնշված հարցերի վերլուծությունը ու մեկնաբանությունը, ինչն ինքնին լինելով արժեքավոր, արդիականացավ և, հայտնվելով արդեն հիշատակված հայ գիտնականների ուշադրության կենտրոնում՝ ապրեց իր վերածնունդը: Բնականաբար այդ գործընթացը դժվար է պատկերացնել առանց այն լուրջ հետազոտական աշխատանքի, որը կատարել է պրոֆեսոր Կ. Միրումյանը:

Ամենասկզբից ուզում ենք ընգծել այն յուրահատկությունը, որը նկատել ենք գեղագիտական հարցերին նվիրված Կ. Միրումյանի բոլոր աշխատություններում, և որը նա կիրառել է յուրաքանչյուր խնդրի քննարկման ժամանակ: Խոսքն անվանի փիլիսոփայի այն մոտեցման մասին է, որը նա դրսևորում է տարբեր խնդիրների քննարկման ժամանակ և որը մենք ընկալում ենք իբրև համապարփակություն: Բանն այն է, որ քննության առնված յուրաքանչյուր հարց փիլիսոփան դիտարկում է չսահմանափակվելով դրա «նեղ շրջանակներով», ասենք, զուտ որևէ հայ մտածողի գաղափարները, նրա հայեցակարգը ներկայացնելով, կամ որևէ կոնկրետ խնդրի

յուրահատուկ բնույթը նկարագրելով: Նրա մոտեցումը սկզբունքորեն այլ է՝ նա փորձում է առավելագույնս ընդլայնել հետազոտվող հարցի սահմանները, այսինքն՝ բացահայտել վերջինի ծագման պատճառները ու զարգացման միտումները, դիտարկել այն արդեն ձևավորված համակարգի մեջ, համեմատել գոյություն ունեցող այլ հայեցակարգերում իշխող միտումների հետ: Մի խոսքով, նա կառուցում է մի ամբողջական համակարգ, որում հետազոտվող յուրաքանչյուր խնդիր, օրինակ՝ երաժշտության զարգացման ընթացքում խոսքի ու մեղեդու միջև ձևավորված հարաբերությունը դիտարկում է տարբեր դարաշրջաններում դրա ընկալումների, իմաստավորումների և տարաբնույթ մեկնաբանությունների ներքո: Նույն մոտեցումը Կ. Միրումյանը կիրառում է, երբ, օրինակ՝ անդրադառնալով միջնադարի մեծանուն մտածող Հովհաննես Սարկավազ Իմաստասերի հայեցակարգին, որի աշխարհայացքի վերլուծությանը նվիրված է նրա հիմնարար մենագրություններից մեկը, ցույց է տալիս դրա նշանակությունը համաշխարհային փիլիսոփայական և, իհարկե, գեղագիտական մտքի զարգացման ընթացքում: Այս դիրքորոշումից ելնելով՝ Կ. Միրումյանը ամփոփ ձևով ներկայացնում է տարբեր դարաշրջանների գեղագիտական մտքի ձեռքբերումները, շեշտը դնելով հատկապես Անտիկ և Միջնադարի ժամանակների վրա, քանի որ հենց վերջիններն են եղել նրա ուսումնասիրության կենտրոնում, իհարկե, չանտեսելով նաև այլ դարաշրջաններում տարածված հայտնի դիրքորոշումները (Վերածնունդ, Նոր ժամանակներ և այլն):

Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում «միմեսիսի» խնդիրը, որը նա քննարկում է պյութագորասականների, Հերակլիտեսի, Դեմոկրիտեսի, Մոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի, Լուկրեցիոս Կարուսի, Պլուտարքոսի, Մարկոս Ավրելիոսի, Ֆիլոն Ավագի, Պլոտինոսի, Օգոս-

տինոս Երանելիի, Հովհան Դամասկեցու, Բեդա Հարգարժանի, Լեոն Բատիստա Ալբերտիի, Լեոնարդո դա Վինչիի, Ալբրեխտ Դյուրերի և այլոց տեսակետները հաշվի առնելով, այսինքն՝ ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդ կիրառելով:

Սակայն կարծում ենք, որ չենք սխալվի, եթե գեղագիտական խնդիրներին նվիրված Կ. Միրումյանի աշխատությունների մեջ առավելապես կարևորենք Հովհաննես Սարկավագի աշխարհայացքին նվիրված հետազոտությունը: Միջնադարյան այդ հանրագիտակ մտածողը, ով հայտնի է իբրև «մեծ փիլիսոփա», «սուրբ վարդապետ», «պոետիկոս» և այլ նրան մեծարող մականուններով, հետաքրքրություն է ցուցաբերել նաև արվեստի խնդիրների նկատմամբ: Մասնավորապես, Կ. Միրումյանը նշում է, որ Սարկավագը ստեղծել է ամբողջական տեսություն արվեստի և իրականության էսթետիկական հարաբերությունների, արվեստի ծագման և նրա առարկայի, ֆունկցիաների ու էության մասին: Նրա համոզմամբ «Բան իմացութեան» պոեմը, որն ամբողջությամբ համակված է քնարական ոգով և փիլիսոփայական վերլուծության խորությամբ, «խորհրդանշեց ոչ միայն հայ էսթետիկայի մտքի պատմության, այլև ողջ միջնադարյան էսթետիկայի հետագա զարգացման ընթացքը» [1]:

Մեր կարծիքով հարգանքի է արժանի այն փաստը, որ քաջատեղյակ լինելով, որ Հովհաննես Իմաստասերի ուսմունքին են անդրադարձել մեծանուն գիտնականներ Մ. Աբեղյանը, Ա. Առաքելյանը, Հ. Ապրեսյանը, Յա. Խաչիկյանը, Ն. Թահմիզյանը և այլոք, դեռևս շատ երիտասարդ գիտնականը համարձակություն ունեցավ դիմել արդեն քննության առարկա դարձած հարցերին: Այսինքն՝ նա ոչ միայն չվախեցավ կանգնել հայտնի գիտնականների շարքում, այլ նաև իր հետազոտությամբ կարողացավ լրացնել արդեն ներկայացվածը, դրանով իսկ հարստացնելով հայ միջնադարյան մտածողի արվեստի

տեսությանը վերաբերող բովանդակությունը: Ի մի բերելով նախորդների կողմից արդեն բացահայտվածը՝ իր աշխատություններով Կ. Միրումյանը շարունակեց հայ էսթետիկական միտքի զարգացման ընթացքը: Մասնավորապես, նա հիմնովին վերլուծեց Հովհաննես Սարկավագի «միմեսիսի» տեսությունը, իրականության վերարտադրության խնդիրն արվեստում, որոշեց դրա տեղն ու նշանակությունը հայ էսթետիկական մտքի պատմության մեջ:

Կ. Միրումյանը նշում է, որ Սարկավագը վերածնունդ է դեռնու հին Հունաստանում ձևավորված միմեսիսի հայտնի տեսությունը, քանի որ արվեստի ծագման ակունքները տեսնում է մարդուն շրջապատող բնության մեջ [2]: Անտիկ և միջնադարյան մտածողների ուսմունքներին դիմելուց բացի, նա գուգահեռաբար ուղղվում է դեպի ազգային հոգևոր մշակույթը, արվեստի խնդիրներով զբաղվող քերականական միտքը: Նրա ուշադրության կենտրոնում հայտնվում են նաև Դավիթ Անհաղթի երկերը, որոնք նպաստեցին Հայաստանում աշխարհիկ գիտության և փիլիսոփայության ձևավորմանը և ամրապնդմանը: Սարկավագը հատկապես տպավորված էր մեծ փիլիսոփայի այն գաղափարով, որ արվեստը և գիտությունն առաջացել են մարդկային գործնական կարիքներն ու պահանջմունքները բավարարելու համար, այսինքն՝ դրանք ունեն երկրային, այլ ոչ թե երկնային (աստվածային) ծագում [3]:

Սակայն ընկալելով բնությունն իբրև արվեստի վերարտադրության օբյեկտ, Սարկավագը միաժամանակ հաստատում է, որ այդ նույն բնությունն Աստծո գեղեցիկ ստեղծագործություն է, աստվածային արվեստի արդյունք: Արարման նման մոդելը, ըստ Միրումյանի՝ միջնորդավորված ձևով հանգում է նորապլատոնական տեսությանը, քանի որ ընդունում է, որ մարդկային արվեստն աստվածային արվեստի յուրօրինակ արտացոլումն է, բոլորովին չնսեմացնելով բնության ստեղծագործական վերարտադրությունն արվեստում [4]:

Իբրև Աստծո գործունեության արդյունք և մարդուն շրջապատող նյութական աշխարհի հատկանիշ, գեղեցիկը պետք է վերարտադրվի արվեստում, քանի որ հենց դրա միջոցով է որոշվում արվեստի գործերի կատարելության աստիճանը: Բայց չպետք է անտեսել և այն, որ Աստծո կողմից ստեղծված բնությունը ևս օժտված է ստեղծագործական ընդունակությամբ, այսինքն՝ գտնվում է փոփոխության պրոցեսում: Այստեղից էլ Սարկավագի այն համոզմունքը, որ արվեստը չի տրված անփոփոխ ձևով, այլ ենթարկվում է փոփոխության և զարգանում որոշակի ուղղությամբ՝ անկատար ձևից անցնելով դեպի առավել կատարյալ ձևը [5]:

Ակնհայտ է, որ Սարկավագը կատարյալ արվեստագետ է համարում Աստծուն: Բնությունը, իբրև արարչագործության արդյունք, նույնպես օժտվում է ստեղծագործելու կարողությամբ, իսկ մարդն էլ, իր հերթին՝ մարդկային արվեստ ստեղծելու ունակությամբ: Ստացվում է, որ Աստվածային, բնական և մարդկային արվեստները գտնվում են որոշակի փոխկապակցվածության մեջ: Կ. Միրումյանի պնդմամբ մարդկային արվեստի խնդիրը Սարկավագը հետազոտում է երկու կտրվածքով. 1) արվեստի և բնության փոխհարաբերության և 2) «բնական արվեստի» և ուսուցման ընթացքում ձեռք բերված արվեստի հարաբերության տեսանկյունից: Ելնելով այն դրույթից, որ բնությունը բոլոր գիտությունների, արվեստների ու արհեստների մայրն է, «նա մեծարում է բնությունը իբրև գեղարվեստական արժեքների ստեղծման միակ հիմք և էսթետիկական հարաբերությունների աղբյուր: Եվ այդ իմաստով բնությունը տարբեր արվեստների ներկայացուցիչների, մասնավորապես, պոետների և երաժիշտների բարձրագույն ուսուցիչն է» [6]:

Կ. Միրումյանը նշում է, որ Սարկավագի կարծիքով արվեստին հասանելի է այն ամենը, ինչ տեղի է ունենում բնության և մարդու մեջ: Խոսքը հատկապես մարդկային հոգեկան

ապրումների, զգացմունքների դրսևորումների մասին է, որոնք հանդես գալով իբրև արվեստի առարկա՝ արտացոլվում են երաժշտության ու պոեզիայի մեջ: Սակայն նույնիսկ այդ մեծ հնարավորությունների պարագայում, մարդկային արվեստը չի կարող հասնել բնության կատարելությանը: «Արվեստագետները կարող են այս կամ այն չափով մոտենալ բնությանը, բայց մշտապես կմնան նրա աշակերտները» [7]: Բնությունը հանդես է գալիս իբրև մարդու գեղարվեստական գործունեության յուրահատուկ իդեալ, սակայն արվեստագետը հասկանում է, որ վերջինի կատարյալ վերարտադրությունն իր ուժերից վեր է: Այսինքն՝ պրոֆեսոր Միրումյանի համար պարզ է, որ միջնադարի մտածողը կոչ չի անում կուրորեն «կրկնօրինակել» բնությունը, և արվեստում տեղ է տալիս երևակայությանը, որը նրա համոզմամբ չի կարող դրսևորվել իրական փաստերի ու իրադարձությունների ճշգրիտ վերարտադրությունը կարևորող գիտության մեջ¹[8]: Ընդ որում, նա տարբերում է երևակայության երկու տեսակ՝ ճշմարտության վերարտադրությանն ու իմացությանը նպաստող ստեղծագործական երևակայությունը և դրան հակադրված ու ճշմարտությունից հեռացնող սին ու ունայն երևակայությունը: Երևակայության հետ է կապվում նաև Սարկավագի կողմից ընդունվող իդեալակացման սկզբունքը, որի կարևորությունը շեշտում է նաև Կ. Միրումյանը: Չէ՞ որ ի տարբերություն կենդանիների, որոնք գործում են բնագոյարար, մարդիկ գիտակցության մեջ նախապես պատկերացնում են այն, ինչ պետք է ստեղծեն: Հենց դրանով է բացատրվում մարդկանց գործունեությանը բնորոշ բազմազանությունը, ինչը վերաբերում է նաև արվեստին, որի գործերը ստանալով

¹ Հետևելով Արիստոտելի տեսակետին, Հովհաննես Սարկավագը ևս նկատի ունի պատմությունը:

ոչ միանշանակ բովանդակություն՝ ենթարկվում են բազմիմաստության սկզբունքին, հնարավորություն ստեղծելով տարբեր մեկնաբանությունների համար [9]:

Հատկանշական է, որ Սարկավագի գեղագիտական տեսության մեջ հետազոտողը տեսնում է ռեալիստական մտածողության տարրեր: Նա գրում է, որ նույնիսկ նրա կողմից օգտագործվող խորհրդանիշները «ոչ թե աբստրակտ, վերացական հասկացություններ են, այլ օժտված են որոշակի կոնկրետ նշանակությամբ և ռեալ բովանդակությամբ» [10]:

Հետաքրքրություն է առաջացնում և այն, որ կիրառելով իրեն հատուկ հետազոտության պատմահամեմատական մեթոդը, Կ. Միրումյանն իրականացնում է Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան» և հելլենիստական էպիկուրյան դպրոցի ներկայացուցիչ Լուկրեցիուս Կառուսի «Բերերի բնության մասին» փիլիսոփայական պոեմների համեմատությունը, միաժամանակ նշելով, որ դրանց նմանության մասին առաջինը խոսել է Հ. Ապրեսյանը² [11]: Զուգահեռներ անցկացնելով այդ պոեմների միջև, նա այնուամենայնիվ տարբերում է Սարկավագի երկում կիրառվող միմեսիսի ուսմունքն անտիկ փիլիսոփայության մեջ ներկայացված տեսություններից, որոնք ելնում են այն դրույթից, որ մարդու խնդիրն է վերարտադրել օբյեկտիվորեն և մեկընդմիջտ տրված գեղեցիկը և ճշմարիտը:

Միրումյանի ուշադրությանն է արժանացել նաև Սարկավագի մատնանշած արվեստի ընկալման յուրահատուկ հոգեբանական բնույթը, ինչը հետազոտողը համարում է նրա ուսմունքի արժեքավոր կողմերից: Արվեստը (երգը, երաժշտությունը, պոեզիան) ազդում են մարդու հոգեկան կառուցվածքի վրա և կարող են ծնել զգացմունքների ու վերապրումների հաջորդական ու տարաբնույթ շղթա: Բայց որպեսզի արվեստի

² Այս խոստովանությունը վկայում է Կ. Միրումյանի ակադեմիական բացարձակ ազնվության մասին:

ներգործությունն ուժեղ լինի, այն պետք է վերարտադրի իրականությունը, հաշվի առնելով և՛ իրական հանգամանքները, և՛ վերջինների հետ կապված մարդկանց գործողությունների արդյունքները:

Կրկին հիշեցնելով, որ արվեստը բաժանելով երկու տեսակի՝ բնականի (մարդուն շնորհված ձիրքի), և կրթության ու դաստիարակության արդյունքում ծնված արվեստի, այսինքն՝ քննարկելով բնական տաղանդի և ուսուցման միջոցով ձեռքբերված հմտությունների հարաբերակցման հարցը, Սարկավազը դրա հետ սերտորեն կապում է նաև հայտնության խնդիրը, որը նրա ուսմունքում «ձեռք է բերում յուրօրինակ երանգ և դիտվում է որպես բնությունից տրված, բնական ընդունակություն, որը գործում է բնական և սովորովի արվեստների սահմաններում: Ինչ վերաբերում է աստվածային հայտնությանը, ապա այն գործում է հոգևոր գրքերի և հոգևոր երաժշտության ստեղծման ընթացքում և չի տարածվում մարդկային աշխարհիկ ոլորտի վրա» [12]: Մի խոսքով՝ Միրումյանի պնդմամբ գեղարվեստական մտածողության մեջ Սարկավազը ճանաչում է երկու՝ աստվածային և մարդկային (բնական) տեսակի հայտնություն:

Ընդունելով բնական տաղանդի անհրաժեշտությունը, որի շնորհիվ հնարավոր է ստեղծել արվեստի բարձրակարգ նմուշներ, որոնք կարող են ծառայել իբրև օրինակներ ձիրք չունեցողների համար, Սարկավազը դրա հետ մեկտեղ կարևորում է նաև համառ աշխատանքը և ուսման հանդեպ սերը: Միայն այդ ամենի համադրության շնորհիվ արվեստը կդառնա գեղեցիկ, կհասնի կատարելության: Իսկ նման որակի արվեստի ընկալումը մարդկանց կպարզևի հաճույք: Այսինքն՝ միջնադարյան մտածողը շեշտադրում է արվեստի հեղունիստական ուղղվածությունը, դրա հեղունիստական գործառույթը, որի նպատակն է՝ զվարճացնել մարդկանց, նրանց ուրախություն պարզևել [13]: Հիմք ընդունելով նշված

առանձնահատկությունը՝ Կ.Միրումյանը պնդում է, որ Սարկավագի արվեստի տեսությունը հնարավորություն է տալիս խոսելու ոչ միայն մեկ, այլ արվեստի չորս հիմնական գործառույթների մասին: Հեղինիստականից բացի, հետազոտողը նշում է հաղորդակցման, լուսավորական (ճանաչողական) և դաստիարակչական գործառույթները³, որոնց նպատակը մեկն է՝ ծառայել հասարակության շահերին: Գաղտնիք չէ, որ այն գաղափարը, որ արվեստը պետք է ծառայի հասարակությանը, կարմիր թելի պես անցնում է հայ մտածողների աշխատությունների միջով՝ Եզնիկ Կողբացուց սկսած, ներկայանալով նաև Դավիթ Քերականի, Դավիթ Անհաղթի և այլ հայ մեծ մտածողների երկերում: Ուստի շատ բնական է, որ, ինչպես նշում է Կ. Միրումյանը. «Դիմելով բնությանը, նա խոստանում է ստեղծել մի կատարյալ երաժշտական-բանաստեղծական գործ, որն անջնջելի ու անհասանելի կմնա ժամանակի ընթացքում, օրինակ ծառայելով մարդկանց» [14]: Իրոք, Սարկավագի մեծությունը Միրումյանը տեսնում է նաև նրանում, որ առաջադրած ընդհանուր տեսական սկզբունքները նա իրականացրել է իր գրական-գեղարվեստական գործունեության մեջ:

Հասարակական խնդիրները կարևորելու հետ պետք է կապել նաև Սարկավագի հայեցակարգում ներկայացված անհատականի ու սոցիալականի առնչության պրոբլեմը: Այն մեկնաբանվում է իբրև «փոքրերի» ու «մեծերի», «թույլերի» և «ուժեղների» փոխհարաբերությունության խնդիր, որի խորքում թաքնված է սոցիալական անհավասարության հարցը: Վերջինը դառնում է միջնադարյան հայ սոցիալական պոեզիայի գրական-տեսական դրդապատճառը, դրսևորվելով Ֆրիկի, Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու երկերում [15]: Ավելին,

³ Արվեստի հենց այս չորս գործառույթները, մեր կարծիքով, և մեր օրերում պահպանում են իրենց կարևորությունն ու առաջնությունը:

նա զարգացնում է փոքրերի միավորման գաղափարը, այսինքն՝ ժողովրդի քաղաքական միավորման կոչ է անում: Միջնադարյան մտածողի հայեցակարգի մեծ նշանակությունը Կ. Միրումյանը տեսնում է նաև նրանում, որ նա ընդգծում է արվեստի համամարդկային էությունը, կարևորում հասարակության համար որոշիչ դերակատարություն ունենալու հանգամանքը:

Գնահատելով Սարկավագի էսթետիկական ուսմունքը, Միրումյանը եզրակացնում է, որ հայ մտածողն առաջադրել և յուրովի լուծել է մի շարք խնդիրներ, որոնք մեծ նշանակություն ունեն էսթետիկական մտքի զարգացման համար: Յուրացնելով Հերակլիտեսի գաղափարները, վերականգնելով Արիստոքսենի երաժշտական-ձայնային տեսությունը, կիրառելով այլոթագորասականների որոշ դրույթներ, կրելով նաև Պլատոնի և Պլոտինոսի էսթետիկական ուսմունքների ազդեցությունը Սարկավագը ստեղծել է սինկրետիկ բնույթ ունեցող էսթետիկական տեսություն, որը, սակայն, չի հանգում էկլեկտիզմին: Ընդհակառակը, դա իսկապես ամբողջական տեսություն է, որովհետև բոլոր թվարկված ուսմունքները վերջինում առկա են «վերառված» տեսքով, այսինքն՝ հանդես են գալիս որակական նոր մակարդակի վրա: Հենց այստեղ է դրսևորվում սարկավագյան ինտելեկտի ստեղծագործական հզորությունը [16]: Եվ տրամաբանական է Կ. Միրումյանի այն եզրակացությունը, որ հայ միջնադարյան մտածողը ստեղծել է «մի ամբողջական և ինքնատիպ ուսմունք արվեստի մասին, որը հենվում է ինչպես անցյալի մշակութային ավանդույթների, այնպես էլ ժամանակի հայ գեղարվեստական պրակտիկայի վրա՝ էլնելով հայկական արվեստի զարգացման իրական և հրատապ պահանջներից» [17]: Ավելին, հաշվի առնելով արվեստի հասարակական դերի շեշտադրումը Սարկավագի ուսմունքում, Միրումյանը նշում է, որ նրա «ժառանգությունը մի նվաճում է, որին չկարողացան հասու

լինել նույնիսկ Վերաձննդի դարաշրջանի խոշոր տեսաբաններից շատերը...»[18]⁴:

Կ.Միքումյանի աշխատություններում մեծ տեղ է հատկացվում երաժշտական էսթետիկայի հարցերին, հետևաբար այս խնդիրը ևս արժանի է հատուկ քննարկման: Երաժշտությանն առնչվող հարցերի շրջանակը, որին անդրադառնում է գիտնականը, շատ ընդգրկուն է: Օրինակ, նա ներկայացնում է երաժշտական արվեստի դասակարգման հետաքրքիր սխեմա, գրում է միջնադարում կաթոլիկ եկեղեցիներում հնչող գրիգորյան և ամբրոսյան երգեցողության, սաղմոսերգության և օրհներգության մասին, չի անտեսում նաև քաղաքի երաժշտության դրսևորումների՝ տրուբադուրների և մինեզինգերների արվեստը, ցույց է տալիս դրանց տարբերությունը, խոսում է մոտետի ու տաղի ժանրերի, բազմաձայնության, գուսանների արվեստի և նույնիսկ նրանց ստեղծած միավորումների՝ համաքարությունների մասին, ներկայացնում է նաև տարբեր կոմպոզիտորների գործունեությունը (Պալեստրինա, Ժոսկեն Դեպրե, Ջոզեֆե Ցառլինո, Օրլանդո Լասսո և այլք): Նա մեկնաբանում է նաև իրենց ժամանակում անտեսված տեսակետները, օրինակ՝ XII դարի տեսաբան Կոտտոնի այն միտքը, որ երաժշտությունը պետք է բացահայտի տեքստի բովանդակությունը, ցույց տա մեղեդու և բառի կապը, կամ Հովհան Գրոխեյի տեսակետը (XIVդ.) գործիքային երաժշտության մասին: Խոսվում է նաև եվրոպական երաժշտության վրա արաբական երաժշտության ազդեցության մասին և այլն: Սակայն այս տարաբնույթ հարցերի շարքում նա հատկապես կենտրոնանում է երկուսի վրա: Դրանցից մեկը գրական տեքստի ու երաժշտության, խոսքի և մեղեդու, իսկ

⁴ Նման տեսակետը փիլիսոփան հիմնավորում է հիմք ընդունելով խորհրդային հայտնի գեղագետ Մ. Օվսյաննիկովի այն պնդումը, որ Վերաձննդի գեղագիտության էական թերություններից էր «սոցիալական բախումների անտեսման միտումը»:

երկրորդը՝ վոկալ և գործիքային երաժշտության հարաբերության հարցերն են, որոնցից յուրաքանչյուրը նա համարում է էսթետիկայի կարևորագույն խնդիր: Սակայն դիմելով այս, կարծես թե, մասնավոր հարցերին՝ Կ. Միրումյանը կիրառելով իրեն բնորոշ հետազոտական մեթոդը, վերլուծության մեջ անդրադառնում է երաժշտության զարգացման ողջ պատմության ընթացքում ի հայտ եկած շատ այլ խնդիրների, սկսած Հին Արևելքից: Փիլիսոփան նշում է, որ մարդկության երաժշտական մշակույթի զարգացման վաղ շրջանում կարևորվել է բառի դերը: Գրական տեքստի իշխանությունը երաժշտության նկատմամբ պահպանվում է նաև Հին Հունաստանում ու Միջնադարում: Մասնավորապես քաջ հայտնի է, որ եկեղեցու հայր Օգոստինոս Երանելին մեղք է համարում այն փաստը, որ նրան ավելի հրապուրում է երգեցողությունը, քան տեքստը [19]:

Նկատելով, որ միջնադարյան տեսական տրակտատներում տեքստի և մեղեդու հարաբերակցության խնդիրը գրեթե չի քննարկվել, իսկ քննարկվելու դեպքում առաջնությունը միշտ տրվել է խոսքին, Կ. Միրումյանը իրավացիորեն եզրակացնում է, որ դրա պատճառը պրակտիկայից տեսության հեռու լինելն էր [20]: Ընդ որում, ուսումնասիրությունները, որոնք հիմնված են զուտ գրական աղբյուրների վրա, վկայում են, որ երգեցողությունն իշխում էր նաև հին հունական մշակույթում: Գործիքային երաժշտության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Հին Հռոմում հատկապես նրա անկման ժամանակ: Հետազոտողն ընթերցողի ուշադրությունն ուղղում է այն իրողության վրա, որ Հռոմեական կայսրության փլուզման ընթացքում հասարակության մեջ տարածվող անբարոյականությանը ու սանձարձակությանը զուգընթաց, ակտիվացավ նաև գործիքային երաժշտությունը, որն ակտիվորեն կիրառվում էր բարձր խավի խնջույքների ժամանակ: Բանն այն է, որ քայքայվող

հասարակությունն ի վիճակի չէր պահպանելու հաստատված նույնիսկ պարզագույն բարոյական նորմերը մարդկանց մեջ: Այդ պատճառով ձևավորվող քրիստոնեությունը, որը սկզբում տարածվում էր հասարակ ժողովրդի շրջանում, հանդես գալով հեթանոսության դեմ, որի հետ առնչվում էր նաև հռոմեացիների անբարոյական կյանքը, իր ջատագովների շնորհիվ մերժեց նաև նման կյանքի ատրիբուտները, այդ թվում և երաժշտական գործիքները: Ուստի, ըստ Միրումյանի՝ նրանց քննադատությունն անհիմն չէր: Այլ հարց է, որ վերջինը հաճախ ծայրահեղացվում էր: Օրինակ՝ եկեղեցու հայր Կլիմենտ Ալեքսանդրիացին (II դ.) գրում է. «Ով հաճախ լսում է ֆլեյտա և լարային գործիքներ, որ մասնակցում է պարերին... նա շուտով հասնում է մեծ անպարկեշտության ու սանձարձակության: Ցանկանում ենք մենք այս գործիքների շուտափույթ հեռացումը մեր հասարակական սթափ խնջույքներից. դրանք ավելի հարմար են անասունների, քան մարդկանց համար. թող հիմար մարդիկ օգտագործեն դրանք»[21]: Պարզ է, որ եկեղեցու հայրերի կողմից բացասական վերաբերմունքը երաժշտության նկատմամբ բացատրվում էր նրանց ձգտմամբ հաստատել քրիստոնեական բարոյագիտության նորմերը: Եվ բնական է, որ նման վերաբերմունքը մեղմանում է միայն այն ժամանակ, երբ քրիստոնեությունը դառնում է պետական կրոն: Կ. Միրումյանը հղում է եկեղեցու հայր Բեդա Հարզար-ժանին, ով ցույց է տալիս երաժշտության ուժը և առաքինությունը: Նա գրում է. «Երաժշտության օգուտը մեծ է և, համարձակվելով մտնել եկեղեցու դարպասներով, նա ինքը զարմանալի է և չափազանց առաքինի: Ոչ մի գիտելիք չի համարձակվել մտնել եկեղեցու դարպասներով, բացի երաժշտությունից» [22]:

Այնուամենայնիվ, տարբերակված վերաբերմունքը, այսինքն՝ երգեցողությանն առավելություն տալը և այն գերադասելը, զգացնել է տալիս դեռ բավական երկար ժամանակ, ինչի

ապացույց կարող է լինել այն փաստը, որ, օրինակ՝ հիմնողիան (օրհներգությունը), որը զուտ երգչախմբային կատարում էր, առանց գործիքների միջամտության, համարվում էր ավելի կատարյալ ձև, քան սաղմոսերգությունը, որը ուղեկցվում էր գործիքների նվագակցությամբ⁵:

Հայաստանում, որտեղ տեքստի և մեղեդու հարաբերության նկատմամբ վերաբերմունքը հիմնականում չէր տարբերվում վերը նշվածից, ըստ Կ.Միրումյանի, այնուամենայնիվ, նույնիսկ վաղ քրիստոնեության շրջանում նկատվում է երաժշտության յուրահատուկ դրսևորում, ինչը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանում տարածում ստացած գուսանների արվեստը (արդեն V դարից սկսած) և մեծ սեր վայելող ժողովրդական երգն ավելի բարենպաստ պայմաններ ստեղծեցին գործիքային երաժշտության կայացման համար, քան Արևմտյան Եվրոպայում: Խնդիրն այն է, որ արևմուտքում եկեղեցին հեռացավ իր ակունքներից՝ ժողովրդական երգից, իսկ Հայաստանում պահպանեց այդ կապը, քանի որ հայկական եկեղեցին հանդես էր գալիս ողջ ժողովրդի կողմից, մարմնավորելով եկեղեցու և ժողովրդի միասնությունը: Ավելին, Կ. Միրումյանը նշում է, որ տեսական միտքն ընդունում է եկեղեցական երաժշտության աշխարհիկ հիմքերը: Դա ապացուցում են Ներսես Լամբրոնացու, Ներսես Շնորհալու, Ստեփանոս Սյունեցու գաղափարները: Ըստ վերջինի, եկեղեցին ընդունում է երաժշտության ոչ միայն կրոնական, այլև գեղագիտական նշանակությունը: Իր հերթին, Գրիգոր Տաթևացին ներկայացնում է հինգ պատճառ, որոնք պայմանավորում են տեքստի և երաժշտության միասնությունը: Առաջին՝ «մարդը կազմված է հոգուց և մարմնից: Այդ պատճառով նա երգում է ձայնի և ձեռքերի միջոցով, որպեսզի,

⁵ Կ. Միրումյանը հիշեցնում է, որ Եվրոպայում գործիքային երաժշտությունը, առաջին հերթին, երգեհոնայինը, հայտնվեց եկեղեցում X-XI դդ.:

Աստծուն գովերգելու ժամանակ մասնակցեն և հոգևոր և մարմնական մասերը: Երկրորդ՝ անհրաժեշտ է Աստծուն մեծարել նաև գործիքների միջոցով: Երրորդ՝ որպեսզի հարբելով երաժշտության ձայներից, մարդիկ սովորեն հոգևոր խոսքը: Չորրորդ՝ որպեսզի միավորելով ձայնը և «սուրբ խոսքը» հաղթեն սատանային, իր իսկ գործիքի միջոցով: Հինգերորդ՝ որպեսզի և այլ եակները (կենդանիները) ձայները նվիրեն Աստծուն» [23]: Այս տեսակետն ընդունեցին նաև Հովհաննես Երզնկացին և Վարդան Արևելցին, ինչը վկայում է, որ ուշ միջնադարի ժամանակ տեքստի և երաժշտության հարաբերությունը դառնում է ավելի ինտենսիվ:

Գործիքային երաժշտության կիրառումը Հայաստանում ակտիվացավ VII դ. սկսած: Դրա մասին է խոսում հատկապես լարային գործիքների (ջութակ, քամանչի) տարածումը, ինչպես նաև երաժշտության ոլորտում կատարված պրոֆեսիոնալ բաժանումը՝ ստեղծողների ու կատարողների միջև՝ (տաղերգու և տաղասած): Որոշ գործիքներ (օրինակ՝ քշոցը) մուտք գործեցին նաև եկեղեցիներ:

Հայ տեսական մտքի հետաքրքիր բացահայտումներից, որի վրա ուշադրություն է դարձնում հետազոտողը, Ստեփանոս Սյունեցու տեսակետն է մեղեդու ինքնուրույն գոյության մասին, ինչը նշանակում է, որ ոչ թե մեղեդին պետք է հետևի պոետիկ տեքստին, այլ հակառակը: Հատուկ կարևորություն է տրվում Սյունեցու առաջ քաշած «կարկատանի» սկզբունքը. «Եվ բոլոր մեղեդիները ստեղծվում են կարկատաններից (տարբեր ձայների միացման արդյունքում, և ոչ միայն դրանք), այսինքն՝ (գուսանական մեղեդիները), այլ աստվածային (հոգևոր) երգերը» [24]: Այդ միտքն իր զարգացումն է ստանում նաև Գրիգոր Մազիստրոսի ուսմունքում, որը նույնպես ընդունում է երաժշտական-պոետական արվեստի «հատ-

վածային» բնույթը: Ընդ որում, իբրև «հատվածներ» են ընկալվում ոչ միայն տարբեր ձայների համադրությունը, այլ նաև տեքստի և մեղեդու համադրությունը:

Ինչպես նշում է Կ.Միրումյանը, «ձայների և գործիքային նվագի միջև համաձայնության» կողմնակից է XIII դարի հայտնի մտածող և երաժշտության գիտակ Հոսհաննես Երզնկացին: Նա շեշտում է գործիքային երաժշտության ինքնուրույնությունը, նշելով, որ գործիքային երաժշտությունը ի վիճակի է արտահայտելու շատ զգացմունքներ և մտքեր: Օրինակ՝ «մենամարտի, անցուդարձի, հուզումը, ամբոխի աղմուկը և այլն չեն կարող հաղորդվել խոսքերի միջոցով, այլ միայն շեփորների, քնարի, պանդիրի, ֆլեյտայի և այլն, ինչը նույնպես անվանվում է պոեզիա» [25]: Այսինքն՝ Հովհաննես Երզնկացին առաջիններից մեկը հռչակում է գործիքային երաժշտության ինքնուրույն էսթետիկական նշանակությունը, իբրև երաժշտական էսթետիկայի կարևոր սկզբունք: Այս հայեցակարգային կողմնորոշումը դառնում է հայ գեղագիտական մտքի նվաճումը, որը գրեթե նույնությամբ կրկնում են Վարդան Մեծը և Առաքել Սյունեցին:

Այսպիսով՝ նշելով, որ վոկալ և գործիքային երաժշտության հարաբերության հարցն անցնում է Հին Արևելքի, Անտիկ շրջանի և Միջնադարի երաժշտական մշակույթի ողջ պատմության միջով, Կ. Միրումյանը առանձնացնում է երկու մակարդակներ՝ խնդրի տեսական իմաստավորումն ու պաշտոնական ընդունումը և ժողովրդական պրակտիկայի մակարդակը: Այս երկու մակարդակները, նրա կարծիքով, զարգանում էին մեկուսի և ինքնուրույն:

Խոսելով երաժշտության խնդիրների մասին, Կ. Միրումյանը չէր կարող չանդրադառնար նաև Հովհաննես Մարկավագի տեսակետին, որի համար գործիքային երաժշտությունը նույնքան կատարյալ ու անհրաժեշտ էր, որքան արվեստի մյուս տեսակները՝ պոեզիան, գեղանկարչությունը, քանի որ

«օժտված է բովանդակությամբ և մտքի խորությամբ» [26]: Այս հարցի պարզաբանման և վերլուծության համար, ինչպես համոզված է հետազոտողը, կարևոր նշանակություն ունի ձայների սարկավազյան դասակարգումը, որը նա կառուցում է հիմք ընդունելով նախորդ տեսական մտքի նվաճումները՝ հատկապես Դավիթ Անհաղթի դրույթները: Նա նշում է, որ առանձնացնելով կենդանական և մարդկային ձայները, Սարկավազը առաջադրում է կարևոր խնդիր՝ գեղարվեստական ճանաչողության և ընկալման հարցը: Խնդիրն այն է, որ եթե հնչող երաժշտությունը որոշակի բովանդակության կրող է, ապա ընկալման ընթացքում այն յուրացվում է միանշանակ ձևով, իսկ եթե բովանդակություն չունի, ապա ընկալվում է ամեն մի մարդու լսողությանը համապատասխան: Ըստ Սարկավազի՝ ստեղծելով մի նոր մակարդակ, որն արտահայտում է որոշակի իմաստ և էսթետիկական բնույթով օժտված բովանդակություն, ձայների միացումը ենթարկվում է որոշակի կանոնների ու օրինաչափությունների: Միրումյանը բացահայտում է, որ հայ մտածողը հետևում է Արիստոտելի աշակերտ, երաժշտության հայտնի տեսաբան Արիստոքսենի տեսակետին, ով անհրաժեշտ է համարել բանական և զգայական գործոնների միավորումը [27]: Իսկ Արիստոքսենի հայեցակարգի վերականգնումը, հետազոտողի կարծիքով, «խոշոր գիտական ծառայություն է և վկայում է երաժշտական տեսության և էսթետիկայի բնագավառում մեր միջնադարյան մտածողի խորահմտության, քննադատական մտքի և խոր գիտելիքների մասին» [28]: Իրոք, ճանաչելով հնչող երաժշտության ինքնակա էսթետիկական նշանակությունը, տեքստի նկատմամբ դրա որոշակի անկախությունն ու ազատությունը, Սարկավազը դրանով իսկ «կանխատեսում է արևմտաեվրոպական Վերածնունդի մի շարք կարևոր ու հիմնարար գաղափարներ» [29]:

Այսպիսով, կրկին շեշտադրենք, որ անդրադառնալով որևէ հարցի վերլուծությանը, Կարլեն Միրումյանը ելնում է պատմահամեմատական վերլուծության մոդելից և համապարփակության սկզբունքից: Դա նրան հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն ներկայացնել քննարկվող հարցը, բացահայտել դրա գաղափարական հիմքերն ու պատճառները, ցույց տալ այն պատմական իրավիճակը, որը նպաստում է քննարկվող հարցի ի հայտ գալուն և որոշակի դրսևորմանը: Ահա այն նորն ու արժեքավորը, որը Կարլեն Միրումյանը ներմուծել է արդի գեղագիտական մտքի գանձարան, նպաստելով դրա հետագա զարգացմանը:

Ավարտելով շարադրանքը, հավելենք, որ դեռևս 2006թ. Կ. Միրումյանը ցավով նշում էր, որ Հայաստանում տիրող արժեքաբանական քաոսի պատճառով հայ մշակույթ են ներխուժել գեղագիտական օտար արժեքներ, որոնց նպատակն է «ազգային արժեքների մոռացության տալը»: Սակայն նա համոզված էր, որ վաղ թե ուշ արդիական կդառնա հոգևոր արժեքների սեփական համակարգի ստեղծումը, և ականավոր հայագետների աշխատություններն ամբողջությամբ պահանջված կլինեն [30]: Համոզված ենք, որ Կ. Ա. Միրումյանի աշխատություններն անպայմանորեն կհայտնվեն այդ մշտապես պահանջված երկերի շարքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1984, էջ 178: Տես նաև Միրումյան Կ.Ա., Հովհաննես Սարկավագի Էսթետիկայի գաղափարատեսական ակունքները: Հայ Էսթետիկայի մտքի պատմությունից: Տարեգիրք 1986, Եր., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1986, էջ 29:
2. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1984, էջ 179:
3. *Դուլիթ Անյադթ*, Սահմանք իմաստասիրութեան, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս.Ս. Արևշատյանի, Եր., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1980, էջ 92:
4. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, էջ 205:

5. Նույն տեղում, էջ 207:
6. Նույն տեղում, էջ 184:
7. Նույն տեղում, էջ 185:
8. Տես՝ *Արիստոտել*, Պոետիկա (թարգ. հին հուն. Ա. Կարապետյանի), Եր., Հայպետհրատ, 1955, էջ. 154–155:
9. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, էջ 187:
10. Նույն տեղում, էջ 189:
11. Տե՛ս *Анресян. Г.З.* Из истории армянской эстетической мысли, кн. 1. Ер.: «Советакан грох», 1973. С. 139.
12. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, էջ 194:
13. Նույն տեղում, էջ 197:
14. Նույն տեղում, էջ 198: Տե՛ս նաև՝ Յովհաննու Սարկավազի Իմաստասիրի վարդապետի ասացելալ Բան իմաստութեան... առ ձագն, որ կոչի սարիկ: <https://hy.wikisource.org/wiki/>
15. Նույն տեղում, էջ. 199–200:
16. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, էջ 223:
17. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավազի էսթետիկայի գաղափարատեսական ակունքները: Հայ էսթետիկայի մտքի պատմությունից, Տարեգիրք 1986, Եր., ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1986, էջ 52:
18. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, էջ 201:
19. История эстетики. Памятники мировой эстетической мысли в пяти томах. Т. 1, М., Академия художеств СССР, 1962. С. 263.
20. *Мирумян К.* Проблема соотношения литературного текста и мелодии в средневековой музыкальной эстетике. Հայ էսթետիկայի մտքի պատմություն, գիրք 7, Եր., «Գիտություն», 2008, էջ 26–27:
21. Музыкальная эстетика западноевропейского средневековья и Возрождения. М.: «Музыка», 1966. С. 29.
22. Նույնը, էջ 182:
23. *Мирумян К.* Проблема соотношения литературного текста и мелодии в средневековой музыкальной эстетике. Հայ էսթետիկայի մտքի պատմություն, գիրք 7, Եր., «Գիտություն», 2008, էջ. 33–34:
24. *Мирумян К.* О соотношении вокальной и инструментальной музыки в эпоху Средневековья. Հայ էսթետիկայի մտքի պատմություն, գիրք 6, Եր., «Գիտություն», 2006, էջ. 141– 143:
25. Նույն տեղում, էջ 143:
26. *Միրումյան Կ.Ա.*, Հովհաննես Սարկավազի աշխարհայացքը, էջ 209:
27. Տե՛ս նույն տեղում, էջ 213:
28. Նույն տեղում, էջ 214:
29. Նույն տեղում, էջ 215:

30. Նույն տեղում, էջ 215:

31. Տե՛ս *Мирумян К.* Роль трудов Я.И. Хачикяна в становлении армянской историко-эстетической науки. Հայ էսթետիկայի մտքի զարգացումը, գիրք 6, Եր., «Գիտություն», 2008, էջ. 28–29:

ПРОЦЕСС РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ЭСТЕТИЧЕСКОЙ МЫСЛИ В РАБОТАХ КАРЛЕНА МИРУМЯНА

С.С. Арзуманян

Институт философии, социологии и права НАН РА

Кандидат философских наук,

доцент

АННОТАЦИЯ

В статье представлен процесс развития армянской эстетической мысли в работах доктора философии, профессора Карлена Мирумяна. Подчеркивается весомый вклад К. Мирумяна в область эстетики, в частности, важность использования историко-сравнительного метода исследования некоторых проблем, а также научная ценность и значимость особого характера его анализа, нацеленного на всесторонность. С этой точки зрения большое внимание уделяется фундаментальному исследованию, посвященному анализу различных проявлений мировоззрения известного армянского средневекового философа, ученого, поэта, летописца Ованеса Имастасера Саркавага, в котором важное место занимают различные вопросы эстетики и теории искусства. Среди них определяющими являются проблема воспроизведения действительности в искусстве – проблема мимесиса, признание роли воображения в процессе художественного творчества, подчеркивание важности природного таланта и значимости обучения, приобретения необходимых знаний для творцов искусства, выделение функций искусства, его общественной роли в качестве средства воспитания, а также выявления социальных противоречий. Большую ценность представляют также исследования К. Мирумяна, посвященные ряду фундаментальных проблем музыкальной эстетики. В центре его особого внимания – вопросы соотношения слова и мелодии, вокальной и инструментальной музыки.

Ключевые слова: Карлен Мирумян, эстетика, Ованес Саркаваг, мимесис, воображение, вокальная музыка, инструментальная музыка.

THE PROCESS OF DEVELOPMENT OF ARMENIAN AESTHETIC THOUGHT IN THE WORKS OF KARLEN MIRUMYAN

S. Arzumanyan

Institute of Philosophy, Sociology and Law of the NAS RA

Ph.D. in Philosophy

Associate Professor

ABSTRACT

The article presents the process of development of Armenian aesthetic thought in the works of Doctor of Philosophy, Professor Karlen Mirumyan. The significant contribution of K. Mirumyan to the field of aesthetics is emphasized, in particular the importance of using the historical-comparative method of studying certain problems, as well as the scientific value and significance of the special nature of his analysis, aimed at comprehensiveness. From this point of view, much attention is paid to fundamental research devoted to the analysis of various manifestations of the worldview of the famous medieval philosopher, scientist, poet, chronicler Hovhannes Imastaser Sarkavag, in which various issues of aesthetics and art theory occupy an important place. Among them, the defining ones are the problem of reproducing reality in art – the problem of mimesis, recognition of the role of imagination in the process of artistic creativity, emphasis on the importance of natural talent and the significance of training, acquisition of the necessary knowledge for creators of art, highlighting the functions of art, its social role as a means of education, as well as identifying social contradictions. Of great value are also the studies of K. Mirumyan, devoted to a number of fundamental problems of musical aesthetics. In the center of his special attention are the issues of the relationship between word and melody, vocal and instrumental music.

He pays special attention to the issues of the relationship between words and melody, vocal and instrumental music.

Keywords: Karlen Mirumyan, aesthetics, Hovhannes Sarkavag, mimesis, imagination, vocal music, instrumental music.

УДК 32

**ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ
ԵԼԱԿԵՏԵՐԻ ԴԵՐՈ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ
(XIX Դ. 2-Դ ԿԵՄԻՑ XX Դ. ՄԿԻԶԲԸ)**

Ս.Բ. Մարգարյան

*Երևանի «Գլաձոր» համալսարան
փիլիսոփայական գիտությունների թեկնածու., դոցենտ
margaryansos@yandex.com*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում XIX դ. 2-րդ կեսին և XX դ. սկզբին արևմտահայության և օսմանցի թուրքերի քաղաքական մշակույթների անհամատեղելիության փաստը բացատրելու համար ելակետ ենք ընտրել Կ. Միրումյանի առաջ քաշած «ազգային կեցություն» հասկացությունն ու մշակութային գործոնի «փոխհատուցման» գործառույթի գաղափարը, որոնց միջոցով փորձել ենք ցույց տալ, որ մեկ քաղաքական համակարգում գտնվող երկու էթնիկ խմբերի քաղաքական մշակույթների հիմքում ընկած են տարբեր արժեհամակարգեր: Թուրքերի ելակետը իրենց հոգեկերտվածքին ու կենցաղին հարմարեցված իսլամական ավանդույթներն էին, որոնք այլ էթնիկ խմբերի հետ շփումը միայն իրենց գերիշխանության ձևով են պատկերացրել: Ուստի նրանց ձեռնարկած քաղաքական արդիականացումը մասամբ հայելային, մասամբ էլ նմանակում լինելով արդյունավետ չէր: Մինչդեռ արևմտահայության ընտրանին ձգտել է օգտագործել ազատության գաղափարի հետ սերտաձաձ հոգևոր մշակույթի փոխհատուցման գործառույթը՝ ինչ-որ չափով լրացնելու համար սեփական պետական-քաղաքական գործոնի պակասը և հիմքեր ստեղծելու ազգային պետականության վերականգնման համար:

Հիմնաբառեր՝ ազգային կեցություն, առկա կեցություն, կեցություն-նպատակ, քաղաքական մշակույթ, քաղաքական

ինքնագիտակցություն, մշակույթի փոխհատուցման գործառույթ:

Հայտնի իրողությունն է, որ Էթնիկ խմբերի քաղաքական փոխհարաբերությունները խարսխվում են կոնկրետ շահերի վրա, իսկ քաղաքական փոխհարաբերությունների մշակույթը պայմանավորված է նրանց պատմամշակութային ավանդույթներով, որդեգրած արժեհամակարգերով, իրավաքաղաքական գիտակցության մակարդակով, բարոյական սկզբունքներով և կոնկրետ անհատների ու խմբերի հոգեկերտվածքով: XIXդ. 2-րդ կեսին և XXդ. սկզբին Օսմանյան կայսրությունում հայ և թուրք ժողովուրդների քաղաքական շփումների յուրահատկությունների համարժեք ըմբռնման համար նպատակահարմար ենք համարում հիմք ընդունել պրոֆեսոր Կ. Միրումյանի առաջ քաշած **ազգային կեցություն** ելակետային հասկացությունը, ինչպես նաև դրա հետ կապված հայ ազգային մտքի ուսումնասիրության առանձնահատկությունները:

«Ազգային կեցություն» հասկացությունը հայոց ցեղասպանությանը նախորդող ժամանակի պետականագուրկ հայության քաղաքական կյանքի վերլուծության ու արժևորման հարցում հնարավորություն է ընձեռնում արևմտահայոց սոցիալ-քաղաքական ու հոգևոր մշակութային կյանքը դիտարկել որպես Օսմանյան կայսրության մեջ առանձին ազգային երևույթ: «Ազգային կեցությունը նյութական և հոգևոր գոյացումների ամբողջությունն է, որոնք կազմում են ազգի գոյատևման և գործառնության հիմքը»[1]: Այդ գոյացումներն են՝ սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական պայմաններն ու հոգևոր-մշակութային գործունեության նյութականացված ձևերը:

Ազգային կեցության արտացոլումը ազգային գիտակցությունն է, որի մակարդակներն են ազգային հոգեբանությունը, գիտակցությունը և ինքնագիտակցությունը: Ինքնագիտակցության մակարդակում ձևավորվում են տեսություններ,

հայեցակարգեր, տեսական մոդելներ, որոնք ուղղված են անհատի ու հասարակական տարաբնույթ հարաբերությունների կատարելագործմանը: Ազգային ինքնագիտակցության դրսևորումներից է ազգային գաղափարախոսությունը, որտեղ համադրողն ու ուղղորդողը **քաղաքական ինքնագիտակցությունն** է: Հենց այդ ազգային-քաղաքական ելակետն էլ գործնական բնույթ է հաղորդում գաղափարախոսության [2]:

Կ. Միրումյանը ազգային կեցության երկու մակարդակ է առանձնացնում՝ գոյություն ունեցողը որպես առկա կեցություն, իսկ ցանկալին՝ կեցություն-նպատակ: Առաջինից դեպի երկրորդը ընթացքի ուղղորդողը ազգային գաղափարախոսությունն է՝ որպես ներկային ու ապագային ուղղված ինքնագիտակցության յուրահատուկ դրսևորում: Իսկ եթե գաղափարախոսությունը դիտարկենք կեցության երկու մակարդակների տեսանկյունից, ապա այն կարելի է բնութագրել որպես հայացքների, գաղափարների, պատկերացումների, իդեալների ամբողջություն, որն ուղղված է առկա կեցության պահպանմանը, ինչպես նաև դրա մասնակի կամ ամբողջական վերափոխմանը, իսկ արևմտահայության համար՝ կեցություն-նպատակի կենսագործմանը:

Հայտնի իրողություն է, որ Հայաստանը նվաճվել է Օսմանյան կայսրության կողմից և հայ ժողովուրդը հայտնվել է այդ պետության կազմում: Բնական է, որ պետականության կորստի պատճառով հայ ժողովուրդը դարձել է օտար հասարակության մաս և ենթարկվում էր նրանում գործող պետական-քաղաքական, հասարակական-տնտեսական, իրավական հարաբերություններին: Մակայն, ինչպես արդարացիորեն Կ. Միրումյանն է գրում՝ «...երկրի ռազմա-քաղաքական նվաճումն անմիջապես չի հանգեցնում ավանդաբար ձևավորված հարաբերությունների բոլոր ձևերի ոչնչացմանը: Դա կախված է բազմաթիվ գործոններից, այդ թվում հպատակ ժողովրդի ազգային ավանդույթների կայունությունից և ուժից, հոգևոր

մշակույթի մակարդակից և առհասարակ հոգևոր ներուժից, ազգային գիտակցության ու ինքնագիտակցության մակարդակում ազգային պետական-քաղաքական կառուցվածքների կարևորության և պատմական փորձի իմաստավորումից, ազգի հոգևոր և քաղաքական ակտիվությունից» [3]:

Ելնելով այն կանխադրույթից, որ պետականագրկված ժողովրդի կյանքում հոգևոր-մշակութային երևույթները **առավել կարևոր** դեր են խաղում, պատմական փորձով հիմնավորված է Կ. Միրումյանի այն պնդումը, թե «Որոշ ժողովուրդների՝ կյանքում մշակութային գործոնը հաճախ իրականացրել է այլ՝ քաղաքական, գաղափարախոսական և ուրիշ գործառույթներ՝ լրացնելով դրանց բացը ժողովրդի կյանքում, այսինքն՝ ձեռք է բերել «փոխհատուցման» գործառույթ: Ընդ որում՝ նկատի է առնվում ոչ թե պատմական գործընթացի իրական-օբյեկտիվ հոսքը, որի ընթացքում տեղի է ունենում բնական փոխազդեցություն ու փոխներգործություն այսպես կոչված վերնաշենքային երևույթների՝ հասարակական ու ազգային գիտակցության տարբեր ձևերի միջև, այլ **պետականության աստիճանի բարձրացված, իսկ պետականության և քաղաքական անկախության բացակայության պայմաններում ազգային քաղաքականության վերածված մշակութային սկզբի գիտակցված շեշտադրումը** (ընդգծումը հեղինակինն է՝ Մ.Մ.)» [4]: Դա վերաբերում է պետականությունն ու քաղաքական անկախությունը կորցրած ժողովուրդներին, «որոնք տիրապետում են հզոր ներքին էներգիայի, որն ունակ է ոչ միայն փոխհատուցել անկախության բացակայությունը, այլև ստեղծել (ոչ թե միայն պահպանել) մշակութային արժեքներ՝ իրենց նվաճումներով հարստացնելով համաշխարհային մշակույթի գանձարանը: Այս դեպքում խոսքը վերաբերում է **մշակույթի քաղաքական հայեցակարգին և ոչ մշակութային քաղաքականությանը կամ մշակույթի ոլորտում քաղաքականությանը**:

Այդպիսի հայեցակարգ ստեղծել, մանավանդ գործնականում իրականացնել կարող է այն ժողովուրդը, որը սոցիալ-մշակութային ու քաղաքական զարգացման որոշակի մակարդակում է և ունի սոցիալական ու ազգային գիտակցության արդեն տարբերակված ձևեր (ընդգծումը հեղինակինն է՝ Ս. Մ.)»։ [5] Սա լիովին վերագրելի է նաև Օսմանյան կայսրության տիրապետության տակ հայտնված հայությանը, որի անցյալ ու ներկա ընտրանու ստեղծած ազգային գիտակցության առանցքային բաղադրիչներից մեկն էլ մշակույթի քաղաքական հայեցակարգն է։

Կարծում ենք՝ հայոց ազգային գաղափարախոսության գործնական դրսևորում կամ գոնե ինչ-որ աստիճանի ինստիտուցիոնալացման մակարդակ կարելի է համարել 1863թ. սուլթանի վավերացրած արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, որի մեջ արտացոլված գաղափարները արևմտահայոց բազմաթիվ պարբերականների միջոցով, հատկապես 1860–1863թթ. սահմանադրական պայքարի ընթացքում, արևմտահայության շրջանում զանգվածային գիտակցության են վերածվել։ Թեև ազգային կյանքը սահմանադրական սկզբունքների վրա վերակառուցելու արևմտահայերի ձգտումները խափանվում էին գերիշխող քաղաքական համակարգի կողմից, սակայն դրանք կարևոր էին **թե՛ եվրոպական գաղափարաքաղաքական արժեքների յուրացման ու բռնապետական վարչակարգի պայմաններում այդ արժեքները ազգային հաստատությունների ու կառուցակարգերի մեջ ներդնելու, թե՛ պարտադրված քաղաքական համակարգում որպես հարաբերականորեն ինքնուրույն քաղաքական ենթահամակարգ կայանալու միտումով և ապագայում անկախ ազգային պետականության վերականգնման իդեալով**։

Փաստորեն, օսմանահպատակ արևմտահայ ընտրանին իր առջև խնդիրն էր դրել սեփական ժողովրդի գիտակցության

մեջ գոյապահպանության ու հոգևոր-մշակութային ինքնության պահպանմանը նպաստող գաղափարախոսության արմատավարման ու այն վարքի ծրագրի վերածելու միջոցով հիմքեր ստեղծել քաղաքական անկախության ու ազգային պետականության վերականգնման համար: Թուրքական բռնատիրության պայմաններում այդ խնդրի լուծման հիմնական միջոց էր դարձել ազատության գաղափարի հետ միահյուսված հոգևոր մշակույթը, ինչպես նաև արտաքին ուժերի օգնության որոնումները:

Ազատության գաղափարի և ազգային-ազատագրական շարժման տեսական հիմնավորման ձևավորված ավանդույթը էթնիկ առասպելների, գրույցների, «Մասնա ծոեր» դյուցազնավեպի ու այլ եղանակներով, վաղ միջնադարից ուշ միջնադարին փոխանցվելով, տարբեր իրավիճակներում վերածվել է նաև գործնական շարժման: Հայոց պատմությունից հայտնի է արաբական, սելջուկ-թուրքական, մոնղոլական, պարսկական ու թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը՝ ելակետ ունենալով «անձնիշխանության» (կամքի ազատության), «բնական օրենքի» գաղափարները, ինչպես նաև գործնական ձեռնարկումները՝ ազատագրվելու և անկախ պետականությունը վերականգնելու համար՝ ինչպես ազատագրական զինված պայքարի միջոցով, այնպես էլ այլ պետությունների օժանդակությամբ:

Նոր ժամանակներում հայոց ազատագրական շարժումը նոր վերելք ապրեց՝ ինչպես օտար միջավայրում ձևավորված հայկական գաղթօջախներում, այնպես էլ բնօրրանում: 1720–1730-ական թվականներին զինված պայքարի դուրս եկավ հայության մի զգալի հատված, մասնավորապես Արցախն ու Սյունիքը, իսկ պայքարի գաղափարական ելակետերը ավելի են հստակեցվում XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի հայ լուսավորականության շրջանակներում: Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի համար այս

հարցում ելակետը «բնական օրենքն» է. «Այս գաղափարը առաջատար էր հայ լուսավորչականության ամբողջ փիլիսոփայական և հասարակական-քաղաքական տեսության համար» [6]: Այսինքն՝ Աստծու կողմից մարդիկ ստեղծվել են ազատ, ազատությունը մարդկանց բնական իրավունքն է, բռնությունը հակաբնական է, ուստի մարդիկ այն կարող են վերացնել նաև բռնի միջոցներով ու վերականգնել իրենց ազատությունը:

Այդ ամենը առավել ցայտուն դրսևորվեց ու վերելք ապրեց XIX դարում, երբ ազգային անկախ պետականության վերականգնման խնդիրը ձևակերպվեց ու ազատագրական պայքարը առաջնորդող հստակ գիտակցված կեցություն-նպատակի վերածվեց՝ ինչպես մտավորական շրջանակների, այնպես էլ զանգվածային գիտակցության մեջ: Այսպիսով՝ ազատագրական պայքարը թևակոխում է նոր՝ ձևավորված գաղափարախոսությամբ ուղեկցվող և հստակ գիտակցված գործնական պայքարի փուլ: Արդյունքում ձևավորվում է իշխող շրջանակների հետ շփման քաղաքական վարքի ձև ու գիտակցված քաղաքական մշակույթ:

Հետազոտողները քաղաքական մշակույթի մակրոմակարդակը կապում են նաև հոգեբանական կողմնորոշումների, ինչպես նաև գիտելիքների, զգացմունքների ու գնահատականների հետ [7]: Քաղաքական մշակույթը հասարակության, ժողովրդի մշակութային միջավայրի քաղաքական չափումն է, ժողովրդի վարքի բնութագիրը, նրա քաղաքակրթական զարգացման տարբերիչ գիծը [8]: Բացի այդ՝ քաղաքական մշակույթը քաղաքական իշխանության ոլորտում տվյալ ժողովրդի ավանդույթների դինամիկայի, նրա ոգու արտացոլումն է և ինտեգրող դեր է խաղում տարբեր խավերի, ժողովրդի ու պետության համար: Այն քաղաքացիների ակտիվության կողմնորոշիչն է: Կարող ենք փաստել, որ քաղաքական

մշակույթը տվյալ ժողովրդի արժեհամակարգի, հոգեկերտվածքի ու վարքի մոդելների դրսևորումն է քաղաքական կյանքում:

Պատմության ընթացքում յուրաքանչյուր ժողովուրդ իր կյանքի պայմաններից բխող մշակութային ավանդույթներ է ստեղծել: Իսկ մշակույթների բազմազանությունը Երկիր մոլորակի հարստությունն է: Մակայն այդ հարստությունը պահպանելու համար անհրաժեշտ է ոչ միայն առանձին մշակույթների զարգացման անընդհատությունն ապահովել ժառանգորդման ու նորարարության միջոցով, այլև **հանդուրժողականության բավականաչափ պաշար** կուտակել մշակույթների երկխոսության ու փոխհարստացման համար:

Հաշվի առնելով քաղաքական մտածողության ու քաղաքական վարքի ձևերի վերարտադրության գործում պետության և մյուս քաղաքական ինստիտուտների հատուկ դերը՝ անհրաժեշտ ենք համարում նկատի ունենալ Օսմանյան կայսրությունում **պաշտոնական ու իրական քաղաքական մշակույթների գուգահեռ գոյության իրողությունը**: Մա ենթադրում է քաղաքական համակարգի ընկալման **հանրահռչակված և իրականում գործող համակարգերի** մակարդակների առկայությունը: Կարծում ենք՝ նման երկատվածության հիմքը արժեքային-քաղաքակրթական է, քանի որ Օսմանյան կայսրության և նրա հպատակ քրիստոնյաների ու եվրոպական պետությունների արժեհամակարգերը անհամատեղելի էին, ուստի եվրոպական պետությունների հետ պաշտոնական հարաբերությունների անհրաժեշտության գիտակցումը կայսրության քաղաքական ընտրանու մոտ նման դիրքորոշում էր ձևավորել:

Ցանկության դեպքում, անշուշտ, պաշտոնականն աստիճանաբար կարող էր ներագդել իրականի վրա, իր ծրագրավորման, ինտեգրման, քարոզչության ու այլ գործառնությունների միջոցով կարող էր դրական փոփոխություններ առաջացնել

իրական քաղաքական մշակույթի մեջ և կայսրության էթնիկ խմբերի միջև շփումների համար գոնե հանդուրժողականության միջավայր ստեղծել: Բայց կառավարող ռազմաքաղաքական ընտրանին նման հումանիստական նպատակներ չուներ. չէ՞ որ նրա ներկայացուցիչներն էլ էին գերիշխող արժեհամակարգի կրողը կամ կաշկանդված էին այդ արժեհամակարգով: Ակնհայտ է, որ այս դեպքում արդեն Օսմանյան կայսրության վաղուց հռչակված արդիականացման փոխարեն իրականում գործ ունենք ընտրովի հայելային արդիականացման, իսկ վերջնական արդյունքում՝ առավելապես **արդիականացման նմանակման** հետ, քանի որ ծայրահեղ անհամաչափություն էր առաջացել պետական կյանքի տարբեր ոլորտների զարգացման տեմպերի միջև:

Այդ է պատճառը, որ ռեֆորմների կողմնակիցներին ոչ միշտ էր հաջողվում պահպանողականների դիմադրությունը հաղթահարել: Օրինակ՝ 1869թ. Թուրքիայում հրապարակված Քաղաքացիական օրենսգրքի դեպքում պահպանողականները հաղթեցին. օրենսգիրքն ամբողջությամբ կառուցվեց իսլամական նորմերի վրա. այն արևմտյան քաղաքացիական իրավունքի ազդեցության ոչ մի հետք չուներ: Թեև որոշ դրական տեղաշարժ կատարվեց դատական համակարգի բարեփոխման ընթացքում, սակայն շարիաթական դատարանի գերիշխող դերը պահպանվեց: Արդյունքում՝ յուրաքանչյուր կրոնական համայնք իր սոցիալ-մշակութային կյանքը կարգավորում էր սեփական իրավաբարոյական նորմերով: Այդ վիճակը Թուրքիային խանգարում էր ոչ միայն իրավահավասարություն հաստատել, այլև միասնական քաղաքական համակարգ ստեղծել [9]:

Պատմական իրողություն է, որ թուրքերն արաբներից ընդունել էին և՛ իսլամը, և՛ պետական-քաղաքական կյանքի կազմակերպման շատ ձևեր: Օսմանյան կայսրության քաղա-

քական համակարգը ձևավորվել է արաբական ու բյուզանդական կայսրությունների փլատակների վրա, իսկ նրա հոգևոր-մշակութային համակարգը՝ արաբական ու քրիստոնեական (հայկական, հունական) մշակութային միջավայրերում, որոնք խորթ էին իրենց՝ դեռևս պահպանված քրչվորական մտածելակերպին ու բարքերին: Դավանակիցներին համախմբելու ու նրանց միջավայրում իր ռազմավարչական գերիշխող դիրքերը հավերժացնելու համար օսմանյան ավագանին իսլամը հարմարեցնում է թուրքերի դարավոր ավանդույթներին ու նվաճողական ձգտումներին, որն ապահովում է թուրք էթնոսի ռազմաքաղաքական գերիշխանությունը, սակայն նրան **անընկալունակ է դարձնում այլոց առաջադիմական արժեքների հանդեպ**: Այդ դիրքորոշումն աստիճանաբար կաշկանդում է կայսրության սոցիալ-մշակութայինն առաջընթացն ու քաղաքական համակարգի զարգացումը:

Առաջընթացի արգելակների հիմքը արժեքային կողմնորոշման մեջ էր, որոնք հաղթահարելու գործում կարևոր դեր կարող էր խաղալ մտավորականությունը: Սակայն վերջինիս ներկայացուցիչ՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին «Թուրքական շեքսպիր» հռչակված Բանաստեղծ Մեհմեդ Էմինը, բոլոր թուրքերին նվաճումներով միավորվելու կոչ անելով, գրում է. «Ճամփին վրա հեղափոխման ծաղիկ չաճիր առանց արյան» [10]: Այս դիրքորոշումը թուրքական ցեղերի, մանավանդ օսմանցի թուրքերի և՛ անցած ուղին է, և՛ ապագային միտված հակամշակութային վեկտորը, որի արդյունքը պետք է լիներ էթնիկ գտումն ու ցեղասպանությունը: Թեև ընդունված է լայն առումով մշակույթ անվանել մարդկային ողջ ստեղծագործության արդյունքը, բայց քանի որ մշակույթն այնքան սերտորեն է կապված արժեքի հետ, որ հաճախ կոչվում է արժեքների ամբողջություն կամ մարմնավորված արժեք [11], այդ պատճառով օսմանցի թուրքերի գաղափարախոսության մեջ տեղ գտած ռազմատենչ, նրանց կողմից հպատակեցված

ու քաղաքակիրթ ժողովուրդների արժեհամակարգերի դեմ ուղղված դիրքորոշումն անվանում ենք հակամշակութային:

Առհասարակ արժեքային կողմնորոշիչները, քաղաքական գործունեության համար ունեցած իրենց նշանակալիության տեսանկյունից, մարդկանց գիտակցության մեջ արտացոլվում են աշխարհայացքային, ինչպես նաև քաղաքացիական ու քաղաքական մակարդակներում: Աշխարհայացքային մակարդակում քաղաքական իրողություններն ու գործընթացները մարդիկ գնահատում են իրենց անհատական գաղափարների ու պատկերացումների տեսանկյունից, հատկապես առօրյա բարոյական պատկերացումների տեսանկյունից փորձում են հասկանալ, թե ինչպիսի դեր կարող է խաղալ քաղաքականությունը իրենց կենսական նպատակների իրականացման գործում: Այս հարցում իսլամադավան թուրքերի մոտ վճռական դեր են խաղում համայնքի կրոնաբարոյական պատկերացումները:

Քաղաքացիական կողմնորոշիչների մակարդակում Օսմանյան կայսրությունում գերիշխող թուրքը սուլթան-խալիֆի հպատակ համայնքի անդամ է՝ հպատակային քաղաքական մշակույթի կրող, որը միաժամանակ արտոնյալ կարգավիճակով է օժտված ոչ մահմեդական համայնքների նկատմամբ: Բուն քաղաքական պատկերացումների մակարդակում համայնքի անդամի դիրքորոշումը քաղաքական իրողությունների ու գործիչների նկատմամբ խմբային դիրքորոշմամբ է պայմանավորված, հետևաբար՝ փոփոխվող քաղաքական իրողությունների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը պայմանավորված է խմբային գիտակցությամբ, մինչդեռ վերջինս կաշկանդված է աշխարհայացքային կողմնորոշիչների կայունությամբ:

Եթե քրիստոնեական երկրներում հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները, չնայած առանձին ժամանակներում նրանց ցուցաբերած հավակնություններին, առանձնացված

էին, մինչդեռ իսլամական երկրներում գերիշխել է աստվածապետական համակարգը: Մահմեդական հոգևորականությունը իրականացնում էր ն՝ հոգևոր, ն՝ աշխարհիկ գործառույթներ: Նրա ձեռքում էր ն՝ կենցաղը, ն՝ կրթությունն ու դատական համակարգը: Իսլամի այդ դերը սահմանափակում էր առաջընթացի հնարավորությունները (նույնիսկ սուլթան-խալիֆն ազատ չէր իսլամ հոգևոր դասի ու թուրք մելեռանդ ամբոխի վերահսկողությունից):

Դիտարկելով Օսմանյան կայսրությունում ձևավորված քաղաքական մշակույթի և հատկապես քաղաքական ինքնագիտակցության մեզ հետաքրքրող կտրվածքի ընդհանուր ուրվապատկերը՝ նախապես արձանագրենք, որ XIX դարի երկրորդ կեսին ու XX դարի սկզբին նրանում ստեղծված հոգեմտավոր ու քաղաքական իրականության մեջ գերիշխողը զինվորական մտավորականությունն էր: Իսկ դա պայմանավորված է հասարակության ու հատկապես պետության կյանքում զինվորականության խաղացած դերով և թուրք ժողովրդի կրթական կյանքի յուրօրինակությամբ:

Թուրքական հասարակության մեջ գերիշխողը հոգևոր կրթությունն էր: Այնտեղ առաջին աշխարհիկ հանրակրթական դպրոցը բացվել է 1839-ին Կ. Պոլսում, որտեղ 1841թ. ընդամենը 40 սովորող կար: Աշխարհիկ կրթության առաջին օջախները զինվորական դպրոցներն էին, որոնք բացվել էին դեռևս Սելիմ III-ի (1789–1807) ժամանակ՝ եվրոպական տիպի բանակ ստեղծելու նպատակով: Այնուհետև միմյանց հետևից բացվում են ծովային ու ցամաքային ճարտարագիտական դպրոցներ (12): Մինչդեռ հպատակ քրիստոնյաների, այդ թվում նաև հայերի, կրթական համակարգերը շատ ավելի զարգացած ու հարուստ ավանդույթներով էին հայտնի: «Նոր օսմանները» տիաճությամբ էին ընդունում այդ փաստը, որի իրական պատճառը հասկանալու փոխարեն, դա բացատրում

Էին պետականորեն քրիստոնյաների համար ստեղծված գերադասելի պայմանների մասին առասպելով:

Փաստորեն թուրք մտավորականության մեջ գերակշռում էր զինվորականությունը, որն էլ պայմանավորել է ռազմավարական մտածողությունը և դրա ծնած նախագծերի էությունն ու գործադրման եղանակները: Երիտթուրքական շարժման հենարանն ու 1908թ. հեղաշրջման կազմակերպիչը նույնպես զինվորականությունն էր: Ուստի բնական է, որ վերջինիս համար հպատակների հետ քաղաքական հարաբերությունները կարգավորելու գլխավոր միջոցը կարող էր լինել զենքն ու դրա գործադրման սպառնալիքը:

Շատ հետազոտողների կարծիքով՝ իսլամը ոչ միայն կրոն է, այլև ապրելակերպ, որը թափանցել է հավատացյալի հոգեկերտվածքի մեջ: Բնչպես հայտնի միջազգայնագետ Էնդրյու Հեյվուդն է իր «Գլոբալ քաղաքականություն» գրքում նշում, իսլամն ուղղակի միայն կրոն չէ և երբեք էլ այդպիսին չի եղել: «Այն ավելի շուտ կենսակերպ է, որն ուղեկցվում է անհատների, ազգերի ու պետությունների բարոյական, քաղաքական և տնտեսական վարքի մասին կոնկրետ ցուցումներով» (13):

Թյուրքական ցեղերի քոչվորական կենսակերպի ու նվաճողական գործելակերպի համար **իսլամը վերածվում է մարտնչող գաղափարախոսության, որը, միահյուսվելով արդեն ձևավորված ավանդույթների ու կենցաղի հետ, դառնում է հզոր ու կործանարար ուժ իրենց արշավանքների ճանապարհին գտնվող քաղաքակրթությունների համար:** Ավանդական կենսակերպի ու նոր գաղափարախոսության սերտաճման շնորհիվ է, որ շարիաթը նաև աշխարհիկ իրավանորմերի դեր է խաղացել: Ահա թե ինչու իսլամի վրա հենված հասարակական-քաղաքական կյանքը մինչև այժմ որոշ էթնիկ խմբերի մոտ խիստ դժվար է վերակառուցվում:

Պատճառն այն է, որ այդպիսի երկրներում հավասարությունը վերաբերել է միայն մահմեդականներին: Իսլամական

ավանդույթի համաձայն մահմեդականները իրենց նվաճած տարածքի բնակիչներին կարող են սպանել ու նրանց ունեցվածքը յուրացնել, բայց կարող են նաև հպատակվողների կյանքը խնայել, իրենց հովանավորության տակ վերցնել՝ հարկ վճարելու պայմանով: Մուհամեդ մարգարեն հրեաներին ու քրիստոնյաներին անվանել է «գրքի մարդիկ» (աստվածհայտնության գրքեր ունեցողներ): Ինչպես նշում է Է. Մասեն՝ թեև նրանց գրքերը «Ղուրանից հետո համարվում են իրենց ուժը կորցրածներ, այդուհանդերձ հրեաներին ու քրիստոնյաներին իրավունք են տվել համարվել «գրքի մարդիկ» (ահլ ալ քիթաֆ)՝ մարգարեներից մեկին հավատացողներ (համեմատել, օրինակ, Ղուրան, 5, 51)» [14]: Նրանց նույնիսկ թույլատրվում է իրենց ծեսերը կատարել հարկ վճարելու պայմանով՝ որպես նվաստացվածներ (Ղուրան, 9, 29): Հետագայում այդպիսի կարգավիճակ տրվեց զրադաշտականներին, բահրեյնցիներին, սամարացիներին ու այլոց:

Այդուհանդերձ հպատակված բնակչությունը կարող էր գոյատևել միայն ենթակայի կարգավիճակով (նրանք կոչվել են նաև «պայմանագրի մարդիկ»՝ զիմմի): Այդ էր պատճառը, որ մարդասիրական միջամտությունների օգնությամբ Օսմանյան կայսրությունում հանրային իրավունքի նորմերի միջոցով քրիստոնյա և մահմեդական բնակչության միջև իրավահավասարության հաստատման փորձերը միշտ ձախողվել են: Իսկ քրիստոնյա բնակչության համապատասխան ձգտումները թուրքերը համարել են իշխողի ու ենթակայի «պայմանագրի» խախտում, ինչն իրենց իրավունք է վերապահում սպանել ու թալանել [15]: Փաստորեն օսմանյան պետական համակարգի կայսերական ու աստվածապետական տարրերը սերտաճել ու հիմք են դարձել կիրառելու զանգվածային կոտորածը՝ որպես «պետական քաղաքականության գործիք», ինչը զսպիչ գործոնների բացակայության հետևանքով դարձել է շարունակական [16]:

Քանի որ քաղաքական մշակույթը նաև արժենորմատիվ համակարգ է, ուստի քաղաքական իրականությունը ձևավորվում է նրա հիմքի վրա [17]: Այդ համակարգն արտացոլում է սուբյեկտների սոցիալական փորձը, ավանդույթներն ու շահերը՝ քաղաքական հիմնարար արժեքների, դիրքորոշումների ու վարքի ձևերի տեսքով, որտեղ ելակետայինը արժեքներն են: Քանի որ նորմատիվ համակարգը ձևավորվում է արժեքների, հատկապես հիմնարար արժեքների, հիման վրա, իսկ արժեքային կոդմնորոշիչները կայուն են, ուստի քաղաքական մշակույթը ազդում է քաղաքական գործընթացների վրա և նպաստում հասարակության ավանդական քաղաքական կյանքի վերարտադրմանը՝ նույնիսկ քաղաքական վարչակարգի ու արտաքին քաղաքական գործընթացների փոփոխության պայմաններում: Կարծում ենք՝ գլխավորապես դրանով պետք է բացատրել XIX դարում Օսմանյան կայսրության ձեռնարկած ռեֆորմների անհաջողությունը:

Քաղաքական մշակույթի տարբեր ըմբռնումների համար ընդհանուրն այն է, որ այն քաղաքականության սուբյեկտների քաղաքակրթվածության աստիճանն է, քաղաքական վարքագծի ու գործելակերպի սկզբունքները յուրացնելու նրանց ունակությունը: Այսպիսով՝ քաղաքական մշակույթը որոշակի վարքագիծ ու գործելակերպ է՝ պայմանավորված տվյալ հասարակարգի բնույթով և քաղաքականության սուբյեկտների կողմից քաղաքական փորձի, նորմերի, ավանդույթների, դիրքորոշումների, գիտելիքների յուրացման աստիճանով, ինչպես նաև կոնկրետ իրավիճակում դրանք կիրառելու կարողությամբ:

Կարևորում ենք նաև Գ. Ալմոնդի այն կարծիքը, թե քաղաքական մշակույթն օժտված է որոշ «ինքնավարությամբ», բայց կապված է ընդհանուր մշակույթի հետ: Թեև քաղաքական համակարգը ձևավորվում է քաղաքական մշակույթի ներսում, բայց երկրորդն առաջինի հետ ամբողջությամբ չի

համընկնում, քանի որ քաղաքականության նկատմամբ կողմնորոշման մոդելները քաղաքական համակարգի սահմաններից դուրս են գալիս [18]: Այս դիրքորոշման օգտին է խոսում այն փաստը, որ չնայած երիտթուրքական քաղաքական համակարգը ձևավորվում է 1908թ. սահմանադրությամբ, որտեղ կայսրության բոլոր քաղաքացիները իրավահավասար էին հռչակվել, սակայն դա չխանգարեց, որ նրանք շարունակեն նախորդ վարչակարգի բռնաճնշումների, ոչ թուրքերի ուժացման և էթնիկ «գտման» քաղաքականությունը, ծրագրեն ու իրականացնեն Հայոց ցեղասպանությունը:

Այս դեպքում պաշտոնապես հռչակված քաղաքական համակարգը տարբերվում էր կառավարող ու վերջինիս սպասարկող ռազմաքաղաքական ընտրանու գործելակերպից և հատկապես թուրք ժողովրդի հոգեբանական դիրքորոշումից: Սրա մյուս պատճառը, մեր կարծիքով, ռեֆորմների հանդեպ Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ընտրանու ընտրովի, իսկ հաճախ նաև ձևական մոտեցումն էր: Հավելենք, որ համանման իրողություն է տեղի ունեցել Աբդուլ Համիդի օրոք: Որոշ թուրքագետների կարծիքով՝ «պատմության մոռյլ պարադոքս եղավ այն փաստը», որ 1876թ. թուրքական սահմանադրության հռչակումից հետո «Աբդուլ Համիդ II-ին հաջողվեց երկիրը վերածել ֆեոդալական-միահեծան ռեժիմի ամենից ավելի արյունահեղ չարագործությունների ասպարեզի» [19]: Եթե իրավիճակը դիտարկենք քաղաքական մշակույթի «ինքնավարության» տեսանկյունից, ապա կարող ենք պնդել, որ Թուրքիայում սահմանադրական կարգի հաստատումը արևմտականացմանը ձգտող փոքրաթիվ առաջադեմ մշակութային-քաղաքական ընտրանու պահանջն էր, սակայն չէր համապատասխանում Օսմանյան կայսրության իրական քաղաքական մշակույթին:

Օսմանյան ռազմաքաղաքական ընտրանին մահմեդական զանգվածներին իր ծրագրած հայկական կոտորածներին

մասնակից դարձնելու համար առաջին հերթին պետք է կենսագործեր իր մշակած ցեղապաշտական գաղափարախոսության իմացական ու հաղորդակցական գործառնությունները: Առաջին դեպքում թուրք էթնիկ խմբի գիտակցության մեջ պետք է ներարկեր կայսրության պետական-քաղաքական շահերի դեմ ուղղված՝ հայերի (նաև այլ ոչ մահմեդականների) «անջատողական» ձգտումների վտանգի մասին իր պատկերացումները (իրականում՝ քաղաքականացված կամ քաղաքական առասպելները), իսկ երկրորդ դեպքում համագործակցություն կազմակերպեր մահմեդական տարաբնույթ էթնիկ խմբերի հետ՝ ներդնելու համար վերջիններիս գիտակցության մեջ քաղաքական վարքի՝ իր նպատակին ծառայող ծրագիր:

Միաժամանակ թուրք քաղաքական գործիչները գիտակցում էին նշված զանգվածների քաղաքական հասունության ցածր մակարդակը: Այդ պատճառով աշխատում են քարոզվող-հրահանգվող գաղափարները մատուցել հուզական փաթեթավորմամբ, մասնավորապես օգտագործում էին կայսրությանը, իրենց քաղաքական համակարգին, նրանում եղած մահմեդական խմբերին «սպառնացող մարտահրավերների» վերաբերող խորհրդանիշներ («պետության թշնամու», «դավաճանի» և այլն), որոնց հիմքում ընկած էին իսլամի սկզբունքները ու հատկապես ջիհադի յուրահատուկ ընկալումը: Այդ ամենն իշխող վարչախմբի կողմից վերածվում է պաշտոնական քաղաքականության:

Մինչդեռ օսմանահպատակ արևմտահայ ընտրանին իր առջև խնդիրն էր դրել սեփական ժողովրդի գիտակցության մեջ գոյապահպանության ու հոգևոր-մշակութային ինքնության պահպանմանը նպաստող գաղափարախոսության արմատավարման ու այն վարքի ծրագրի վերածելու միջոցով մարդկանց գաղափարապես ու հոգեբանորեն գործնական պայքարի նախապատրաստել՝ ազգային պետականության

վերականգնման համար: Թուրքական բռնատիրության պայմաններում այդ խնդրի լուծման հիմնական ասպարեզը հոգևոր մշակույթն էր համարվում:

Այսպիսով՝ հայ իրականության մեջ ազատությունը ոչ միայն զգացողության ու հստակ ձևավորված գիտակցական փաստի ու ավանդույթի էր վերածվել, այլև այդ հիմնախնդիրը արդեն վաղ միջնադարում տեսականորեն հիմնավորվել ու դարձել է ազգային արժեհամակարգի հիմնարար բաղադրիչներից մեկը և հետագա դարերում պայմանավորել է նրա ողջ կենսագործունեությունը: Սակայն մինչև ազգային անկախ պետականության վերականգնումը արտաքին քաղաքական գործոնները հայ ժողովրդին հնարավորություն չեն տվել լիարժեք իրացնել ազգի ու նրա անդամների ազատության մասին սեփական պատկերացումներն ու դրանց հիման վրա կազմված հայրենիքի ազատագրության ծրագրերը:

Օսմանյան կայսրության քաղաքական արդիականացման նշված վիճակի գլխավոր պատճառը, մեր կարծիքով, գերիշխող թուրքերի ու նրանց քրիստոնյա հպատակների միջև եղած քաղաքակրթական անհամատեղելիությունն էր, որը հնարավոր էր հաղթահարել միայն տևական ժամանակի ընթացքում՝ կայսրության կյանքի բոլոր ոլորտների իրական բարեփոխումներով: Սակայն դրա համար անհրաժեշտ էր տերության քաղաքական մշակույթի մեջ քայլ առ քայլ արմատավորել հանդուրժողականություն և մշակութային երկխոսության ցանկություն և ունակություն:

XIX դարի երկրորդ կեսին ու XX դարի սկզբներին գերիշխող թուրք էթնոսի քաղաքակրթվածության մակարդակը դեռևս անբավարար էր իրական բարեփոխումների համար: Չէ՞ որ որևէ ժողովրդի նախ՝ աշխարհայացքային, ապա՝ քաղաքական կողմնորոշիչներն ու արժեքներն են պայմանավորում նրա քաղաքական մշակույթը: Պետք է կատարվեր նրա **ինքնության արդիականացում**՝ սեփական արժեհամակարգի

վերանայման միջոցով: Իսկ դա պետք է բխեր նաև ժողովրդի ցանկությունից՝ որոշ հիմնարար արժեքների (հատկապես կրոնաքաղաքական պատկերացումների ու դրանց վերանայման համար անհրաժեշտ հանդուրժողականության, սոցիալ-տնտեսական կյանքում իր դերի գիտակցման ու հատկապես տնտեսական գործունեության գոնե որոշ ազատականացման, ինչպես նաև ազգի ու հայրենիքի ընկալումների) վերափոխման միջոցով:

Էթնիկ արժեհամակարգի վրա խաբսիված ինքնության արդիականացումը շատ տևական գործընթաց է, մանավանդ Օսմանյան կայսրության մեջ, որտեղ անհատական, ինչպես նաև **էթնիկ ինքնանույնականացումը ստորադասված էր իսլամական ավանդույթներով ձևավորված խմբային ինքնանույնականացմանը:** Ցանկացած հանրության ինքնության արդիականացման համար էական նշանակություն ունի նաև այն, թե որքանով է նրա արժեհամակարգը բաց, մշակութային երկխոսությանը հակված, այլ արժեքների նկատմամբ հանդուրժող և հատկապես դրանք ընդունելու, յուրացնելու պատրաստ: Այդ պատճառով էլ Օսմանյան կայսրությունում առկա սոցիալ-հոգեբանական պայմաններում ձևավորված քաղաքական մշակույթը նույնպես չէր կարող հանդուրժող ու հատկապես սոցիալական արդարության միջավայր ստեղծել համակայսերական բարեփոխումների համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Միրումյան Կ.*, Հայ ազգային մտքի ուսումնասիրության ելակետային մեթոդաբանական հասկացությունների մասին (հարցադրման կարգով) /Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, պրակ երկրորդ, Եր., 1995, էջ 38:
2. Տե՛ս նույն տեղում, էջ. 42–43:
3. Նույն տեղում, էջ 30:
4. *Мирумян К.* Культурная самобытность в контексте национального бытия (К формированию политической концепции культуры в Армении). Ер., 1994. СС. 8–9.
5. Նույն տեղում, էջ 9:

6. Չալոյան Վ. Կ., Հայոց փիլիսոփայության պատմություն, Եր., 1975, էջ 499:
7. Տե՛ս Կիլկոտ Ք.Մ. Теории сравнительной политологии. М., 2001, էջ 253:
8. Տե՛ս Соловьев А.И. Политология. Политическая теория. Политические технологии. М., 2008. С. 382.
9. Տե՛ս Мец А. Мусульманский Ренессанс. М., 1973, էջ 39:
10. Զարևանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Եր., 1993, էջ 137:
11. Տե՛ս Մարգարյան Մ. Հ., Մշակույթի տեսություն, Եր., 2003, էջ 45:
12. Желятков А.Д., Петросян В.А. История просвещения в Турции. М., 1965. СС. 13–18.
13. Heywood A. Global Politics, Basingstoke and New York: Palgrave Macmillan, 2011, p.198.] Հղումը՝ ըստ Մ. Հովհաննիսյանի «Քաղաքական իսլամ» էլեկտրոնային հոդվածի / <https://enlightngo.org/post/12839>:
14. Массэ А. Ислам. Очерк истории, М., 1982. С. 55.
15. Տե՛ս Դադրյան Յ.Ն. История армянского геноцида. Ер., 2007, էջ. 186–192:
16. Տե՛ս նույն տեղում, էջ. 221–222:
17. Տե՛ս Քաղաքագիտություն Հ. Մանուշարյանի և այլոց խմբ., Եր., 2006, էջ 450:
18. Տե՛ս Կիլկոտ Ք.Մ. նշվ. աշխ., նույն տեղում և էջ 261:
19. Հալաբեյյան Մ.Ս., Օրենչևուլա Մ.Ֆ., Պետրոսյան Յու. Ս. Թուրքիայի պատմության ուրվագծեր, Եր., 1986, էջ 179:

**РОЛЬ НАЦИОНАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИХ
И РЕЛИГИОЗНЫХ ОТПРАВНЫХ ТОЧЕК В ПОЛИТИЧЕСКОЙ
КУЛЬТУРЕ АРМЕНИИ И ТУРЦИИ
(СО 2-Й ПОЛОВИНЫ XIX-го ВЕКА ДО НАЧАЛА XX-го ВЕКА)**

С.Б. Маргарян

*Ереванский университет «Гладзор»
кандидат философских наук, доцент*

АННОТАЦИЯ

В данной статье мы исходили из предложенной К. Мирумяном концепции «национального бытия» и идеи о «компенсаторной» функции культурных факторов для объяснения несовместимости политических культур западных армян и турок-османов во второй половине XIX-го – начале XX-го веков. Мы показали, что политические культуры этих двух этнических групп в рамках одной и той же политической системы основывались на разных системах ценностей. Подход турок был основан на соответствующих их менталитету и образу

жизни исламских традициях и предусматривал взаимодействие с другими этническими группами исключительно через их доминирование. В результате, их политическая модернизация, отражавшая либо зеркальное отражение, либо имитацию, оказалась неэффективной. Напротив, элита западных армян стремилась использовать компенсаторную функцию своей духовной культуры, переплетенной с идеей свободы, чтобы частично компенсировать отсутствие собственного государственно-политического образования и заложить основы для восстановления национальной государственности.

Ключевые слова: национальное бытие, реальное бытие, цель бытия, политическая культура, политическое самосознание, компенсаторная функция культуры.

THE ROLE OF NATIONAL-POLITICAL AND RELIGIOUS STARTING POINTS IN ARMENIAN AND TURKISH POLITICAL CULTURES (FROM THE 2ND HALF OF THE 19TH CENTURY UP TILL THE EARLY 20TH CENTURY)

S. Margaryan, Ph.D.

ABSTRACT

In this article, we have selected the concept of “national being” proposed by K. Mirumyan and the idea of the “compensatory” function of cultural factors to explain the incompatibility of the political cultures of Western Armenians and Ottoman Turks in the second half of the 19th century and the early 20th century. Through these concepts, we aim to show that the political cultures of these two ethnic groups within the same political system were based on different value systems. The Turks’ approach was rooted in Islamic traditions suited to their mentality and lifestyle, envisioning interaction with other ethnic groups solely through their dominance. As a result, their political modernization, reflecting either mirror images or imitation, was ineffective. In contrast, the elite of Western Armenians sought to use the compensatory function of a spiritual culture intertwined with the idea of freedom to partially make up for the absence of their own state-political entity and to lay the foundations for the restoration of national statehood.

Keywords: national being, real being, purpose of being, political culture, political self-consciousness, compensatory function of culture.

УДК 31

«ԱՌՑԻԱԼԱԿԱՆ»-Ի ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԱՌԱԿՆԵՐՈՒՄ

Ա.Ռ. Զիջյան

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտ, ավագ գիտ. աշխատող
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
jijyan@mail.ru*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հեղինակը տեքստի բովանդակային վերլուծության (կոնտենտ վերլուծության) միջոցով բացահայտում է Մխիթար Գոշի առակների «սոցիալական»-ի նշանակալի դրսևորումները: Հեղինակը կիրառել է տեքստի վերլուծության հետևյալ ցուցիչներ՝ սոցիալականի կրողներ, բարոյական, իրավաքաղաքական:

Մխիթար Գոշի առակները գեղարվեստական ստեղծագործություններ են, որոնցում սոցիալականը ներկայանում և դրսևորվում է կենդանիների, բույսերի, մարդուն բնորոշ բնավորության գծերով, արասների և առաքինությունների համընդհանուր խորհրդանիշներով: Այլաբանությունների և ծաղրանքի միջոցով հեղինակն արտացոլում է իր ժամանակի սոցիալական, բարոյական և փիլիսոփայական խնդիրները՝ ընթերցողին տալով բարոյական խորը դասեր: Կենդանիների, բույսերի, մարդկանց ներքին հակասությունների գեղարվեստական ներկայացումը Գոշին թույլ է տալիս իր առակներում ավելի նուրբ և բազմակողմանի պատկերել մարդկային էությունն ու բարոյական երկընտրանքները, հասարակության շտկման և զարգացման հնարավոր ուղիները:

Հիմնաբառեր՝ առակ, սոցիալական, բովանդակային վերլուծություն, առաքինություններ, բարոյական դասեր:

Մուտք

Մխիթար Գոշը հայ միջնադարյան հոգևոր, քաղաքական, մանկավարժական, իրավական, գրական մշակույթի ամենախոշոր գործիչներից է: Լինելով մեծ մտածող օրենսդիր, օրենսգետ, գիտնական, մանկավարժ, եկեղեցական և հասարակական գործիչ, Մխիթար Գոշը ապրել է իր ժամանակի հասարակական-քաղաքական անցուղարձով և արձագանքել է դրանց գրչով ու վարքով [1]:

Ժամանակակիցներն ու հետագա սերունդը Մխիթար Գոշին մեծարել են «այր իմաստուն ու հեզ», «վարդապետական ուսմամբ հռչակելալ», «մեծ վարդապետ», «հռչակաւորն և մեծ իմաստուն գիտութեամբ» պատվանուններով: Ցանկացած հետազոտության հիմքում հարկ է անդրադառնալ պատմական այն կոնտեկստին, որում գործառնել է Մխիթար Գոշը: 12-րդ դարը Հայոց պատմությունում նշանավորվել է մի շարք արտաքին և ներքին գործոններով՝ թուրք-սելջուկների արշավների մասնակի թուլացմամբ, Դավիթ Շինարարի և իր դստեր Թամար թագուհու օրոք վրաց պետականության հզորացումով, վրացական քաղաքական և ռազմական էլիտայում հայ իշխաններ Չաքարիա և Իվանե Չաքարյանների ակտիվ ներընդգրկմամբ, Լոռու և Անիի ազատագրմամբ, Կիլիկիայում հայ թագավորության հիմնադրմամբ: Այդ գործոնները կարճաժամկետ հնարավորություն ընձեռեցին հայ ժողովրդին «շունչ քաշել»:

12-13-րդ դարերի հայկական կյանքում և մշակութային առաջ եկող փոփոխությունների հետ մեկտեղ՝ քաղաքային բնակչության աճի, ռամիկների և արհեստավորների, եկեղեցականների և իշխանավորների միջև հարաբերությունների լարվածությունը ձևավորեցին հայ ազգային եկեղեցու հետ կապի ամրապնդման կարիք: Մխիթար Գոշի գործունեության մաս ու բաժին էր կազմում այդ կարիքին ադեկվատ գիտական և հոգեվոր գործունեության միավորումը:

Սովորաբար առակի հիմնական մեթոդներից մեկը այլաբանությունն է՝ վերացական գաղափարի «նյութական» մարմնացումը: Առակներն, որպես գրականության ոճ, հայտնի են Եզոպոսից, Ֆեդրից ի վեր և ուղղված են եղել հասարակության մեջ բարոյականության տարածմանն ու ամրապնդման, իսկ այլաբանությունը հնարավորություն էր ստեղծում ծաղրել այս կամ այն կոնկրետ մարդկային հատկանիշ, վատ հակում: Որպես առակի հատկություններ առանձնացնում են՝ կենդանիների հանդես գալը կենտրոնական գործող կերպարում, ժամանակից և տարածությունից դուրս գործառնություն, բարոյական բովանդակություն, գործողությունների և երևույթների պատկերազարդում և այլն [2]:

Գոշի առակները ժողովված են «Առակք առասպելականք եվ բարոյականք»: Այս առակները գրվել են նրա հոգևորական ակտիվ գործունեության ժամանակահատվածում: Մանուկ Աբեղյանի կողմից Գոշի առակները դասակարգվում են երեք խմբերի՝

- Առասպելական՝ իսկության հետ կապ չունեցող,
- Բարոյական՝ դյուրամարսելի բարոյական խրատ պարունակող,
- Ստեղծական՝ պարզապես հորինված պատմվածքներ, ուսանողների կողմից ձևավորվող որևէ կրթական, կամ բարոյախոսական թեմայի վերաբերյալ [3]:

Մեթոդաբանություն.

Սոցիալական փիլիսոփայության շրջանակներում սոցիալականը հանդես է գալիս որպես իր ուսումնասիրության կենտրոնական օբյեկտը: Մասնագիտական՝ փիլիսոփայական, քաղաքագիտական, հոգեբանական և այլ գրականության մեջ առկա են «սոցիալական»-ի մի շարք սահմանումներ: Այդպես,

- Սոցիալականը որոշակի սեռային եզրույթ է, դե ֆակտո՝ փիլիսոփայական կատեգորիա, որը նշանակում է այն ամենն, ինչ մարդկային է, ի տարբերություն «բնության»։ (Է. Գիդենս, Պ. Սորոկին)։
- «Սոցիալական»-ը իրենից ներկայացնում է հակադրություն անհատի և անհատականի։ Սոցիալական հասկացությունը դիտարկվում է որպես հոմանիշ հասարակություն [4]։
- «Սոցիալական»-ը իրենից ներկայացնում է անձերի կողմնորոշում դեպի գործունեություն, խմբերի, անհատների փոխազդեցության մասին՝ անհատին վերաբերվելով որպես պատմական գործողության սուբյեկտի, որպես սոցիալական հարաբերությունների սուբյեկտի։

Հենվելով սոցիալականի վերոհիշյալ մեթոդաբանության կիրառության, ստանում ենք սոցիալական ցուցիչների հետևյալ նկարագրությունը՝

Աղյուսակ 1. «Սոցիալականի» ցուցիչներ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԻ ԿՐՈՂՆԵՐ	ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ	ԲԱՐՈՅԱԿԱՆ
Կենդանիներ՝ առյուծ, գայլ, աղվես, առջ, ձուկ, մրջյուն	Իշխանություն՝ թագավոր, իշխանատենչություն, զավթում, հոգացություն	Առաքիներություններ՝ խոհեմություն, արդարություն, ազատություն,
Բույսեր՝ արմավենի, խաղող, նոնենի	Օրենք	արատներ խորամանկություն, ազախություն, ագրեսիվություն և իշխանության ձգտում
Հարաբերություններ՝ ընկերություն, գերիշխանություն, վստահություն	Պատերազմ	

Գոշի առակներում իրենց արտացոլումն են գտնում իր ժամանակակից հասարակության սոցիալական երևույթները, բարքերը, արատներն ու առաքինությունները: Կիրառելով այլաբանական մոտեցումը Մխիթար Գոշը ներկայացնում է «սոցիալական»-ի **խսկական, ինչպես պիտո է որ լինի և անխսկական, այնպես, ինչպես առկա է**, գոյությունը:

Սոցիալականի դրսևորումների բովանդակային վերլուծությունն իրականացվել է հետևյալ քայլերով.

1. Առաջադրված խնդիրներին համապատասխան ընտրվել են Առակք Մխիթարայ Գոշի «Առակք առասպելականք եվ բարոյականք» [5] 190 առակներից աշխատության ամեն 7-րդ առակը, որոնք ենթակա են ուսումնասիրության:
2. Ելնելով հետազոտության խնդիրներից՝ իրականացվել է ուսումնասիրության ենթակա ցուցիչների առանձնացում:
3. Որակական վերլուծության համար առանձնացված ցուցիչները խմբավորվել ենք հետևյալ համապատասխան կատեգորիաներում՝
 - Բարոյական՝ առաքինություններ – խոհեմություն, արիություն, ազնվություն, ազատասիրություն, կարեկցանք և արատներ՝ խորամանկություն, ազահություն, ագրեսիվություն և իշխանության ձգտում:
 - Սոցիալականի կրողներ՝ կենդանիներ, բույսեր, հարաբերություններ, թույլերի միավորում և դրանով իսկ հզորացում, շահագործում:
 - Իրավաքաղաքական՝ թագավոր, իշխանության կարգավորում, հոգացություն, օրենք, պատերազմ:
 - Առանձնացված ցուցիչները ենթարկվել են որակական կոնտենտ-վերլուծության, որի ընթացքում տրվել են այդ ցուցիչների որակական բնութագրումները և կատարվել համապատասխան եզրահանգումներ:

Հիմնական մաս

Գոշի մոտ կենդանիները գործում են 34 առակներում, ձկները՝ 16, թռչունները՝ 50, բույսերը՝ 73, մարդիկ՝ 22: Շատ դեպքերում Գոշի առակներում կենդանու կերպարը ներառում է մարդկանց հատուկ որոշակի որակների և հատկությունների մի ամբողջություն, որոնք հանդիսանում են մարդկային բնավորության դրսևորումներ: Ընդհանրապես ընդունված է, որ յուրաքանչյուր կենդանու՝ ձկան, բազեի, աղավնու, լոր, հավ, ագռավ, առյուծ, բորենի, գայլ, աղվես, ձի, էջ և այլն պատկերը մարդկային բնավորության ինչ-որ հատկանիշի այլաբանություն է՝

Առյուծ – որպես զազանների թագավոր, ուժի և զորության տիրապետող:

Գայլ – տգիտություն, անհաջողականություն, անհեռանկարային խորամանկություն, ագահություն, ագրեսիվություն:

Էջը – անհեթեթություն, կարճատեսություն, շահագործվածություն:

Աղվեսը – հնարքների կիրառություն, կեղծավորություն, իշխանության ձգտում, խորամանկություն, մանիպուլյացիա անելու և խաբելու ունակություն, իր նպատակներին հասնելու համար ցանկացած միջոցների կիրառությամբ, այդ թվում՝ շողոքորթության կամ խաբեության:

Եզը – միջակություն, Ձի – հպարտ, Մրջյուն – աշխատասեր, ազատությանն ձգտող, Տատրակ – միամիտ, անհեռատես, ողջամիտ, անպաշտպան և այլն:

Գոշը մի շարք առակներում (է. «Թագավոր տնկոց», ՀԵ «Ձկունք և թագաւոր յուրեանց») անդրադառնում է արդարության, մարդկանց իրավունքները պաշտպանելու և իրավական այլ խնդիրների, որոնք այժմեական են նաև մեր օրերում: Նա հատուկ շեշտում է, որ թե՛ թագավորներն ու իշխանները, թե՛ դատավորներն ու եկեղեցականները, բոլոր մարդիկ՝ ընդհանրապես իրենց գործունեության մեջ արդարադատ

պետք է լինեն: Թագավորն ու իշխանը, դատավորն ու հոգևորականը իրենց գործով, կյանքով պետք է օրինակ հանդիսանան իրենց ենթականերին, այլ ոչ թե խոսքով միայն խրատեն:

Օրինակ՝ «Թագավոր տնկոց» առակում հեղինակը ներկայացնում է իշխանության իրականացման (կարգ թագավորութեան) առանձնահատկությունները, երբ Արմավենին դառնալով տնկոց թագավոր, յուրաքանչյուր ծառին («խաղող որթոյ՝ գինեպետ, թզենոյ՝ հյուպատոս, նոնենոյ՝ բժշկություն» և այլն) տալիս է իրեն հասանելիք իշխանության մասը, և իշխանությունը (թագավորելը) դիտարկվում է որպես հոգացություն:

Թագավորի վարքն ու բարքը որպես օրինակ ենթակաների համար դիտարկվում է ՀԵ. «Ձկունք և թագաւոր յուրեանց» [5] առակում, որտեղ ի պատասխան թագավորի կողմից մեղադրանքների, թե ինչու կուտեք ձեզնից փոքրերին, ենթակաները նշում են՝ «կլանելով կերակուր քեզ արարեր»: Մեկ այլ առակում՝ ՁԵ «Առյուծ բեկեալ ոտիւք և կենդանիսիք», կենդանիները մեղադրում են իրենց թագավորին անհոգաժու վերաբերմունքի համար՝ «... մենք քեզանից պաշտպանություն չտեսանք ոչ արջի ձեռքից, ոչ գայլի և ոչ էլ գազանների ձեռքից և մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ: Մենք Աստծուն պետք է զոհաբերություն անենք, որ այդպիսի փորձանքի բերեց քեզ» [5]:

«Բեկեալ առիւծու. սաք՝ տրտնջէր զբնաւ կենդանեաց, եթէ հարկատուք իմ էք՝ զի իշխան գազանաց եմ, ընդ է՞ր այժմ ոչ պատարագիք՝ դի դարմանեցայց: Եւ ասեն. Ի քէն ոչ ինչ գտաք պահպանութիւն՝ ոչ յարջոյ և ոչ ի գայլոյ և ոչ յայլ ինչ գազան է. նաև ոչ դա իսկ ի մեզ խնայեցեր, այլ մեզ պատարագել Աստուծոյ արժան է, որ այդպիսի չարեաց զքեզ պատահեցոյց:

Յայտնի է միտք առակիս. զի չարք յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց՝ տանջելով զհնազանդեալս, և ոչ

յայլոց պահեն ի վտանգէ, Եւ ըստ արժանոյն անկեալք ի չարիս՝ Աստուծոյ գոհութիւն մատուցուք՝ զի ոչ ի մէնջ եղև» [5]:

Այսպիսով, Գոշը վերադառնում է իսկական թագավորին բնորոշ առաքինություններին:

Առաքինությունները նմանեցնում է ընկույզի պնդության (ՕԷ «ՍԵխ և ընկույզ»): «*Հասեալ սեխ և քաղցրացեալ արքայի պատու զանձն կոչէր, թէ և ի բանջարոց, իբրև ի փոքր շառաւեղէ մեծ. և քամահեր զընկուզի՝ մեծ ծառ և փոքր պտուղ: Որում անդրադարձեաց. Զի եթէ յերկարաժամանակ լինէիր, ի դէպ էր կոչումնդ այլ զի որովայնանց լինելով՝ զարշելի լինիս մեծամեծաց և փոքունց, իսկ ես թէև փանաքի, սակայն բազմաժամանակեայ, և լուսայ նիւթ՝ ճոխաց և աղքատաց» [5]:*

Արդարությամբ դատելու վերաբերյալ ՃԽ «Հաւքալ եվ տատրակ» առակում հեղինակը արագիլին է նշանակում որպէս դատավոր «հաւքալի» և տատրակի միջև, բազմակողմանի է քննում ստեղծված իրավիճակը՝ կիրառելով հարց ու պատասխանի մեթոդը պարտադիր հասնելու խորը և արդար որոշմանը:

Անդրադառնալով մեկ այլ առաքինությանը՝ կարեկցանքին (թույլերի նկատմամբ հոգածություն), որպէս օրինակ Գոշը դիտարկում է արագիլի կողմից պաշտպանություն տկարների՝ ճնճղուկների և նրանց ձագերի նկատմամբ:

Մարդուն իր իսկական կարգավիճակում Գոշը ներկայացնում է որպէս դրախտ, որի ծառերը՝ առաքինություններն են, իսկ աղբյուրները՝ հոգևոր գիտությունը (ԿԴ «Աղբյուրք»): (Մարդուն վերաբերվող առակների թիվը կազմում է 36):

Մեկ այլ առակ (ՃԾԴ «Արջ և մրջիւն») հանդես է գալիս որպէս նախազգուշացում այն տերերին ու տիրակալներին, թագավորներին ու իշխաններին, ովքեր անխղճորեն շահագործում են իրենցից ենթականերին՝ խլելով վերջիններիս ունեցվածքը (մարդու իրավունք): Երբ զսպանակը ձգվում է չափից դուրս, թույլի՝ մրջյունի համբերությունը սպառվում է և,

օգնության կանչելով իր ազգակիցներին, միասնական ջանքերով վնասում են արջին, և վերջինս «տանջահար ցավից ստիպված դիմում է դեպի ջրի հոսանքը և չափից ավելի խորը մտնելով՝ խեղդվում է» [5]:

Ջրոյն մրջեան արջ փորեր, և լեզուաւ ժողովէր և ուտէր: Եւ հնարի մրջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և դռնէի և մծէի և շանաճանճ և բրէտ, և առ նմանք սոցին, և աղաչէ օգնել իբր ազգայինք, Յաւակցեն՝ հարկանեն զաչս և զլսելիս արջուն, և հարկանէ գլուխ զքարի, և նեխի և որդունք ևս ծնանին, և ի սաստկութենէ ցաւոց՝ զբերան բացեալ գոչէր. և նոցա մտեալ յորովայն՝ խոցոտեն զաղիսն. և նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ, և անչափ ի ներքս մտեալ՝ հեղձանի [5]:

Որպես առակի բովանդակային ամփոփում և խրատ Գոշը հորդորում է տկարներին և թույլերին միավորվել և իմաստությամբ զորանալով դիմակայել աշխարհի հզորներին.

Ջորութիւն առակիս այսպիսի է. զի հզօրք զտկարս արհամարհեն, և ոչ երկնչին. սակայն իմաստութեամբ զօրանան փոքունք, և յաղթեն հզորաց: Եւ այս իմաստութիւն է՝ ի փոքունց իբրև ի մեծամեծաց երկնչել [5]:

Ինչպես շատ այլ դեպքերում, պատերազմի երևույթը քննարկելիս Մխիթար Գոշը զուգահեռներ է անցկացնում իր «Դատաստանագրքի» հոդվածների հետ: Օրինակ, «Լեւիաթան» (ԿԶ) առակում, Մխիթար Գոշը ընդդիմանում է ագրեսիվ պատերազմներին, խորհուրդ տալով խուսափել պատերազմ հայտարարելու նախաձեռնությունից անգամ օտարների դեմ. «*Զի թշնամիք առ մեզ ոչ գոն, եւ անկարաւտ եմք, զմերսովայելէսցուք, եւ ընդ ձեզ ոչ զբաւսանամք, զի մի ծանր Ձեզ եղեց*» [5]: Թագավորների և թագավորությունների միջև նեղությունների բացակայությունը հիմք է՝ խաղաղության ճանապարհին ընտրելու համար:

Այսպիսով, ըստ Գոշի՝

- հասարակության արդյունավետ գործառնությունը պայմանավորված է բարոյական, առաքինի վարքի և բարքի, սիրո և հոգացության փոխհարաբերությունների կազմակերպմամբ;
- առաքինությունները պետք է հատուկ լինեն հասարակության բոլոր շերտերին;
- մարդու՝ որպես անձի և թագավորության գոյության կազմակերպման գործում առաջնայնությունը պետք է տրվի առաքինությունների դաստիարակմանը և կրթության խնդիրներին:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Գոշը առակներում օգտագործում է արտահայտիչ միջոցների լայն տեսականի, որոնց շնորհիվ սոցիալականը հանդես է գալիս բազմազանությամբ: Կենդանիների և բույսերի պատկերները դառնում են մարդու բացասական հատկությունների խորհրդանիշ՝ *Աղվեսը – խորամանկության և խաբեության, Գայլը – դաժան ուժի և հիմարության, Առյուծը – հպարտության և իշխանության, Արջը – անհեռատեսության, ուժ առանց իմաստության, անհամբերության*:

Գոշը իր առակներում բարության, խոհեմության, հայրենասիրության, աշխատասիրության, արիության, արդարադատության և մարդկային բարոյական այլ արժեքների հետևողական քարոզիչ է, որոնք զուգահեռ «դրվել» են իր կրթական-դաստիարակչական խրատների հիմքում [5]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մաֆարյան Գ.*, Մխիթար Գոշի պետաիրավական հայեցակարգը // Մխիթար Գոշի գիտական ժառանգությունը. պատմություն և արդիականություն/գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., Եվրասիա միջազգային համալսարան, 2014: Էջ 4:
2. *Гаспаров М.Л.* Античная литературная басня, М.: Изд-во «Наука», 1971. С. 13.
3. *Աբեղյան Մ.*, Երկեր, հ. Դ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968.

4. «К понятию социального-2». Так как же всё-таки определить «социальное»: стенограмма семинара // ВШЭ: Центр фундаментальной социологии, https://cfs.hse.ru/social_disc_0 հասանելի էր 01.10.2024.
5. *Մխիթար Գոշ*, «Առակը առասպելականը եվ բարոյականը», գիրք Բ, Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԲ դար, Եր., 2014, էջ. 42–106:
6. *Շարապետյան Լ.*, «Մեծ վարդապետները» ... փոքրերի մասին Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները // Էջմիածին, 2008, էջ. 127–134 http://arar.sci.am/Content/252840/file_0.pdf հասանելի էր 01.10.2024.

ПРОЯВЛЕНИЯ «СОЦИАЛЬНОГО» В БАСНЯХ МХИТАРА ГОША

А.Р. Джиджян

*Институт философии, социологии и права НАН РА
кандидат философских наук
доцент*

АННОТАЦИЯ

В статье автором посредством содержательного контент-анализа текста раскрываются значимые проявления «социального» в баснях Мхитара Гоша. Автором выделены такие индикаторы, как носители социального, нравственные, политико-правовые.

Басни Мхитара Гоша – художественные произведения, в которых «социальное» представлено посредством приписывания животным, растениям ряда черт человеческого характера, что дает возможность читателю ознакомиться с универсальными символами пороков и добродетелей. Через аллегории и сатиру автор отражает социальные, моральные и философские проблемы своего времени, давая возможность (человеку) получить глубокие нравственные уроки. Художественное изображение внутренних противоречий животных, растений и людей позволяет Гошу более тонко и разносторонне изобразить в своих баснях человеческую природу и нравственные дилеммы, а также возможные пути совершенствования и развития общества.

Ключевые слова: басня, социальное, контент-анализ, добродетели, нравственные уроки.

MANIFESTATIONS OF THE “SOCIAL” IN THE FABLES OF MKHITAR GOSH

A. Jijyan

Institute of Philosophy, Sociology and Law of the NAS RA

Ph. D. in Philosophy

Associate Professor

ABSTRACT

In the article, the author reveals significant manifestations of the “social” in the fables of Mkhitar Gosh, through a meaningful content analysis of the text. The author identifies such indicators as carriers of the social, moral, political and legal.

Mkhitar Gosh's fables are works of art in which the “social” is presented through the attribution of a number of human character traits to animals and plants, which allows the reader to become familiar with universal symbols of vices and virtues. Through allegories and satire, the author reflects the social, moral and philosophical problems of his time, giving the opportunity to receive deep moral lessons. The artistic depiction of the internal contradictions of animals, plants and people allows Gosh to more subtly and diversify in his fables the depiction of human nature and moral dilemmas, as well as possible ways of improving and developing of society.

Keywords: fable, social, content-analysis, virtues, moral lessons.

УДК 001

**ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ Ս.ԴԱՎԻԹ
ԱՆՀԱՂԹԻ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅԱՆ՝ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՅԻ
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ**

Ռ.Խ. Քոչարյան

*ս. Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան
ավագ գիտաշխատող
փիլիսոփայության գիտությունների թեկնածու, դոցենտ
kocharyan.romik@mail.ru*

ԱՄՓՈՓՈՒՄ

Ս. Դավիթ Անհաղթի մեկնափիլիսոփայական և մեկնատրամաբանական երկերն ու իմաստասիրության հայեցակարգը մասնագիտական գրականության մեջ ուսումնասիրվել են թե մասնակի իրենց բաղադրատարրերով, թե ամբողջությամբ՝ փիլիսոփայության տեսության ու պատմության, միջնադարագիտության և տրամաբանության խնդրակարգերով, տեսանկյուններով: Աստ՝ ուսումնասիրվում է նրա «Սահմանք իմաստասիրութեան» երկով ներկայացվող՝ ***իմաստությանն առինքնող իմաստասիրության*** իսկության իր մեկնորոշումն ու հայեցակարգը: Ներկայացվող հետազոտությամբ նրա երկում բացահայտվում են իմաստասիրության հանրահայտ վեց սահմանումներից տարբերվող այլ սահմանումներ ևս: Երկի առաջնային գլուխների կանխասացությամբ ներկայացվող իմաստասիրության՝ ըստ առարկայի դավթյան այդ սահմանումներն իրենց առավել համառոտ կամ տարակերպ բանաձևումներով հնարավորություն են ընձեռում ստույգ հասկանալ ու մեկնաբանել իմաստությանն իմացունակ ու առինքնող նրա իմաստասիրության իսկությունը:

Հիմնաբառեր՝ իմաստություն, իմաստասիրություն, իսկություն, սահմանում, գոյ, մեկնություն:

Մարդն իրերի նկատմամբ կատարում է հարցադրում և որոնում ու ոչ միշտ բացահայտում իսկություն: Նույնպես և իմաստասերը: Իմաստասերն ամենայնի նկատմամբ կատարում է հարցադրում և որոնում ու բացահայտում հայեցակարգ: Եվ ամենայնի հարցադրությամբ ու որոնումով իմաստասերը հասնում է դառնում ամենայնի գոյության իսկություն և խորհուրդ բացահայտող ու գիտեցող հայեցակարգ: Նույնպես և որևիցե իրի բնության և այդ բնությանը ներհատուկ՝ յուրատեսակ գոյության պարագայում: Իմաստասերն իրի նկատմամբ կատարում է հարցադրում և որոնում ու բացահայտում իրի գոյության իսկություն հայտող միտք, նույնն է թե՛ գիտելիք: Եվ իմաստասեր այրերը գրելով իմաստասիրության հայեցակարգ ներկայացնող աշխատություն, ուսումնասեր անձանց են ներկայացնում ամենայնի կամ որևիցե բնության իրերի գոյության իսկության բացահայտման՝ հետևողական կարգով հարցադրումներ իրենում պարունակող խնդրակարգ, իսկության բացահայտման ուղի, նույնն է թե՛ մեթոդ, և իսկությունն ու խորհուրդը հասկացող ու մեկնող գիտահայեցակարգ: Ահավասիկ և՛ ս. Դավիթ Անհաղթն իր «Սահմանք իմաստասիրութեան» երկում հարցադրելով աստվածային իմաստություն սիրող ու փափագող, որոնող ու բանահասու, այսու և՛ իրենում *իմաստության ներկայություն բովանդակող իմաստասիրության իսկություն*, նախ՝ ձեռնարկվող իմաստասիրության երկում հավաստում է աստվածային իմաստության հանդես, իմաստության աստվածային խոստում մարդկանց և ուրեմն՝ իմաստության ոչ ամեննին անձեռնհաս կամ դժվարահասու («դժուարաձեռն») իրեն սիրող՝ ուսումնասեր անձանց¹: Այնուհետև նա իր երկում առաջադրում է մեկնախոհության ու հենց մեկնուղու խնդրակարգ՝ հետևողական

¹ Տե՛ս՝ *Դավիթ Անյաղթ*, Սահմանք իմաստասիրութեան – Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխ. Ս. Արևշատյանի, Եր., 1980, էջ 29:

պարզաբանմամբ հանդերձ² և ըստ այդմ՝ մեկնողաբար բացորոշվող իմաստասիրության սահմանումներով ամբողջացող մեկ-միասնական հայեցակարգ, որում և ամենքին հնարավորում հասկանալ *ուչ միայն հայեցակարգում հստակ բացահայտված, այլև նույն հայեցակարգում բովանդակվող թաքուցյալ իմաստության խորհուրդներ*։ Նրա և՛ մեկնափիլիսոփայական, և՛ մեկնատրամաբանական երկերն ու իմաստասիրության հայեցակարգը մասնագիտական գրականության մեջ ուսումնասիրվել են թե մասնակի իրենց բաղադրատարրերով, թե ամբողջությամբ՝ փիլիսոփայության տեսության ու պատմության, միջնադարագիտության և տրամաբանության խնդրակարգերով, տեսանկյուններով³։ Ներկայացվող հետազոտությամբ նրա «Սահմանք իմաստասիրութեան» երկում բացահայտվում են իմաստասիրության հանրահայտ վեց սահմանումներից առավել համառոտ կամ տարակերպ բանաձևումներով տարբերվող այլ սահմանումներ ևս, որոնք կանխասացությամբ արդեն իսկ հնարավորություն են ընձեռում ստույգ հասկանալ ու մեկնաբանել իմաստությանն առինքնող նրա իմաստասիրության գոյության իսկության էական առանձնահատկություններ։

Սուրբգրային իմաստության՝ եզիպտական ու այլ աղբյուրներից միջնորդավորված շեղությամբ հաղորդ՝ հին հույն իմաստասերների ու իրենց իմաստասիրության և նույնիսկ

² Տե՛ս *Դավիթ Անյաղթ*, Սահմանք իմաստասիրութեան – Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխ. Ս. Արևշատյանի, Եր., 1980, էջ. 29–31։

³ Տե՛ս *Դավիթ Անհաղթ*, հոդվածների ժողովածու, Եր., Երևանի Համալսարանի հրատ., 1980. *Философия Давида Непобедимого, сборник статей*, М.: Изд. «Наука», 1984; *Чалоян В.К.* Философия Давида Непобедимого и влияние её на мыслителей последующих веков, Изд. АН Арм ССР, Ер., 1980; *Аревиштян С.С.* Давид Непобедимый, М.: Изд-во «Наука», 1980; *Аревиштян С.С.* Формирование философской науки в древней Армении (V–VI вв.). L'oeuvre de David l'Invincible et la transmission de la pensée grecque dans la tradition arménienne et syriaque. Calzolari, V. & Barnes, J. (Ed.). Leiden; Boston: Brill, 2009 և այլն։

անտիկ յոթ իմաստունների շարքում հիշատակվող Պյութագորասի բանավոր ուսուցմամբ ավանդյալ ու մասամբ աղարտված ըմբռնման համաձայն՝ նորպլատոնականության ուսմունքով երբեմն չափազանցվածությամբ, ներքուստ երկվությամբ հնչում էր մարդկանց համար իմաստության **անհնարինության** կամ **գաղտնափակության** միտքը: Որո՞նք են երկաստիճան տարբերակվածությամբ այդ մտքերը: Մարդկանց համար իմաստության անհնարինության միտքը հաստատագրվում էր հենց **մեծամասնության՝ իբրև անգետների** նկատմամբ, որ իմաստությունն անհասանելի է և ուրեմն անիմաստ ու անիրագործելի է իմաստասիրության բուն տենչումն ու փափագը և կատարումը՝ հասու լինելու ու ձեռքբերելու իմաստություն: Իսկ մարդկանց համար իմաստության գաղտնափակությունն ու միակ հնարավորությունը մտածվում էր միմիայն սակավաթիվների, իբրև օժտված ու գիտակների, նկատմամբ ամենքից գաղտնապահությամբ հաղորդվող այն մտքով, թե իմաստությունը դժվարահասու է և հնարավոր է միմիայն ուսյալ համախոհների տեսական քննախոհությամբ վերաճմամբ և ապա՝ հոգեզմայլությամբ կամ հոգեհափշտակությամբ և միգուցե լոկ ծերության հասակում:

Այդ տեսակետում ճշմարտության աղարտումների դավթյան բարեհաղթությամբ՝ նրա երկում հիմնավորմամբ հանդերձ հավաստվում է իմաստությանն առինքնող իմաստասիրության թե գոյության հնարավորությունը և թե իսկությունը, ըստ իր ճշմարտուսույց այն տեսակետի, թե **կատարյալ վարդապետությունն այն է, որ ոչ միայն լուծանում է ընդդիմացողների տարակուսությունը, այլև յուր իմացությունն է կարողանում հաստատել⁴**: Ահավասիկ, իմաստությանն առինքնող իմաստասիրության գոյությունը կասկածի ենթարկող ու ժխտող փաստարկների հերքմանը զուգընթաց ս. Դավիթ Անհաղթը կատարյալ վարդապետության վերոնշյալ սկզբունքին

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 37:

հետևելով, հիմնավորումով հանդերձ, մեկնողաբար բանահայտում է **իմաստասիրության գոյության խորին խորհուրդ ու բուն իսկություն**, ինչպես նաև **ամբողջական հայեցակարգ** ներհայտող ու բաղկացնող էական մտքեր:

Մասնագիտական գրականության քննությամբ հայտնի՝ սուրբ ու իմաստուն հայագգի իմաստասերը՝ մանկուց ի վեր ուսյալ էր «նուրբ գրոց» քրիստոնեական հավատի ուսմունքով, այն է՝ աստվածագիտության ու աստվածապաշտության և փրկության տեսագործնական իմաստության սուրբգրային գիտությամբ ու նաև եկեղեցական վարդապետության սրբազան ավանդությամբ, իսկ հետագայում նաև ներկրթյալ «արտաքին գրոց» բովանդակությունն ու կոնկրետորեն՝ հին հույների իմաստասիրությունը վերաիմաստավորող քրիստոնեական գիտությամբ: Ահավասիկ և իմաստասիրության գոյության խորհուրդի ու իսկության բացահայտմանը կոչված իր աշխատությունը նա նախաձեռնել էր իր այդկերպ բանիմացության երկմիտությամբ:

Արդ՝ ս. Դավիթ Անհաղթն իր երկի առաջնագլխում և երկրորդ գլխի սկզբում դեռևս միայն իմաստասիրության գոյության պիտոնյան հետևորդների տարակույսները զեղծանող մեկնախոհությանը⁵ զուգընթաց՝ իմաստասիրության գոյության ինչպիսի՞ իսկություն է իմացահայտում: Եվ իմաստասիրության տեսական ուսումնասիրության ու գործնական ներգործության ինչպիսի՞ առարկա է հայտնացույց անում աստվածային իմաստությանն առինքնող իմաստասիրությանն ուսումնասեր ամենքին:

Ամենայնի իսկության բացահայտման խնդրակարգի քառաշար հիմնարար հարցերի⁶ ընթացակարգում առաջնային՝ «իմաստասիրության գոյության» հարցադրությանը դավլյան

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 31–38:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 29:

պատասխանում⁷ դեռևս կանխասացությամբ և, այնուամենայնիվ, արդեն իսկ որոշակի ճշգրտությամբ բովանդակվում է նաև իմաստասիրության իսկության մեկնախոհություն: Արդ՝ ***ո՞րն է իմաստության ներկայությունը իրենում բովանդակող իմաստասիրության իսկությունը՝ դավության երկն ու բուն ասելիքը նախադրող՝ առաջնային գլուխների կանխասացությամբ:***

Ա) Ս. Դավիթ Անհաղթը իմաստության ուսումնասեր ամենայն ընթերցողին իր երկի դեռ նույնիսկ առաջնագլխում լոկ ընդհանրական բնորոշմամբ հայտնում է իմաստասիրության ուսումնասիրության առարկան՝ կանխահայտելով երկու համընդհանուր էական հատկություններ: Իմաստասիրության իսկությունը բացահայտող իր աշխատության հետագա էջերում նա իմաստասիրության սահմանումներին ու դրանց մեկնությանն անդրադառնում է մանրամասնորեն, և, սակայն, իմաստասիրության առարկան հայտնող դեռ միայն այս բնորոշումներով արդեն իսկ իմանալի են դառնում առարկայի համընդհանուր երկու էական հատկությունները: Արդ՝ որո՞նք են իմաստասիրության առարկան թեև դեռ միայն կանխահայտմամբ բնորոշող՝ համընդհանուր էական այդ երկու հատկությունները:

Քրիստոնեական հավատի գիտությամբ և այնուհետ նաև հին հույների իմաստասիրությամբ ուսյալ՝ ս. Դավիթ Անհաղթը ներածությունում հայտնում է իմաստասիրությունը սահմանող ու նրա բնությունը բացահայտող մտքի մի բանաձև, թե՛ ***«մակացութիւն էական... իմաստասիրութիւն է»***⁸, այնուհետև առաջին գլխում պարզահայտ վերաբանաձևում, թե՛ ***«իմաստասիրութիւն գիտութիւն էիցն է»***⁹ և ապա նաև ***«իմաստասիրութիւն... (ամենայն) գոյիցն է գիտութիւն»***¹⁰: Իր երկի

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ. 31–38:

⁸ Նույն տեղում, էջ 29:

⁹ Նույն տեղում էջ 31:

¹⁰ Նույն տեղում, էջ 37:

հետագա էջերում՝ «իմաստասիրությունը որպես արվեստների արվեստ և գիտությունների գիտություն» («իմաստասիրություն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց»¹¹) արիստոտելյան բնորոշման մեկնությունում նա ամրագրում է իմաստասիրությունը բնորոշող մտքի բանաձև՝ «իմաստասիրութիւն զբնութիւն էիցն գիտէ»¹², որ և կարողունակ է ներկայանալ ու վերըմբռնվել որպես իմաստասիրության ևս մի լիարժեք սահմանում՝ ***իմաստասիրությունը ամենայն գոյի բնության գիտություն է:***

Ըստ դավթյան մեկնախոհության՝ ամենայն գիտություն և իմաստասիրությունը նույնպես ունեն իրենց ուսումնասիրության յուրատեսակ առարկան ու կատարումը, և իմաստասիրության առարկան ամենայն գոյն է, իսկ կատարումը՝ դրանց գիտությունը, այսինքն տեսականորեն գիտենալ ամենայն գոյը և գործնականորեն ամենայնի գիտությամբ նմանվել Աստծուն¹³: Իսկ ինչպե՞ս է հնարավոր ամենայնի գիտությամբ նմանվել Աստծուն: Սուրբգրային բանահայտմամբ ու սուրբ հայրերի մեկնախոհությամբ ամրագրված է, որ արարիչ ու նախախնամող Աստված մարդուն իմանալի է արարածների միջոցով Իր ճանաչման հնարավորությամբ: Եվ այդ կնշանակի, որ իմաստասիրությունն ամենայնում աստվածայինի իսկության գիտությունն է, իսկ արարյալ ու նախախնամյալ ամենայնի միջոցով ճանաչելով աստվածայինը՝ հնարավորություն է ընձեռնվում հենց աստվածայինով նմանվել Աստծուն:

Սահմանման այդ բանաձևերով իմաստասիրության առարկայի իսկության հասկացման համար հնարավոր են իրար սկզբունքորեն չհակասող, այլ միմյանց փոխլրացնող

¹¹ Նույն տեղում, էջ 55, 72:

¹² Նույն տեղում, էջ 73:

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 46:

երկու մեկնություններ: Այդ սահմանումներն առաջնահերթորեն կարելի է հասկանալ այդ բանաձևերում «գոյիցն» և «էիցն», այսինքն «գոյ» և «է» հասկացությունները համահավասարեցնող ու նույնորոշող մոտեցմամբ՝ ըստ առարկայի այդ սահմանումներում փոխմանությունն ու նույնաբնույթ հավասարությունն բացահայտող մեկնությամբ:

Մակայն, իմաստասիրության առարկան նշելու միջոցով իմաստասիրության բնությունը բացահայտող՝ փոխմանն ու նույնաբնույթ այս սահմանումներում կա նաև էական **տարբերություն**: Դավթյան մեկնախոհությունից աստվածային իմաստության ուսումնասիր դիտավորությամբ հնարավոր է դառնում նաև վերահասու լինել իմաստասիրության առարկայի **խորին իսկության**, որն ամեննին չի հակասում վերոնշյալ համահավասարեցնող ու նույնորոշող մեկնությամբ բացահայտելի իսկությանը, այլ միայն լրացնում, խորացնում ու առավել հիմնավորվածությամբ ու ամբողջականությամբ ճանաչեցնում իսկությունը: Իմաստության առարկայի իսկության առավել կատարյալ լրումով բացահայտումը հնարավորվում է իմաստասիրության՝ ըստ առարկայի վերոնշյալ սահմանումներում ոչ միայն նմանություն, այլև էական տարբերությունն ևս նկատող՝ հոգևոր ու մտավոր առավել խորին ճիգ պահանջող մեկնությամբ, որը և հավաստվում է դավթյան աշխատության հետագա էջերում նշվող՝ իմաստասիրության այլ սահմանումների միջոցով: «Իմաստասիրութիւն գիտութիւն էիցն է» և «մակացութիւն էական... իմաստասիրութիւն է» սահմանումներում «գոյիցն» հասկացության փոխարենն հայազգի սուրբ ու իմաստուն փիլիսոփան գրում է «էիցն», որում և արտահայտում **հոգնակիություն** ու **որոշյալ հոդ**: Մ. Դավիթ Անհաղթն այստեղ առաջնահերթորեն նկատի ունի ճշմարիտ գոյը՝ Աստծուն, ինչպես և իր այդ ու նաև այլ աշխատություններում երկուստեք լիովին նույն ու հստակ մեկնությամբ գրում է՝ **«իմաստութիւն է գիտութիւն ճշմարիտ**

գոյի, այսինքն Աստծո»¹⁴: Եվ սակայն վերոնշյալ երկու սահմանումներում նա արտահայտում է նաև հոգնակիություն, որով նկատի ունի, որ իմաստասիրությունը գիտությունն է ամենայնի՝ առաջնահերթորեն գերագույն գոյի՝ Աստծո, և ապա աստվածային արարչությամբ, նախախնամությամբ ու փրկագործությամբ գոյության նախակոչված՝ առաջնայինն ու գերագույնին ենթակարգ նաև այլ ամենայն գոյի՝ իրենց կոչման ու ըստ այդմ՝ բուն իսկությամբ լինելության մեջ՝ որպես «է» կամ «էակ» լիովին ճշմարիտ իմացյալ գիտություն: Այսպիսով, **իմաստասիրությունը ամենայն գոյի՝ իրեն բնահատուկ գոյությամբ ճանաչող գիտություն է**, ինչը և կնշանակի, որ **իմաստասիրությունը ամենայն գոյի որպես այդպիսին գոյության որակում ճանաչող գիտություն է:**

Ընդ որում, իմաստասիրության՝ ըստ առարկայի սահմանող մտքի այդ բանաձևերում շեշտվում է, որ իմաստասիրությունը **գոյի կամ է-ի՝ իր իսկ բնությանը համապատասխան գոյությամբ** ճանաչող գիտություն է, քանզի ամենայն գոյ՝ իր բնության առանձնահատկությամբ պայմանավորված՝ զանազան գոյության մոդուսով կամ կերպով է օժտված: Անշունչ գոյի գոյության կերպը (մոդուսը) տարբերվում է բուսական գոյի գոյության կերպից, իսկ բուսականի գոյության կերպը տարբերվում է կենդանականի գոյության կերպից, կենդանականի գոյության կերպը զանազանվում է բանական կենդանի հանդիսացող հրեշտակի ու մարդկանց գոյության կերպից, իսկ բանական անմահ կենդանի հանդիսացող հրեշտակի գոյության կերպն իր հերթին տարբերվում է բանական մահկանացու կենդանի հանդիսացող մարդու գոյության կերպից, և մարդու գոյության կերպն էլ տարբերվում է Աստծո գոյության կերպից: Այսպիսով, ամենայն գոյը՝ ըստ իր բնության՝ օժտված է փոխզանազանվող գոյության մոդուսով կամ կերպով: Ահավասիկ, իմաստասիրությունը ամենայն գոյը որպես

¹⁴ Նույն տեղում, էջ 80:

այդպիսին իր գոյությամբ ճանաչող գիտությունն է, կամ իմաստասիրությունը ամենայն գոյի՝ իր բնությանն աղեկվատ գոյությամբ բանահասու գիտությունն է. Իմաստասիրության՝ ըստ առարկայի վերոբերյալ սահմանումներում առարկայի այդկերպ բնորոշումների հիմքը հասկանալով կարելի է արդեն «գոյ» հասկացությունը ուղղակիորեն փոխարինել հենց «է» հասկացությամբ և ըստ այդմ՝ իմաստասիրությունը ամենայն է-ի՝ իրենց իսկ ներհատուկ եղությամբ մտահայեցող ու ճանաչող գիտությունն է:

Իսկ դավթյան «Սահմանք իմաստասիրութեան» աշխատության սկզբում մեջբերվող սահմանումներից տարբերվող վերոբերյալ սահմանման մեջ **է**-ն կամ **գոյ**-ը նշում է եզակի թվով, այն է՝ *իմաստությունը ճշմարիտ գոյի՝ Աստծո, գիտությունն է*⁵, քանզի նշելով նպատակային գերագույնը՝ Աստծուն, մնացյալ ամենայն գոյերը՝ գերագույն գոյին՝ Աստծուն, ենթակարգված արդեն իսկ նկատի է ունենում: Եվ հենց ըստ քրիստոնեական ուսմունքի ու գիտության՝ մարդկային կարողությանը Աստծո լիովին իմանալիությունն անհնար է: Ահավասիկ, մարդկային իմացունակության կարողությանն Իր անիմանալությամբ հանդերձ՝ Աստված իմանալի է Իր գործերով՝ արարչությամբ, նախախնամությամբ ու փրկագործությամբ իսկ մարդուն ներկայակցությամբ. Եվ Աստված իմանալի է հենց արարածների միջոցով՝ արարյալում, նախախնամյալում ու փրկագործյալում բուն աստվածայինի ճանաչողությամբ՝ ըստ մարդկային կարողության:

Հիրավի, Աստված Իր եռակազմ գործերով՝ արարչության, նախախնամության ու փրկագործության իրողությունների միջոցով է Իրեն հայտնում մարդկային սեռին: Եվ Աստված Իր **սիրո** անբավ ու կատարյալ լիությամբ, Իր իմաստության խորին ու մեծին **խորհուրդով** և բարերար **կամքով** արարյալ աստ-

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

վածային եռակազմ գործերով է Իր գոյությանը, սիրուն, աստվածային խորին խորհուրդին ու կամքին հաղորդ ու ընկալ լինել ընձեռում ու իմանալիություն հնարավորում մարդուն: Արդ, ըստ դավթյան մեկնախոհության, **իմաստասիրությունը Աստծո ու ամենայն այլ գոյի խորհրդիմաց գիտություն է:** Եվ ամենայն գոյը մարդկային բանական հոգու ու մտքի իմացունակությանը ներկայանում ու իմանալի է դառնում Աստծով նախասահմանյալ իրենց **բնության** ու ըստ այդմ՝ յուրատեսակ **գոյությամբ:** Իսկ իմաստասիրության նկատմամբ ասվում է՝ **«խորհրդիմաց գիտություն»** է, քանզի իմաստասիրության բուն նպատակն ու կատարումն է՝ վերահասու դառնալ իմաստության խորհուրդների իմացությանն ու կենսագործմանը: Արդարև, իմաստասիրությունը որոնելով իմաստություն, որպես իր կատարում՝ վերահասու է լինում ու հենց ձեռքբերում իմաստության խորհուրդների տեսական իմացություն ու գործնական կենսագործում և հենց այդկերպ կայանում որպես տեսա-գործնական գիտություն: Իսկ եթե իմաստասիրությունը հասու չէ, այլ միայն որոնում է իմաստություն, ապա այն ոչ այլ ինչ է, քան միմիայն **նախագիտություն**, այլ ոչ ամենայնի գոյության բուն իսկությանն ու խորհրդիմացությանը բանահասու և ուրեմն՝ իմաստնացյալ գիտություն, նույնն է թե՝ իմաստության ներկայությունն իրենում բովանդակող գիտություն:

Ընդ որում, իմաստասիրությունը կարող է ձեռք բերել ու իրենում բովանդակել իմաստություն՝ ամենայն գոյի կամ իրաց՝ ըստ Աստծո իմացությանը նպատակամետ վերընթացության և ոչ ըստ մարդկային կարծամտության թյուրիմացության: Այսու և ամենայն գոյը՝ ըստ Աստծո իրենց ճշմարիտ գոյությամբ ու իմացության սահմանման մեջ անվանվում է «Էիցն», հոգնակիորեն նշմամբ նկատի ունենալով ամենայնը և որոշյալ հոդով նշմամբ նկատի ունենալով գոյերի կամ իրաց ոչ թե քանակական մասնավոր լինելության իմացությունը, այլ

ընդհանրական որակի՝ ըստ Աստծո ճշմարիտ իմացությունը և ոչ ըստ մարդկային կարծամտության հնարածո ինքնախաբեկանքը: Եվ ըստ առաքելական խոսքի՝ վերինը, բարձրինն ու բուն աստվածայինը խորհող դավթյան մեկնախոհության՝ **իմաստասիրությունը գիտությունն է ամենայն է-ի՝ է-երի կամ էակաց:** Իմաստասիրության վերոնշյալ սահմանումների դավթյան մեկնախոհությունը հնարավորություն է ընձեռնվում, որպես իմպլիկացիա, հետևողականորեն բխեցնել իմաստասիրությունը սահմանող մտքի այլ բանաձևեր ևս.

Իմաստասիրությունը ամենայն է-ի իսկության խորհրդիմաց գիտություն է:

Նույնն է թե՛

Իմաստասիրությունը գերագույն է-ի և ամենայն է-երի կամ էակաց իսկության խորհրդիմաց գիտություն է:

Կամ՝

Իմաստասիրությունը ամենայնում՝ Աստծո և աստվածայինի իսկության խորհրդիմաց գիտություն է:

Բ) Ս. Դավիթ Անհաղթը պիտոնյան երկրորդ փաստարկը հերքող իր պատասխանում իմաստության ուսումնասեր ընթերցողին կանխահայտում է իմաստասիրության ուսումնասիրության առարկան փոքր-ինչ մանրամասնորեն բացորոշող մեկնախոհությամբ: Ըստ դավթյան մեկնախոհության՝ իմաստասիրության ուսումնասիրության առարկան **ոչ թե մասնավոր գոյն է՝** քանակավոր կամ եզակի իրերն իրենց բնության ու գոյության փոփոխուն՝ ժամանակային հարահոսությամբ անկայուն ու մշտափոփոխ որակային հատկություններով, այլ **ընդհանուր գոյը որպես այդպիսին**, այսինքն ընդհանուր գոյի՝ իր բնությանը համապատասխան գոյության մոդուսով կայուն որակի անփոփոխ բնահատկություններով, այսինքն տվյալ իրի կամ գոյի բոլոր էական հատկություններով, որոնցով և կայանում է իրի հենց այդպիսին, այլ ոչ եզակի ու մասնավոր՝ մշտապես այլափոփոխ բնության որակով ու

գոյության հարափոփոխ կերպավորությամբ լինելը: Մակայն, արդյո՞ք այդ նշանակում է, թե իմաստասիրության ուսումնասիրության առարկան սահմանափակվում է, և եթե աշխարհում կան փոփոխուն իրեր, ապա երբևէ ենթակա չեն իմաստասիրության ուսումնասիրության: Ո՛չ, իմաստասիրությունը կարող է ուսումնասիրել նաև փոփոխուն իրը՝ նրա այդ հարափոփոխությունը կայացնող էական հատկությունները. Իսկ արդյո՞ք իմաստասիրությունը չի կարող ուսումնասիրել մասնավոր իրը: Անշուշտ, իմաստասիրությունը կարող է նույն այդ մասնավոր իրը ևս ուսումնասիրել, և, սակայն, այդ իրի որպես այդպիսին լինելը տիպականացնող ընդհանուր ամենայն էական հատկություններով, որոնցով կայանալի ու բնորոշելի է այդ իրն իր հնարավոր տիպականությամբ և ուրեմն ընդհանրականությամբ:

Գ) Ս. Դավիթ Անհաղթը՝ ուսյալ քրիստոնական գիտությամբ ու նաև հին հույների իմաստասիրությամբ, պիեռոնյան երրորդ փաստարկին ընդդիմաբանող պատասխանում իմաստասիրությունը ներքուստ բաժանում է տեսականի ու գործնականի¹⁶: Այդ պատասխանում նա իր աշխատությունից բուն իմաստության ուսումնասեր ամենայն ընթերցողին կանխահայտում է իմաստասիրության տեսականի ու գործնականի երկբաժանվող ու երկմիասնացող էական այն հատկությունը, որ իմաստասիրությունը ոչ միայն միտք է՝ ճշմարտությունը լոկ ճանաչող միտք և միմիայն տեսական իմացություն, այլև իմաստասիրությունը գործնական կենսակերպ է՝ բարին իմացյալ ու ոչ սոսկ տեղեկացյալ և ուրեմն ***բարուն վերահասու մտքի արդեն նաև գործնական կենսագործում***: Քանզի այն հարցին, թե ով է իմաստասերը, ըստ պլատոնյան մտքի դավթյան մեջբերման, իմաստասերը ոչ բազմագետն է և ոչ էլ բազում ինչ խոսելու բերանաբացության մոլացող անձը՝ նկատի ունենալով իմաստականերին (սոփեստներին), այլ ով

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ. 34–35:

բանահասու լինելով բարու խորհրդիմացության՝ գործնականորեն իսկ կենսագործում է մարդկային սուրբ ու անախտ կյանքի փափագ ու ընտրություն, գիտեցում ու կատարում¹⁷:

Մ. Դավիթ Անհաղթն իր աշխատության հետագա էջերում նաև ներկայացնում է իմաստասիրության տեսագործական մասերի երկբաժանության ու երկմիասնության իր կանխահայտման խորին ու լիաբովանդակ հիմնավորումը, այն է՝ Աստծո **տեսական**՝ ամենայն գոյը ճանաչող և **գործնական**՝ ամենայն գոյի արարիչ երկտեսակ գորություններն իրենում կերպարանող մարդու համանման գորություններով պայմանավորված՝ և՛ ամենայնը ճանաչող տեսական, և՛ մարդկանց հոգիների խնամքով անգիտությունից ճշմարիտ գիտության հասունացնող գործնական զուգանման այդ գորություններով իմաստասիրությունը տեսականի ու գործնականի ներբաժանվող երկմիությունն իմացահայտելով¹⁸: Ե՛վ Աստծո, և՛ աստվածապատկեր ու աստվածանման արարյալ մարդու բուն էությանն է ներհատուկ տեսական ու գործնական գորությունները¹⁹, որոնցով և պայմանավորված՝ իմաստասիրության տեսագործնական բաժանումն ու երկմիությունը:

Դ) Հստ իմաստասիրության դավթյան մեկնահայեցակարգի՝ ուսյալ քրիստոնեական գիտությունից ու նաև ընտրողաբար համակարգմամբ՝ պլատոնյան ու արիստոտելյան հայեցակարգերից, իմաստասիրություն-միամբողջությունն իր տեսական և գործնական բաղադրիչների համագորակից միությամբ կենսագործելով մարդկային տեսա-գործնական գորությունները ներկրթող ու վերաճեցնող ներգործություն՝ մարդուն ներկատարելագործում ու վերահասունացնում է **աստվածանմանության տեսագործնական կատարելության**:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 35:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 85:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 84 և 84-85:

Ե) Քրիստոնեական գիտությամբ և հին հույների իմաստասիրությամբ ուսյալ դավթյան մեկնախոհությամբ՝ տեսական *«իմաստասիրությունն (ամենայն) գոյիցն է գիտությունն»*²⁰: Արդ՝ իմաստասիրությունը ուսումնասիրելով գոյը՝ այդ ի՞նչն է բացահայտում ու գիտենում, որի դեպքում միայն կարելի է լիաստույգ ասել, թե այն գիտի ու հենց գիտությունն է ամենայն գոյի: Իմաստասիրությունն ուսումնասիրում ու բացահայտում, գիտենում ու հենց գիտությունն է ամենայն գոյի բուն *իսկության*, այլ ոչ նրա այլափոխված կեղծության իբրև թե իսկության, թեև եթե իմաստասիրությունն արդեն գիտի գոյի իսկությունը, ապա գիտի նաև տվյալ գոյի անիսկությունը որպես իսկափոխվածություն ու խեղակերպվածություն, այլ ոչ իբրև թե իսկություն, այսինքն գիտի անիսկական գոյությունը որպես հենց այդպիսին, այլ ոչ իբրև թե իսկական գոյություն:

Նույնը կարելի է ասել նաև այլ կերպ՝ քանզի իմաստասիրությունն ամենայնի ճշմարիտ գոյության գիտություն է, կամ առավել հակիրճ՝ քանզի *իմաստասիրությունը ճշմարտության գիտություն է*²¹, մտահասու ու արդեն գիտեցող դառնալով ճշմարտության, անշուշտ, գիտի նաև անճշմարտությունը որպես հենց այդպիսին, այլ ոչ թե սնապարծում է գիտենալ ճշմարտությունը և, սակայն, գիտի անճշմարտությունը՝ կեղծն ու սուտը, իբրև թե ճշմարտություն: Նույնորեն և՛ *իմաստասիրությունը բարու տեսագործնական գիտություն է* մտքի բանաձևում է, քանզի դավթյան մեկնախոհությամբ՝ ամենայն ճշմարտություն բարի է, թեև ոչ ամենայն բարին ճշմարտություն է²¹, ահավասիկ, իր ուսումնասիրության արդյունքում իմաստասիրությունն արդեն մտահասու դառնալով ու գիտենալով բարին, անշուշտ, դրանով իսկ գիտի նաև թե ո՞րն է այն, որ բարի չէ և ուրեմն գիտի նաև անբարին որպես հենց այդպիսին, այլ ոչ թե գիտի անբարին՝ կեղծը, սուտն ու

²⁰ Նույն տեղում, էջ. 31, 37:

²¹ Տե՛ս նույն տեղը, էջ. 85, 86:

չարը, իբրև թե բարին: Եվ ուրեմն իմաստասիրությունը բարու ու անբարու ստույգ գիտությամբ՝ չի այլափոխվում ու դառնում անիմաստասիրություն կամ իմաստության ատելություն՝ բարին անվանելով չար և չարն անվանելով բարի, այդկերպ, ըստ քրիստոնեական գիտության, իրագործելով աններելի մեղքը՝ հոգու հայհոյությունը, որի համատարած առաջին դեպքում եղել է ջրհեղեղ՝ հին աշխարհի ու բարու մտածման անգամ անընդունակ դարձած հսկաների կործանում, ըստ սուրբգրային այն խոսքի, թե՝ «ետես Աստուած եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, եւ ամենայն ոք խորհէր ի սրտի իւրում խնամով ի չարիս զամենայն աւուրս» (Մտունք, Զ, 5) և միայն Նոյի ու իր կնոջ, երեք որդիների ու իրենց կանանց վերապրում, և վերջում՝ հոգու հայհոյության՝ Նեռով համատարած պարտադրյալ արդեն երկրորդ դեպքում՝ նույններ Տեր Հիսուսի Քրիստոսի երկրորդ գալստյամբ՝ կլինի հրով այս աշխարհի կործանում և աշխարհի վերափոխություն ու նորահաստատում:

Իմաստասիրության գիտենալն ամենայն գոյի բուն *խկությունը*, կնշանակի՝ գիտենալ ամենայն գոյի *որպիսությունը*, այսինքն՝ ամենայն գոյի ի՞նչ և ինչպե՞ս գոյությունը: Արդ՝ իմաստասիրության դավթյան մեկնախոհությունից, թե՝ տեսական *«իմաստասիրութիւնն (ամենայն) գոյիցն է գիտութիւն»*²², որպես իմպլիկացիա հետևեցնելով կարելի է ամրագրել իմաստասիրությունը սահմանող մեկ այլ մտքի բանաձև, այն է՝ *տեսական իմաստասիրությունն ամենայն գոյի իսկությունը բացահայտող գիտություն է*: Եվ իմաստասիրության դավթյան մտքի բանաձևում ճշգրտմամբ ավելացվում է *«ամենայն գոյի»*, քանզի հենց ինքը՝ ս. Դավիթ Անհաղթն է գրում՝ «իմաստասիրութիւնն յաղագս ամենայն գոյիցն լինի...»²³:

²² Նույն տեղում, էջ 31, 37:

²³ Նույն տեղում, էջ 102:

Զ) Իսկ իմաստասիրության որպես ամենայն գոյի իսկության գիտություն լինելը ապահովում է արդյոք իմաստության ձեռքբերում, այսինքն իմաստասիրությունը ներկայանալով որպես «ամենայն գոյի» կամ ավելի հակիրճ՝ «ամենայնի» իսկության գիտություն, արդյոք ապահովում է իր բուն կոչումի իրագործումը՝ իմաստության ձեռքբերումը, թե մնում է որպես իմաստության սոսկ որոնում, որը նույնիսկ ամենայն գոյի իսկության գիտությամբ՝ երբեք չի հասնում իմաստության և մարդուն իմաստնացման՝ ըստ աստվածային խոստման ու կատարումի: Այս հարցի պատասխանը երկտեսակ է: *Առաջին*, եթե իմաստասիրությունը ամենայն գոյի իսկության ոչ թե փոփոխում ու անստույգ գիտանմանություն է, այլ ամենայն գոյի իսկության գիտություն, նույնն է թե՛ ամենայն գոյի ի՞նչ և ինչպե՞ս գոյության ստույգ ու անսխալ գիտություն, ապա ոչ այլ ինչ է, եթե ոչ միմիայն իմաստություն, քանզի իմաստությունը միայն գիտի ամենայնը ճշմարտությամբ: *Երկրորդ*, եթե իմաստասիրությունը երբեք չի կայանում որպես իմաստության ձեռքբերում, ապա վերստին տարակույսի է ենթարկվում ու ժխտվում իմաստասիրության գոյությունը, այնինչ, աներկբա է աստվածային խոստումն ու կատարումը և ուրեմն՝ *իմաստասիրության գոյությունը որպես ամենայնի իսկության մտախոհություն ու բացահայտում, որով և իմաստության խորհրդիմացության ձեռքբերում:*

Է) Արդ՝ իմաստասիրության դավթյան մեկնախոհությունից, ըստ որի՝ *իմաստասիրությունն ամենայն գոյի (իսկության) գիտություն է*, կարելի է որպես իմպլիկացիա բխեցնել իմաստասիրության իսկությունը նորովի ու առավել բացորոշությամբ սահմանող վերականարկյալ մտքերի բանաձևեր.

Իմաստասիրությունն ամենայն գոյի՝ իր բուն կոչմանը համապատասխան գոյության (իսկության) գիտություն է:

Կամ՝

Իմաստասիրությունը ամենայն գոյի իսկությունը հայտող (իմաստության) խորհրդիմացություն է:

Կամ ավելի հակիրճ՝

Իմաստասիրությունը ամենայնի գոյության խորհրդիմացություն է:

Ը) Պիհոռնյան երրորդ փաստարկի հերքման ու իմաստասիրության մասերի գոյության հիմնավորմամբ արդեն նաև իմաստասիրություն-ամբողջության գոյության հավաստման դավթյան մեկնախոհության ընթացքում բացահայտվում է իմաստասիրության բովանդակ իսկությունը բաղկացնող էական ևս մի հատկություն: Ո՞րն է այն: ***Իմաստասիրության բովանդակությունն այնպիսին է, որ միտքն աճեցնում ու ներկատարելագործում է իր բուն կոչմանը համապատասխան իսկությամբ լինելության:*** Ինչպե՞ս հասկանալ ասցալը:

Մտքի կոչումը ***ամենայն գոյի գոյությունը խորհել ու իսկությունը բացահայտելն է,*** և ամենայն գոյ ասելով՝ նկատի է առնվում տեսանելի ու անտեսանելի, կամ՝ զգայելի ու իմանալի գոյը: Ահավասիկ, իմաստասիրության բովանդակությունը կատարելագործում է միտքը, նախ և առաջ, մտածել այն (իրը), ինչը տեսանելի է, և ապա վերստին իմաստասիրության բովանդակությամբ արդեն կարողունակ դառնալ մտածելու այն, ինչը կարելի է տեսնել կամ չտեսնել՝ իրերի կամ առանց իրերի ձևն ու քանակը, կամ կերպն ու չափը որպես այդպիսին, որով և նույնպես զորացյալ՝ այնուհետ արդեն կարողունակ ու պատրաստ լինել՝ մտածելու այն, ինչը սկզբունքորեն անտեսանելի է՝ Աստծուն ու աստվածայինը: Իմաստասիրության բովանդակությունը կայանում է իր ուսումնասիրության առարկայի տեսականուն համապատասխան բաղադրակազմությամբ, որով և զորունակ ու հենց կրթունակ է միտքը ներկատարելագործելու՝ սկզբունքորեն տեսանելին մտածելուց՝ վերնթանալ մինչև իսկ սկզբունքորեն

անտեսանելին մտածելուն: Ընդ որում, վերոքննարկյալ պիտոնյան երրորդ փաստարկի դավթյան պատասխանում, ասվում է, որ իմաստասիրության կազմությունում բնագիտության միջոցով մտածվում է տեսանելին, իսկ մաթեմատիկայում մտածել այն, ինչը կարելի է տեսնել կամ չտեսնել և այնուհետ՝ աստվածաբանությամբ կարողունակ դառնալ մտածել արդեն նաև սկզբունքորեն անտեսանելին: Սակայն, ս. Դավիթ Անհաղթի մեկնախոհությամբ վերընթանալով՝ կարելի է հայտնաբերել այլ գիտություն ևս, օրինակ պատմությունը, որը նույնպես իր բովանդակությամբ կարող է միտքը գործունակ դարձնել մտածելու այն, ինչը կարելի է **իբրև թե տեսնել**, այսինքն մտածել թեկուզ և անցյալի իրողությանն ականատեսին տեսանելին և, այնուամենայնիվ, ընթերցող կամ ունկնդիր անձի մտքին արդեն անտեսանելին, այդկերպ ևս մտոք կատարելագործվելով ու գործունակ դառալով արդեն նաև մտածելու ու վերահասու լինելու սկզբունքորեն անտեսանելի իրաց՝ Աստծուն ու աստվածայինին և ուրեմն աստվածաբանության: Անշուշտ, այս դեպքում, հարկ է նաև վերաճշմարտել, որ պատմությունը քննելով մարդկային կյանքի «իրաց և գործոց» եղելություն՝ կոչում ու ըստ այդմ՝ դիտավորություն, կերպարանում ու կատարում ունի բացահայտելու իմաստություն: Այսու և՛ **պատմությունը մտաքննելով աստվածային գործերի ու մարդկային կյանքի եղելություն՝ մտածում ու իմաստասիրում է բուն իմաստություն:** Եվ եթե անգամ որևիցե պատմիչ կամ պատմաբան չի կարողացել ու իրեն չի հաջողվել իր պատմությամբ պատմել իմաստություն, այլ գուցե միայն փաստագրություն, այնուամենայնիվ, պատմությունն ընթերցողը պետք է նպատակաուղղված լինի պատմությամբ հասու լինել **իմաստության:** Քանզի ըստ սուրբգրային բանահայտման՝ մարդեղացյալ Բանն Աստծո՝ Աստծո Խոսքն ու Իմաստությունը, իմա՝ Հոր Իմաստությունը Ինքը՝ Հիսուս

Քրիստոսն է²⁴, իսկ ըստ ավետարանական տերունական խոսքի՝ Հիսուս Քրիստոս ճշմարտությունն է, ինչպես նաև միակ ուսուցիչը ամենայն ճշմարտության ու բարյաց և, այդպիսով, բուն իմաստության: Եվ ըստ քրիստոնեական ուսմունքի՝ ամենայն գիտություն ոչ այլ ինչ է, եթե ոչ միմիայն ճշմարտության և բարյաց գիտություն, և ուրեմն ամենայն տեսա-գործնական գիտություն հարկ է կայանա ու կատարելագործվի որպես իմաստություն գիտություն՝ գիտեցում ճշմարտության և բարու: Ըստ քրիստոնյա սուրբ հայրերի և կոնկրետորեն՝ հենց հայոց պատմահայր ս. Մովսես Խորենացու պատմիմաստության հայեցակարգի՝ ***պատմությունը իմաստություն գիտություն է***²⁵՝ աստվածային ու մարդկային իրերի «ինչ» և «ինչպես» լինելության աստվածային իմաստության գիտություն՝ ըստ մարդկային կարողության և աստվածային շնորհի գորակցության:

Ըստ այդմ՝

ա) ***պատմության բուն կոչումն ու մերձավոր կատարումն է՝ պատմել մարդու ինքնությանն ու կյանքին առաքինորեն ներկրթունակ եղելությունների իսկություն հայտնող իմաստություն:***

բ) ***պատմության բուն կոչումն ու հեռավոր կատարումն է՝ ուսումնասիրել և պատմել մարդուն՝ առ Աստված հավետ միության առինքնող նշանակալիություն ներհայտող աստվածային գործերի ու մարդկային կյանքի եղելության իսկությունն բանահայտող իմաստություն:***

Հիրավի, պատմությունը կյանքի է կոչվել՝ պատմելու աստվածային գործերի ու մարդկային կյանքի եղելությունում

²⁴ Սուրբ հայրերի քրիստոնեական վարդապետությունում Ասածո Որդու՝ Հիսուս Քրիստոսի, որ և «Բանն Աստուծոյ», անվանումը որպես «Իմաստութիւն Հոր», որում և՛ «Բանի» որպես «Իմաստութիւն» մեկնորոշումը տե՛ս նաև Ներսէս Շնորհալու հանրահայտ աղոթքում՝ «Աղոթք իւրաքանչիւր անձին հաւատացելոց ի Քրիստոս» («Հաւատով խոստովանիմ...»):

²⁵ Տե՛ս *Քոչարյան Ռ.* Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, Եր., «Փրինթինֆո» հրատ., 2016, էջ. 595–596:

ներբովանդակյալ ու կերպացյալ իմաստություն՝ ընթերցող ժամանակակիցների ու սերունդների փափագն ու սրտի խորհուրդը, միտքը, կամքն ու գործը, միով բանիվ՝ մարդկային ինքնությունն ու կյանքը՝ ազատակամորեն անձնացյալ կենսակերպը, ընդհանուր կենսակարգն ու համակեցությունը ներկրթելով ու ներկատարելագործելով տեսա-գործնականորեն իմաստնացյալ ու առաքինացյալ՝ Աստծուն հավետ ի մի համագոյության:

Իսկ իմաստասիրությունն ամենայնում՝ աստվածայինն ու բուն իսկությունը հայտող իմաստության խորհրդիմացությունն ու գիտությունն է: Եվ իմաստասիրության բուն կոչումն ու ըստ այդմ՝ իսկությունն է՝ թե աստվածային անփոփոխ ու հավիտենական և թե մարդկային ժամանակընթաց ու փոփոխական ամենայն «իրաց և գործոց» գոյությունում բանահասու լինել մարդկային ինքնությանն ու կյանքին հոգեսնույց ու կենդանաբար, որով և՛ հոգեկեցույց ու կենաբար աստվածային խորիմաստության: Արդ՝ ***իմաստասիրությունն ուսումնասիրելով ամենայնում՝ աստվածայինն ու բուն իսկությունը, կնշանակի՝ աստվածային գործերն ու մարդկային ժամանակընթաց կյանքում ևս՝ աստվածայինը, անշուշտ, անցյալի, ներկայի ու ապագայի «իրաց և գործոց» մտաքննությամբ ու խորհրդածությամբ՝ իրենում ներառում է պատմությունից անցյալի եղելությունների իսկություն հայտող իմաստության խորհրդիմացությունն ևս:*** Ահավասիկ, նախ՝ բնագիտությամբ մտահասու լինելով տեսանելի ու զգայելի իրաց իսկության, և ապա մաթեմատիկայում՝ մտահասու լինելով արդեն իրերի տեսանելի ու անտեսանելի չափի ու կերպի, նմանաբար և պատմությունում՝ մտահասու լինելով անտեսանելի և կամ իբրև թե տեսանելի իրաց իսկության, և այնուհետ՝ աստվածաբանությունում՝ մտահասու դառնալով լիովին անտեսանելի իրաց իսկության, ըստ դավթյան մեկնախոհության ու նաև որպես իմպլիկացիա բխող մտահանգման, ***իմաստասեր***

միտքն ու բուն իմաստասիրությունը ներկրթում ու իր կատարումի լրումին է հասունացնում մտքի գործության աճը՝ մտաքննել ու վերահասու լինել ամենայն տեսանելի ու անտեսանելի իրաց իսկություն:

Իսկ ամենայն իսկություն լեզվականացնում և լեզվական դարձվածքներում իմաստավորում ու ստույգ բառային կամ բառակապակցվող իմաստով բանահայտում է իմաստությունը: Արդ՝ ի մի բերելով վերոքննարկյալ՝ դավթյան մեկնախոհությամբ բանահայտվող իմաստասիրության կոչումը՝ ներկրթել ու գորացնել միտքն իր բուն կոչումի կատարումին՝ քննել ու բացորոշել ամենայնի գոյության իսկությունը, հետևողականորեն բխեցմամբ հնարավորություն է ընձեռնվում հասկանալ ու ամրագրել իմաստասիրությունը բնորոշող այլ մտքի բանաձև ևս՝ **իմաստասիրությունը ամենայնի (ամենայն գոյի) իսկություն հայտող իմաստության խորհրդիմաց գիտություն է:**

Թ) Մ. Դավիթ Անհաղթը ոչ միայն հերքում է պիհոռնյան փաստարկներն իրենց նախադրյալներում կամ մտահանգումներում, այլև իմաստասիրությունը մերժող իրենց նպատակի համար գործածվող միջոցում: Ո՞րն է այդ միջոցը: Իմաստասիրության գոյության բացարկման նպատակի համար այդ փաստարկներում գործածվող միջոցը **ապացույցն է:** Քանզի ըստ ս. Դավիթ Անհաղթի մեկնախոհության՝ որևէ բան ու հենց ճշմարտություն ապացուցել, կնշանակի՝ իմաստասիրել: Մ. Դավիթ Անհաղթի՝ Արիստոտելի «Յորդորական»-ից մեջբերմամբ, որում և նա հորդորում է համբակներին իմաստասիրության, «թեպետ եւ ասէ ոք ոչ գոլ զիմաստասիրութիւն, ապացուցի պէտս ունի, յայտ է՝ թէ իմաստասիրէ. քանզի մայր ապացուցի իմաստասիրութիւն է»²⁶: Արդ՝ Արիստոտելից ուսյալ դավթյան մեկնախոհությամբ՝ Պիհոռնն ու իրեն համա-

²⁶ Դավիթ Անյաղթ. Սահմանք իմաստասիրութեան – Երկասիրութիւնք փիլիսոփայականք, աշխ. Ս. Արևշատյանի, Եր., 1980, էջ 38:

խոհները ապացույցի, կնշանակի՝ հենց իմաստասիրելու միջոցով ժխտում են իմաստասիրություն գոյությունը²⁷: Նույնպես և նա, ով իմաստասիրության գոյությունն է հաստատում ու հավաստում, ըստ դավթյան մեկնության, կարիք ունի ապացույցի, և ուրեմն երկուստեք՝ և՛ ժխտողը, և՛ հավաստողը կարիք ունեն ապացուցման և ուրեմն՝ իմաստասիրման²⁸: Իսկ իմաստասիրելը հենց իմաստասիրություն է: Այսպիսով, պիհոռնականները ժխտում են իմաստասիրության գոյությունը, ինչի գոյությունը և հաստատում են ապացուցելով, այսինքն իմաստասիրելով:

Վերոասացյալն առավել խորությամբ ու որոշակի հասկանալու համար հարկ է հարցադրել, թե՝ ի՞նչ ասել է՝ ապացույց, և ինչո՞ւ համար է ասվում, թե՝ իմաստասիրելը հենց իմաստասիրություն է:

Ապացույցը ստույգ միտք է՝ իր ստույգ մտաբովանդակությանը ու մտաձևով, և մտակապակցում է՝ մտքերի միմյանց հետ կապակցումով ստույգ հետևողականորեն բխող մտահանգում՝ ճշմարտությունը հայտնող ու հավաստող: Կարելի է ասել նաև այլ կերպ. ապացույցը դատողությունների կապակցված ու հետևողականորեն բխող մտահանգում է՝ իր ստույգ մտաբովանդակության, մտաձևի ու մտակապակցման բխեցման միջոցով ճշմարտությունը հայտնող ու հավաստող:

Ապացույցը կարող է լինել իր կազմության և՛ երկուստեք ամբողջականությամբ՝ մտաբովանդակությամբ ու մտակապակցման ձևով՝ ներկայանալով որպես իմաստասիրություն, և՛ սոսկ մտակապակցման ձևով՝ ներկայանալով որպես տրամաբանություն:

Արդ՝ *ապացույցը որպես միտք ու մտակապակցություն՝ իր(ենց) մտաբովանդակության ու մտաձևի երկուստեք ստույգությամբ ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ իմաստասիրություն:*

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 37:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 38:

Իսկ **ապացույցը որպես միմիայն ստույգ մտածն կամ մտա-կապակցում՝ ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ տրամաբանություն:**

Իսկ այն հարցի առնչությամբ, թե ինչո՞ւ իմաստասիրելը հենց իմաստասիրություն է, հարկ է հասկանալ ու ամրագրել, որ, հիրավի, իմաստությունը և՛ մտքի ստույգ բովանդակություն է, և՛ մտածելաձև, այսինքն մտաբովանդակություն ու մտածելակերպ, որոնց երկմիությամբ և՛ ճշմարտություն հայտող միտք: Ըստ այդմ՝ իմաստասիրությունը որպես իմաստության ձեռքբերում, ինչպես և ինքը՝ իմաստությունը, նույնորեն և՛ ճշմարտություն հայտող ստույգ մտաբովանդակություն ու մտածելակերպ է: Այսու և՛ ս. Դավիթ Անհաղթի նկատառյալ ապացույցը որպես միտք, նույնն է թե՛ ճշմարտություն հայտնող **մտաբովանդակություն**՝ ստույգ համապատասխան մտա**ձևով**, և այնուհետ՝ որպես մտակապակցություն՝ իրենում հետևողականորեն հաջորդական մտքերի կապակցումի ստուգությամբ՝ իմաստասիրություն է:

